

ԳԼՈՒԽ II. ԴԱՐԲԻՆԸ ՀԱՍՏԱՏԵՔ ԾԻՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

1. Դաբբնի արարչագործական գործառույթը «ուրբաթարումների» պատրաստման ծեսում

Սույն բաժինը նվիրված է դարրնության հետ կապված մի հետաքրքիր ծիսական սովորույթի, որը XIX դարի սկզբին լայն տարածում է ունեցել Հայաստանի տարբեր շրջաններում: Այն մեզ է ժառանգել հայ ազգագործական երախուավոր Երվանդ Լալայանը:¹ Սովորույթն ուշադրության է արժանացել նաև Ստ. Լիսիցյանի² և Գ.Չուլսինի³ կողմից: Հետաքրքիր է, որ դրա մասին հիշողությունները պահպանվել են մինչև մեր օրերը և վերջին տարիների գիտարշավների ընթացքում գրանցվեց մի քանի տարբերակ: Ծիսական սովորույթը կապված էր Զատկի տոնակատարության հետ, երբ Ավագ ուրբաթ օրը գյուղի կանայք դարբնին պատվիրում էին «ուրբաթարութ» կոչվող պողպատե մատանիներ, ապարանջաններ կամ «դող» վզնոցներ հարսների կամ «չար կոխած» կանաց համար:⁴ Երկաթե ապարանջանը կամ մատանին կրել են, որպեսզի «չար աչքը չկպչի» և չար ուժերն անվտանգ դառնան: ⁵ Վարանդայում դա մեկնաբանվել է հետևյալ կերպ.

¹ Ե.Լալայան, Վայոց ծոր, ԱՅ, գ. 15, էջ 144: Առաջին, Զանգեզուր, էջ 110: Առաջին, Երկեր, հ. 1, էջ 286: Առաջին, Երկեր, հ. 2, էջ 200, 449::

² Ստ.Լիսիցյան, նշվ. աշխ., էջ 166: Շտ.Լուսաւան, սկզբ. սու, էջ 164:

³ Ղ.Փ.Կյուրցին, Амулеты и талисманы кавказских народов.- Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 46, Тифлис, 1913, с. 219. Его же. Кульп желеza у кавказских народов.- известия Кавказского историко-археологического института, т. V, Тифлис, 1927, с. 83."

⁴ Ե.Լալայան, Երկեր, հ. 2, էջ 449: Ստ.Լիսիցյան, նշվ. աշխ., էջ 166: Շտ.Լուսաւան, սկզբ. սու, էջ 234: Ա.Թաղլույան, ԴԱՆ, տ. 1, էջ 71, տ. 2, էջ 31, 48, տ. 3, էջ 53: Ստ.Լիսիցյանը նշում է, որ «ուրբաթարութ» պողպատե մատանին, որպես չարխական հրահան Արցախում կարում էին նաև Երեխսայի ուսից:

⁵ Ե.Լալայան, հ. 2, էջ 200:

որտեսզի մութ տեղերում սատանաները փորձանք չբերեն (այստեղ ապարանջանները դարբինը պատրաստել է հինգշաբթի Երեկոյան): Գանձակում «ուրբաթարութ» կոչվող ապարանջաններ և մատանիներ դարբինը պատրաստել է ուրբաթ առավոտյան: Այստեղ մատանի, ապարանջան կրելու սովորույթը բացատրվել է այսպես «որպեսզի կայծակը չիրի և չարիթից ազատ լինեն»:⁶

Նման սովորույթը, կապված մատանու չարիափանության, ծննդի հաջողության և հիվանդություններ կանխելու հետ, տարածված է Եղել նաև այլ ժողովուրդների միջավայրում: Կախեթի Վրացիների մեջ այն կանայք, որոնց Երեխանները ծնվել են մահացած կամ մահացել են ծնունդից հետո, Ավագ հինգշաբթի օրը կրել են դարբնի պատրաստած պողպատե կամ Երկաթե մատանիներ:⁷ Նույն նպատակով Դաղստանի ավարների կանայք կրում են Երկաթե ապարանջան: Արիագները Ավագ հինգշաբթի պատրաստված մատանին կրել են, որպեսզի իյուսափեն մի շարք հիվանդություններից: Դաղստանի կյուրիանները, Մայկոպի ոուսները ատամնացավը կանինելու նպատակով պողպատե մատանի կրելու սովորույթ են ունեցել:⁸ Չար ուժերից պաշտպանվելու նպատակով Երկաթե պահպանակ (թալիսման) կրելու սովորույթ է Եղել նաև հարավ-արևելյան Ասիայում:⁹ Իսկ Ամիջն Ասիայի տաջիկները դևերից և ալաբաստրնե-

⁶ Անդ, էջ 449: Մատանիները մի շարք այլ վայուերում ունեցել են այլ անվանումներ, օր. ասսոս. տե՛ս Ստ. Լիսիցյան, նշվ. աշխ., էջ 234: Կամ ուրբաթի դող, ուրբաթավորի բազուկ. տե՛ս Ա. Խորայելյան. Հայոց Երկաթե և պողպատե հնայական պահպանակները, Դանրապետական գիտական նստաշրջան, նվիրված 1982-1983թթ. դաշտային հետազոտությունների հանրագումարին, գելուցումների թեզիսներ. Եր., 1984, էջ 15:

⁷ Ղ.Փ.Կյուրցին, Կульп желеza у кавказских народов, с. 83. Հ.Ս. Պահապահական, Ռաчинские кузнецы.- Советская этнография, 1975, հ. 2.

⁸ Տամ խե, ս. 83.

⁹ Միֆы народов мира, (далее: МНМ), М., 1988, т. 2, с. 147.

որից պաշտպանվելու նպատակով պարանոցին սովորաբար կոել են խաչածև մետաղե արձանիկներ։¹⁰

Մենք գրանցել ենք ծիսական սովորության միջանց լրացնող երկու տարբերակ: Դրանցից մեկը հենց Զատկի տոնակատարության Ավագ ուրբաթ օրվան է վերաբերվել: Այդ օրը գյուղի տարեց կանայք դիմելով դարբնին, խնդրում էին պատրաստել «ուրբաթարություն»: Դարբինն այն պատրաստում էր հատուկ երկաթից, որը պետք է նախապես հավաքված լիներ գյուղի յոթը թաղից:¹¹ Մինչև ապարանջանի կամ մատանու պատրաստումը, դարբինը մուրճի յոթ ծիսական հարված էր հասցնում զնանին¹² (ըստ որոշ վկայությունների, այն երկաթի կտորին, որից պետք է պատրաստվեր մատանին): Այնուհետև, առանց որևէ մեկո հետ խոսք փոխանակվելու, սկսում էր մատանու նաև ապարանջանի կրում-կոփումը: Շատ դարբիններ պարտադիր են համարել նաև անձկությունը, որպեսզի որևէ մեկը չտեսնի, թե ինչպես է պատրաստվում չարխափան ուժով օժտված մատանին կամ ապարանջանը: Ենթադրվում էր, որ կողմնակի մարդու ներկայությունը կամ որևէ մեկի հետ դարբնի փոխանակած խոսքը կկորցներ առարկայի չարխափան ազդեցությունը¹³: Նշված ծիսական առարկաների դիմաց դարբինը փոխվճար չէր ընդունում և նման առաջարկը համարում էր նույնիսկ վիրավորական: Ասկայն կանայք դնողունելով դրանք որպես տոնական նվերներ, դիմացը դարբնոց նվեր

¹⁰ О.А. Сухаревая. Пережитки демонологии и шаманства у равнинных таджиков.- Домусульманские верования и обряды Средней Азии, М., 1975, с. 32. Դայկական միջավայրում նման երևոյթների մասին տեղեկություններ են հայտնել ազգագրագետներ Յու. Ակրտումյանը, Դ. Սարությանը Դ. Խառատյանը և հնագետ Դ. Պետրոպանը: Նման պահպանակներ կան նաև ՀԱՊԹ գուցադրությունում:

¹¹ Յ. Խարատյան, Կոլտովые мотивы семейных обычайов и обрядов у армян.- ՂՄԲ, գ. 17, Եր., 1988, էջ 22: Ա. Թաղենոսյան, ՂԱՆ, տ. 1, էջ 78: Այս սովորություն էականը «յոթ» թվի սրբազնության և ամրողականության իմաստի մեջ է: Յոթ տեղը նշում է տիեզերական սրբազն տարածքը: Նմանատիպ ենթատեքստ նկատելի է նաև Դամքարձման տոնին յոթ առյուրից ջուր հավաքելու, մատսալի միսը յոթ տմնից, թաղից ժողովնելու և մի շարք այլ սովորություններում:

¹² Ե.Լալայան, Վայոց ծոր, էջ 144: Ա.Թաղենոսյան, ՂԱՆ, տ. 2, էջ 2:

¹³ Ա.Թաղենոսյան, ՂԱՆ, տ. 1, էջ 78, տ. 2, էջ 48:

էին տանում հավի ծու: ¹⁴ Տոնակատարության ժամանակ դարբնի նվիրած մատանին, ապարանջանը կամ «դող» զգնոցը կանայք պահպանում էին և որպես չարխափան պահպանակ օգտագործում հղիության և ծնունդի ժամանակ, որպես երեխայի ծննդյան հաջողությունն ապահովող միջոց: ¹⁵

Ծեսի մյուս տարբերակում դարբինը Զատկի Ավագ ուրբաթ, ղեռ լույսը չքացված, կեսագիշերին վեր էր կենում, գնում դարբնոց, կրակարանում վառում կոակը և սկսում ծիսական երկաթի կոռումը: Ամեն մի երկաթի կտորի մուրճով երեք կամ յոթ խորհրդանշական հարված էր հասցվում և մի կողմ դրվում: Գործողությունը շարունակվում էր մինչև արևածագի մոտենալը, որից հետո ծեծված երկաթը առանձնացվում և պահպում էր: Տուն գնալով դարբինը հայտնում էր մորը, որ երկաթը ծեծել, պատրաստել է: ¹⁶ Նույն Ավագ ուրբաթ օրը, լուսաբացից հետո, դարբինն այդ գիշեր ծեծված երկաթից ապարանջան, մատանի կամ «դող» զգնոց էր պատրաստում կանանց ու հարսների համար, որպեսզի չարքերը նրանց վնաս չբերեն: Այդ նույնը, սկսուրների պատվերով, պատրաստվում էր հղի կանանց համար, որպեսզի ծննդաբերությունը հաջող ու ապահով անցնի: ¹⁷ Ի տարբերություն առաջին տարբերակի, դարբինն այս դեպքում, նախապես՝ Զատկո տոնին ծեծված երկաթից չարխափան իրեր, մատանի, ապարանջան, «դող» կարող էր պատրաստել տարվա որևէ այլ օր: ¹⁸ Սակայն որպեսզի պատրաստվող առարկան ունենար բարերար և չարխափան ուժ ու կարողություն, դարբինն այն պետք է պատրաստեր քառասուն հարվածով: Դրանից ավել կամ պակաս հարվածների թիվը գցում էք հմայիլի գորությունը: ¹⁹ Այդ առավոտ բացի իր մորից, ոչ ոք չպետք է նկատեր կամ իմանար, որ դարբինը գնում է դարբնոց երկաթ ծեծելու: Այս դեպքում նույնպես, պատրաստված ծիսական առարկաների

¹⁴ Անդ, տ 2, էջ 25:

¹⁵ Ե.Լալայան, Երկեր, հ. 2, էջ 449: Յ. Խարատյան, սկզ. սու., ս. 22. Ա. Թաղենոսյան, ՂԱՆ, տ. 2, էջ 2:

¹⁶ Ա. Թաղենոսյան, ՂԱՆ, տ. 2, էջ 5:

¹⁷ Անդ:

¹⁸ Անդ:

¹⁹ Անդ, էջ 49:

ոինաց որպես նվեր ընդունվում էր միայն օր:

Զանոթանալով ներկայացված ծիսական սովորութի տարբերակներին, փորձենք դրանք իմաստաբանական վերլուծության ենթարկել նախ առանձին, հետո համադրությամբ:

Առաջին տարբերակում Զատկի Ավագ ուրբաթ պատրաստվող «ուրբաթարուր» մատանի կրելը ժողովրդական մեկնաբանությամբ պատճառաբանվում է սատանաներից անվտանգ լինելու ապահովմամբ, ինչպես նաև «որպեսզի կայծակը չխփե»: Դարց է ծագում, ինչո՞ւ սատանայից կամ կայծակից վտանգ սպասում էին միաժամանակ, նույն օրը: Պետք է նկատի ունենանք, որ Զատկի տոնակատարությանը քրիստոնեական տռնածիսական համակարգում պահպանված են մինչքրիստոնեական հավատալիքների բագում տարրեր: Զատիկը տոնածիսական իմաստավորմամբ կապվում է բնության վերածննդի, ինի ու նորի, չարի ու բարու կարգախափան և կարգապահպան ուժերի պայքարի ու տիեզերքի նորոգման գաղափարի հետ: Նկատի ունենալով նշվածը և իմանալով: որ Զատկի Ավագ ուրբաթը քրիստոսի հալածանքների օրերից է, այդ օրվա բնորոշ հատկանիշներից մեկն էլ արտահայտվում է չարի ու բարու բայրման գաղափարով: Փորձենք գտնել, թե ի՞նչ էր «կայծակը» և ինչսյիսի հարաբերություն ունեին մինյանց նկատմամբ կայծակն ու սատանան, ինչ տեղ ուներ այդ հարաբերության մեջ մատանին: Ժողովուրդն ասում է, որ կայծակը հրեշտակների գավագանն է, որով լսիում են սատանաներին:²¹ Ավելի կոնկրետ «կայծակը Գարդիել հրեշտակապետի հրեղեն նետն է, ծիածանը աղեղը, իսկ փայլակը սուրոր, որոնցով նա ճաքառում է «բյուր բյուրոց» ժողովված սատանաների դեմ, որոնք կուգեն հակառկայնել արևուն»:²² Գարդիել հրեշտակապետը, ժողովրդի մեջ իշխող կարծիքով, դարբնության հովանավորն է: Ընդունված է նաև նրան համարել քրիստոնեության շրջանում Վահագն վիշապաքաղի գործառույթները ժառանգողը:²³

²⁰ ԱՅդ, էջ 25:

²¹ Ե. Հալայան, Երկեր, հ. II, էջ 176:

²² Գ. Մրգանճառանց, Երկեր, հ. I, Եր., 1978, էջ 77:

²³ Վ. Բդյոյան, Դայ ազգագրություն, Եր., 1974, էջ 225:

Այժմ փորձենք, ժողովրդական մեկնաբանությունից ելենլով պարզեց այս ծիսական սովորութի ենթաւունը: Ուրբաթ օրն ապարանցան են կրում թե սատանաներից, թե կայծակից պաշտպանվելու համար: Փաստորեն, վտանգը վերևից (կայծակ) և ներքեւից (սատանա) է: Դայտնի դարձավ նաև, որ դրանք մինյանց հակամարտ, թշնամի ուժեր են, որոնք պայքարի մեջ են մտնում արևի համար: Չար կողմը (սատանա) վտանգում է արևի գոյությունը, իսկ բարի կողմը (Գարդիել հրեշտակապետ) պահպանում է այն կայծակների միջոցով սատանաներին հարվածելով: Նման գործառույթ բնորոշ է նաև վիշապաքաղ Վահագնին: Նմանատիպ սյութենքունը նկատելի է նաև ժայռապատկերներում արևը կուլ տվող վիշապի դեմ աստվածամարդու պայքարը պատկերող դրվագներում:²⁴ Այսպիսով, պետք է կարծել, որ Ավագ ուրբաթ օրը երկնքից և ստորերկրայքից մարդկանց սպառնացող վտանգն այդ միջավայրերը ներկայացնող ուժերի միջև ծագած հակամարտության մեջ է: Իմանալով նաև, որ այդ հակամարտության հիմնական պատճառն արևն է, պետք է կարծել, որ արևը խորհրդանշող ծիսական որևէ առարկա կրելը մարդկանց կարող էր պաշտպանել սատանաներից սպասվող վտանգից, քանի որ միջնորդությամբ ծեղոք էր բերվում վերին ուժի (Գարդիել հրեշտակապետի-Վահագն վիշապաքաղի) հովանավորությունն ընդունեմ չար ուժերի (սատանաներ, վիշապ): Ըստ իս, դարբնի պատրաստած մատանին կամ ապարանցանը իսորհրդանշում է արևը:²⁵ Ահա թե ինչու այն մարդկանց համար կարող էր անվտանգ դարձնել կայծակը, քանի որ վերջինս ուղղվում էր սատանաների դեմ, չեզոքացնելով նաև նրանց կողմից մարդկանց սպասվող վտանգը: Այս պայքարը Տիեզերապահպան իմաստ ունի և մարդիկ գտնվելով Տիեզերքի եռամասն կառուցվածքի միջնամասում, այսպես թե այնպես չեն կարող անմասն մնալ այդ պայքարից: Այն

²⁴ Դ. Մարտիրոսյան, Գիտությունը սկսվում է նախնադարից, Եր., 1978, էջ 28, 33:

²⁵ Բանակառության մեջ արևի հետ կապված խորհրդանշաներն ուսումնասիրել է Ս. Հարությունյանը, տես Ը. Արյուանք, Մսֆոլոգիկական օբրան ու ուղարկությունները, Երևան, 1976, թիվ. 1, էջ 240:

ուղղված է նաև արարչագործության արդյունքը պահպանելուն, իսկ մարդկանց զոյսւթյունը Տիեզերքում նույնականացնելու հիմքում է արարչագործության արդյունք և այն պահպանելը մտնում է տիեզերապահպան ուժերի գործառույթի մեջ: Իսկ թե ինչո՞ւ էին հարսները կամ հղի կանայք կրում ապարանջան, պետք է բացատրել այն բանով, որ տոնը կրելով Տիեզերքի զարթոնքի, հաօնումի, ծննդի զաղափարը, իմաստաբանորեն իր համակարգի մեջ ներառում է այն, ինչ կապվում է ծննդի և զարթոնքի հետ, այդ թվում՝ հարսներին ու հղի կանանց:

Վերը շարադրվածը կարող է նախնական իմք ծառայել, որպեսզի դարբնի ծիսական կերպարին տրվի լուսատուների արարչագործի գործառույթը: Առևյ քննարկումից պարզ դարձավ մի բան ևս, որ արարչագործությունն անմասն չէ չարի ու բարու պայքարից, քանու կոսմոսով փոխարինելու զադափարից:²⁶ Սակայն արված վերլուծության մեջ այդ զադափարի կապը քննարկվող ծիսական արարողության հետ անուղղակի է ու առաջմն պայքար նշող խորհրդանշացված որևէ ծիսական գործողության մասին չի խոսվել: Արտահայտվո՞ւմ է դա, արդյոք, քննարկվող ծիսական արարողությունում: Ինչպես է արտահայտվում և դարինն ի՞նչ դիրք ունի մինչև արաշագործության ակտը: Այս հարցերը կփորձենք պարզաբանել հետագա շարադրանքում:

Մինչև մատանու կամ ապարանջանի պատրաստման բուն գործողության անցնելը, դարբինը մուրճով յոթ հարված էր հասցնում զնդանին: Զնդանին ծիսական հարվածներ հասցնելն ընդունված է նաև կովկասյան մի շարք ժողովուրդների մեջ: Ըստ արխազական ծիսական երդման մի արարողության, այն ուղեկցվում էր մուրճով զնդանին ծիսական հարված հասցնելու գործողությամբ²⁷: Արխազները զնդանին դարրոնի մուրճով հարվածելուն տվել են ամպրոպի և ոքոտի իմաստավորում²⁸: Հայոց մեջ էլ մուրճի հարվածներին

տրվում է ձայնային իմաստավորում, որը մյուս իմաստավորումներով հանդերձ. ունի նաև սկիզբ կամ վերջ ազդարարող իմաստ: Այդ առումով այն չափազանց մոտ է զոնդի կամ թմբուկի ծիսական կիրառմանը. որի հարվածներն ունեն ծիսական ժամանակի սկիզբն ազդարարող իմաստ: Այսինքն՝ դրանք ծեսի մասնակիցներին առօրեական կյանքի ոլորտից տեղափոխում են ծիսական կյանքի ոլորտ: Եթե նկատի ունենաք նաև զուգահեռ թմբուկի փայտիկների կայծականախշերի²⁹ և դարրնի մուրճի կայծականային հատկանիշների միջև, ապա զնդանին յոթ հարված տալը կարելի է համարել ժամանակների վուփոխության ազդարարում, անցում սովորական ժամանակից սրբազան ժամանակին, որը ենթադրում է նաև սովորական տարածքից տեղափոխում սրբազան կենտրոն՝ արարչագործության վայր, որտեղ Տիեզերական ծառի մոտ տեղի է ունենում նաև չարի ու բարու րախումը և բարու հաղթանակը: Մուրճով զնդանին դարրնի ծիսական հարվածն ընկալվում է որպես վերին, չարխափան ուժի կողմից չարի սանձահարում: Այս իմաստավորումը ակնառու է նաև դաշըբինների «Արտավազդի շղթաների ամրացման» ծեսում, որտեղ դարրնի ծիսական հարվածները զնդանին բացատրվում է Արտավազդի շղթաների անրացման անհրաժեշտությամբ, որպեսզի նա չսգատվի ու ավերի աշխարհը:³⁰ Մենք կծանոթանանք նաև դաշըբնի մուրճի ամպրոպային ու կայծականային հատկանիշներին, Դարրնի ամսըրոպամարտիկ-Վիշապաքաղ հատկությանը, որոնք կարող են դարրնի ծիսական կռանահարումը՝ որպես Տիեզերական ծառի (զնդան) ստորին մասում թաքնված վիշապի դեմ Ամպրոպամարտիկի կայծակ-անպրոպային պայքար իմաստաբանելու հիմք դառնալ:

³¹ Այսպիսով,

¹⁰ Զարբոնքը, վերածնունդը առասպելական մտածողության համակազում ինքնուրույն ակա չէ. այլ Վերարտադրում է նախասկզբանական արարշագործական ակտը սյուն կրկնելու միջոցով։ Այս առումով սյուն նույնանում է արարշագործության ինտ:

²⁹ Джанашия, указ. соч., с. 73.

²⁸ Д.И.Гулия. Сборник абхазских пословиц, загадок, скороговорок, омонимов и омографов, народных при-

мет о погоде, заговоров и наговоров, Сухуми, 1939, с. 141. *И.А. Аджинадзе*, ук. ваб., сс. 251-252, 266.

²⁹ Л.А.Абрамян, Р.В.Пикичян, Греческая свирель, австралийская гуделка и армянская зурна: генезис музыкального инструмента в ритуально-мифологическом контексте. *ТРЭ*. 1992, № 2, с. 180:

³⁰ Այս ծեսին անդրադարձել է նաև Ա. Դարտիքյունը և նա, դրա մեջ տեսնելով Վիշապամարտի հնագույն առասպեկտական պուտեի արտահայտությունը, որտեղ դարդին ստանում է ամպուսամարտիկ գործառույթ: Տես Ա. Դարտիքյունը՝ Վիշապամարտը և սահմանականությունը:

Հայ, Վարապահութեան Սահման Սովորութեան, Ըլութիւն Ուսանական Գիտությունների, (այսու ԼՀԳ,), թիվ 1, էջ 20:
" Հայոց ծիսակար կանքում դարբնի աճարոպային հատկանիշների մասին խոսվում է լ. Կրօպակարգանի և Յ. Պի-

դարբնի մուլոնի յոթ ծիսական հարված ազդարարելով ժամանակի և տարածության սրբազնացումը, իսրիդանշուն են արարչագործությանը նախորդող քառորդ, պայքարը բարու և չարի միջև, առաջինի հաղթանակը, որին նյութ գործողության մեջ հաջորդում էր արարչագործությունը արևի ազատագրումը:

Ծեսի երկրորդ տարբերակը նույնական կատարվում էր Ավագ ուրբաթ օրը, սակայն դրա նախապստրաստումն սկսվում էր իհնգաշաբթի լույս ուրբաթ գիշերը:

Մենք գիտենք արդեն, թե ինչպես էր իմաստավորվում Ավագ ուրբաթը: Ուշադրություն դարձնենք այն բանին, թե եթե էր դաքրինը ծեծում ծիսական երկաթը կեսգիշերից մինչև արևածագ, այսինքն ծիսական կուանահարնանը հաջորդում էր արևածագը: Այդ գիշերը քառուիկ ուժերի ակսիվացման գիշերն է, երրորդանք ցանկանում են գերել արևը և ինչընդունակ արևածագը, որը համագոր է Տիեզերքի կործանմանը³²: Դարբինը հենց այդ ժամին զնուանի մոտ (Տիեզերական ծառ) իր կայծակնաբեր մուլճով կոիկ է մղում Տիեզերքի կարգախափան ուժերի դեմ, որի հաջորդության վկայությունն այդ գիշերվան հաջորդող արևածագն է, վերածնված արևի գալուստը:

Հայոց մեջ ընդունված է եղել այն պատկերացումը, թե անպրոպի ժամանակ երկնքից պողպատ է թափվում,³³ իսկ կայծակը հաճախ ընկալվել է որպես շիկացած պողպատի փայլատակում, որը հիշեցնում է Օլիմպիական Զևսի պողպատե կայծակների մասին պատումը, կայծակներ, որոնք նրա համար կռում էր աստվածային դարբին Յեփեստոսն իր օգնական կիկլոպների հետ:¹¹ Այս առումով հետաքրքիր է նաև թղթողուլունքի ժողովրդական պատկերացումը, ըստ որի այն թափվում է երկնքից ամպրոպի ժամանակ: Այն մի թալիսման է, որն օգտագործվում է ծննդի ժամանակ թղթողակոչող հրեշից ծննդականին անվտանգ

դարձնելու համար:³⁴ Հայտնի է նաև «ուրբաթնուտ» բարի ոգիների մասին ժողովրդական պատկերացումները, որոնք Ավագ ուրբաթ գիշեր պահպանում են մարդկանց չար ոգիներից: Դրանք կսպած են նաև արևածագի և ծննդի հաջորդության հետ:³⁵ Այսպիսով, կարելի է ասել, որ դարբնի կողմից Ավագ ուրբաթ կեսգիշերի ծիսական կուանահարումը խորհրդանշութեն պատկերում է Ամպրոպամարտիկի պալքարը Վիշապի դեմ, որը փորձում է գերել արևը կամ ինանգարել արևագալը: Միևնույն ժամանակ երեք, յոթ թվերն աստվածային ամբողջականության թվային խորհրդանշաներ են, արաչագործական թվեր:³⁷ Դա ևս գալիս է հաստատելու այս ծիսական գործողության իմաստաբանումը, որպես կարգապահական և կարգախափան ուժերի միջև պայքարի (1) և արարչագործասան (արեգակի արարում կամ վերածնունդը) (2) բնույթի ծես:

Նկարագրված ծեսի հետ սերտ առնչության մեջ է նաև տարվա այլ օրերին դարբնի կողմից հարսների և հոյի կանանց համար չարիափան մատանու, ապարանջանի կամ «դոյ» զգնոցի պատրաստումը մուրճի քառասուն հարվածի միջոցով: Ծիսական քառասուն հարվածների թիվն ազդեն նշում է, որ դրանք անհրաժեշտ են արարչագործության համար: Հայոց ծիսակարգում քառասունը կիրառվում է որպես չար ուժերի հնարավոր ազդեցության շրջան, սահմանային հատված իրար հաջորդող որակապես տարբեր ժամանակային ցիկլերի միջև: Այս առումով շատ հատկանշական է երեխայի ծննդի հետ կսպած քառասունքի սովորույթը, երրորդ ծննդայան առաջին քառասուն օրը համարվում էր երեխայի և ծննդականի վրա չար ուժերի հնարավոր ազդեցության շրջան:³⁸ Քառասուն

³⁵ Յ.Յ. Խարատյան, սկզբ. սու., ս. 22. Յեղինակը նշում է նաև, որ թղթական հիվանդությամբ տառապող ծննդական հարսները կորում էին դաքրինի պատրաստած երկաթը մատանին: Նման փաստ գրանցել ենք նաև այս ինքներս Աթաղևոյան, ԴԱԱ, տ. 3, էջ 48:

³⁶ Յ.Յ. Խարատյան, սկզբ. սու., ս. 28.

³⁷ Ընդհանրապես բոլոր թվերը և հատկապես միավորները սորագան են համարվում: Երեսույթը արտահայտած թվերով, քառային քանակականության կարգավորումն է: Տես Ա.Ա. Սարգսին, Կառլովые комплексы в ранних упаковках.- Труды по знаковых системам, IV, Тармут, Պ.Ա. Փլորենսկий, Պիֆагоревы числа.- Труды по знаковых системам, V, Тармут, с. 503-510. Պ. Պոլլոյան, 1600-ամյա գաղտնիքներ, Եր., 191, էջ 94-96:

³⁸ Յ.Յ. Խարատյան, սկզբ. սու., ս. 28.

կիչամի նշված աշխատության մեջ: Տես Ա.Ա. Աբրամյան, Բ.Վ. Պոկսչյան, սկզբ. սու., ս. 180-181:

³² Ծեսում այդ գիշերը կոչվում է նաև ինավարման գիշեր: Տես Ա.Թաղենոյան, ԴԱԱ, տ. 2, էջ 5, տ. 3, էջ 49:

³³ Հ. Ջումազիլ, Տիկին և նարու, ս. 17.

³⁴ Պ. Գրեյվս, Միֆի Դревней Греции, М., с. 61-63. Ա.Ա. Տախո-Годи, Греческая мифология, М., 1989, с. 70, 80. E. Charles, M.S. Mapp, Greek Myth and Their Art, p. 58. G.S. Kirk, op. cit., p. 162.

հարվածի ավանդութեայնությունը (մի հարվածի ավել կամ պակաս լինելը կկորցներ պատրաստվող առարկայի չարիափան ազդեցությունը ու գերբնականությունը) նշում է, որ այս մի ցիկլ է, որի ընթացքում սկսվում, հասունանում և ավարտվում է արարումը: Դարբնի հարվածներին տրվող թվային կարևորությունը հուշում է, որ դրանցից յուրաքանչյուրը նպատակային է և անպայման՝ ժիսական առարկաների խորհրդանշանային իմաստավորման համար: Անեն մի հարված որոշակը փոփոխություն է մտցնում չարի ու բարու պայքարի, քառուի և կոսմոսի հարաբերակցության մեջ: Իսկ դրանց ամբողջությունը քառասուն թվի մեջ ազդարարում է այդ փոփոխության ավարտը հօգուտ բարու, կոսմոսի հաստատման և արարչագործության: Եվ ինչպես հեքիաթներում հրեշի սպանվելուց հետո իր իսկ խնդրանքով հերոսի մեկ լրացուցիչ զարկը կարող է վերակենդանացնել նրան,³⁹ այնպես էլ դարբնի քառասունից ավել տրվող հարվածը կարող է նոր ցիկլի սկիզբ դառնալ, իսկ պակասը՝ անավարտուն ցիկլ: Ծիսական գործողության նման իմաստաբանությունը թույլ է տալիս քառասուն հարվածը մեկնել որպես վիշապամարտ, իսկ մատանին կամ ապարանջան սյոյ պայքարի շնորհիվ ագատված կամ արարված արևի խորհրդանիշ: Նման մեկնությունը քառասուն հարվածով սույն ծեսը կապում է Զատկը Ավագ ուրբաթ գիշերվա «Երկաթ ծեծելու» ծեսի հետ: Եթե հաշվի առնենք նաև, որ նշված չարիափան առարկաները պատրաստվիմ էին Ավագ ուրբաթ ժիսականորեն ծեծված երկաթից, ապա այդ երկու գործողության միջև նշված կապն ավելի ակնառու է դառնում: Ավագ ուրբաթ առաջին ծեսի օրն է, երբ անպրոպանարտիկ, արարիչ աստվածային դարբնի պայքարի միջոցով արարվում (Վերածնվում) է արեգակը: Տարվա մյուս օրերին Ավագ ուրբաթ ծեծված երկաթից քառասուն հարվածով ապարանջանի կամ մատանու պատրաստումը իմաստաբանորեն կոկնում է այդ օրը դարբնի կոանահարմանը կատարած ժիսական գործողությունը:

³⁹ Ե.Լալայան, հ. 1, էջ 2, 37: Այս երևույթի մեջ հետաքրքրող ասպեկտով ուսումնասիրությունը տես L.Արրահամյան, Թե հնո՞ւ ոյուցազնը պետք է ունենա միայն մեկ զարկ: Երիտասարդ գիտնականների VIII կոնֆերանս (գեկուցումների թեզիսներ), Երևան, 1988, էջ 1-3:

թյունը: Այսինքն, «քառասուն հարվածի» ծեսն իմաստաբանորեն նույնանալով «կոանահարման» ծեսի հետ, կոկնում է Առաջին ծեսը կամ նախասկզբնական գործողությունը:

Եթե պայմանականորեն առաջին տարբերակը նշենք 1, երկրորդ տարբերակի «Երկաթ ծեծելու» ծեսը 2, իսկ «քառասուն հարվածի» ծեսը՝ 2ա, ապա համեմատական վերլուծության համար կունենանք երեք գժապատկեր:

Գժապատկեր 1. ծես 1:

| | Խորհրդանշող | Խորհրդանշվող |
|---|-----------------------------|-----------------------|
| ա | դարբին | ամպ. աստված արարիչ |
| բ | կոանահարում (յոթ հարված) | վիշապամարտ |
| գ | մատանի | արարիչ |

Գժապատկեր 2. ծես 2:

| | Խորհրդանշող | Խորհրդանշվող |
|---|-----------------------------|-----------------------|
| ա | դարբին | ամպ. աստված արարիչ |
| բ | կոանահարում (յոթ հարված) | վիշապամարտ |
| գ | արև | արարում |

Գժապատկեր 3. ծես 2ա:

| | Խորհրդանշող | Խորհրդանշվող |
|---|----------------------------|-----------------------|
| ա | դարբին | ամպ. աստված արարիչ |
| բ | կոանահարում (40 հարված) | վիշապամարտ |
| գ | մատանի | արարում |

Բերված երեք գժանկարներն ընդիանրացնելով կետանանք հետևյալ պատկերը:

| Խորհրդանշող | Խորհրդանշող | | |
|--------------------------|-----------------------------|-----------------------------|----------------------------|
| | ծես 1 | ծես 2 | ծես 2ա |
| ամպ. աստված արարիչ | դարբին | դարբին | դարբին |
| վիշապամարտ | կոանահարում (յոթ հարված) | կոանահարում (յոթ հարված) | կոանահարում (40 հարված) |
| արարում | մատանի | արև | մատանի |

1-ին սյունակում բոլոր երեք ծեսերում ա. ամպրոպի, աստծո, բ. արարչի դիմաց ունենք

Ծույն խորհրդանիշը դարբին: 2-րդ սյունակում 1-ին և 2-րդ ծեսերուն վիշապանարտը խորհրդանշվում է երեք կամ յոթ հարվածով կոանահարմամբ, 2-րդ ա ծեսում՝ քառասուն հարվածի կոանահարմամբ: 3-րդ սյունակուն արարուսը խորհրդանշվում է 1-ին ծեսում՝ մատանի, 2-րդում արև և 2ա-ում՝ մատանի: Մատանու և արևի միջև խորհրդանշանային համագորությունը հիմնավորում է, որ 1-ին և 2ա ծեսերուն մատանին որպես նշան փոխարինում է արևին, խորհրդանշելով արաչագործական ակտը: Սակայն այն նշում է ոչ միայն արևը, այլև լուսի և խավարի հաջորդականության սկզբնավորումը, ժամանակի շարժման սկիզբը, որն ապահովում է առասպելական հերոս Արևի կողմից: Այսինքն 1-ին և 2ա ծեսերուն մատանին նշելով արև բնական լուսատուն, խորհրդանշում է Արև առասպելական հերոսին, նրա ծնունդը (կամ վերածնունդը), իսկ դարբինը նրա գուգընկերն է, որը որպես Ամարոպային մաքտիկ, նրան պաշտպանում է վիշապից:

Այսպիսով, հայոց մեջ պահպանված դարբնոցային սյս ծեսում ի հայտ է գալիս ամպրոպամարտիկի առասպելական թեմայի ճյուղերից մեկը, որը մեզ հաջողվեց վեր հանել ծիսական խորհրդանշանների և խորհրդանշանային գործողությունների ենթատերտից: Օնսի վերլուծությունն ավելի համոգիչ է դառնում այն բանահյուսական նյութի հետ համադրելու դեպքում: Դայ ժողովուական բանահյուսական նյութում և «Սասնա ծոեր» էպոսում առասպելական նշված թեմայի դրսություններին մի շարք աշխատություններուն անդրադարձել է Ս. Դարությունյանը:⁴⁰

Այս թեման մեջ տարածում ունի նաև Մերձավոր Արևելքի հնագույն բնակիչների և հնդեվոռպական ժողովուրդների առասպելներում և բանահյուսությունում: Այդպիսին են Ինդրան և Բրիհասպատին (Բրահմանասպատի): Վերջինս արարվում է աստվածային վարպետ Տվաշտարի կողմից: Նա ցրում է մութը,⁴¹ պահպանելով տիեզերական օրենքը և արարում արեգակը.⁴² Մի ուրիշ տեղ Ինդրան ինքն է ազատում արևը և նրան շարժում

հաղորդում. ստեղծելով լուսի և խավարի հաջորդականությունը (4.30):⁴³ Ինդրան դա անում է աստվածային սոմա խմիչքն ըմպելով, որը նա ստանում է Տվաշտարից (4. 18):⁴⁴ Լատվիական առասպելական դարբին Տելլավելն ինքն է կոփում արևը և այն տեղադրում երկնջում: Արարչագործական գործառույթ է կրում նաև նաև Յեփեստոսը Աքիլեսի վահանը պատրաստելու դրվագում,⁴⁵ երբ նա վահանի վոյա պատկերում է տիեզերքը խորհրդանշող լուսատուները :

Սակայն, այս պարզաբանումը դեռ ամբողջ ծեսը չո՛ բացահայտում: Անհրաժեշտ է հասկանալ նաև, թե ինչու դարբնի պատրաստած մատանին կապվում էր ծննդի հետ, դարբինն ինչ կապ ուներ ծննդի հետ, կամ արևի ազատագրումն ինչ առնչություն կարող էր ունենալ երեխայի ծննդի հետ: Կարելի է ասել, որ կինը մատանու շնորհիկ մտնում էր դարբնի սրբագան գործունեության շրջանակների ագդեցության ոլորտը: Մատանին, լինելով դարբնի արարչագործական գործառույթի կրողը, մինչև երեխայի ծննդը նրա համար ապահովում էր նաև դարբնի արարչագործությանը նախորդող վիշապաքաղ, չարխական գործառույթը: Դրա միջոցով դարբինն ապահովում է ծնվելիք երեխայի ծննդը, ազատելով նրան կնոջ ծննդաբերությանն արգելակող վիշապից, դառնալով կնոջ չար վիշապային եռւթյան հակառակորդը՝ հօգուտ կանացի բարի, պսուաբերող, արարչագործ եռւթյան: Սյդ նվիրատվությամբ դարբինն ինքը հիդի կնոջ կամ հարսի հետ միասին խորհրդանշութեն կիսում է երեխայի արարման գործը, ծննդկան կնոջ հետ միասին դառնալով երեխայի ծննդի համամասնակիցը: Դրա մի այլ խորհրդանշանային ապացույցը մատանու դիմաց դարբնին նվիրատրվող ծուն է, որը որպես ծննդկանին, հղիությունը խորհրդանշուդի սաղմ՝ հանձնվում է դարբնի հովանավորությանը: Տեղի է ունենում տղամարդկային արարչագործության (ծուն) խորհրդանշությունը: Տեղի է ունենում տղամարդկային արարչագործության (ծուն) խորհրդանշությունը, որը կարող է ընկալվել խորհրդանշային միավորում ու դաշինք դարբնի և

⁴⁰ Ս. Դարությունյան, նշվ. աշխ.: Հ. Արյունյան, սկզ. սու.

⁴¹ Ригвэда. Մանдалы M., 1989, с. 261(II, 23).

⁴² Տամ խե: с. 264 (II, 23)

⁴³ Տամ խե: с. 393 (IV, 30)

⁴⁴ Տամ խե: с. 380 (IV, 18)

⁴⁵ E. Charles, M.S. Mann, op. cit., p. 58.

ծննդկանի միջև:⁴⁶ Նման փոխանակությունը բնորոշ էր նաև ավանդական հարսանեկան ժեսերին: Տղայի կողմն աղջկան նվիրաբերում էր մատանի և նույնիսկ մի քանի անգամ, իսկ աղջկա կողմը տղային ծու (դրա լայն տարածում գտած, ընդունված ծևեկից մեկը փեսային գորանչի կողմից մատուցվող ձվածեղն էր):

Ա. Չարությունյանը «Սասնա ծոեր» հայ ժողովապահական էպոսին նվիրված ուսումնասիրությունում բացահայտել է վիշապամարսի երեք զուգահեռ տարբերակ, որոնցից առաջել ուշագրավ են երկուսը՝ վիշապ-արև-ամպրոպամարտիկ, վիշապ-աղջկի-ամպրոպամարտիկ և էպոսի պատումներից մեկում վիշապ-մատանի-ամպրոպամարտիկ:

Ամպրոպամարտիկի դերում գտնվող էպոսի հերոսները՝ Սանասարը, Բաղդասարը, Միերը վիշապից աղջկան ազատելով, ամուսնանում են նրա հետ:⁴⁸ Դայ ժողովապահական էպոսում որպես գեղեցկուհու հետ ամուսնանալու պայման, առաջադրվում է արկի ազատագրումը վիշապից:⁴⁹ Սրեւ հայկական բանահյուսությունում խորհրդանշվում է բազմազան միջոցներով՝ ոսկե կամ կարմիր խնձոր, թանկարժեք քար, ճրագ, մատանի:⁵⁰ Սանասարի և Ղեղան ծամի ամուսնության պայմաններից մեկն այն է, որ «Ակ Վիշապի բերնեն հանի ...աղջկի իրեն կտանի...»:⁵¹ Այս թեման ընդհանուր է հնդեվիոպական հիմնական առասպելին և հնդեվոռպալեզու ժողովուրդների լեզվաառասպելական մտածողությանը:⁵² Եթե ընդունենք, որ «մատանու պատրաստման» քննարկվող ծեսում նույնպես դաշրին-ամպրոպամարտիկին բնորոշ են վիշապ-արև-ամպրոպամարտիկ և վիշապ-մատանի-ամպրոպամարտիկ հաջարերությունները, ապա մատանու նվիրատվյունը հարսներին ու հղի կանանց միջնորդավորված ձևով վեր է

հանում նաև վիշապ-աղջիկ-ամպրոպամարտիկ հարաբերությունը: Այսինքն՝ մատանու նվիրատվյունը միջոցով ոչ միայն չար ուժերից (վիշապից) չեզոքացվում է վտանգը ծննդի նկատմամբ, այլ նաև վիշապից ազատվում են կանայք ու հարսները: Սովորաբար այդ մատանիները, ծննդկան կանանցից բացի, կոռում էին նաև ջահել կանայք ու հարսները:⁵³ Վիշապից աղջկա փրկությանը հաջորդող որվազը՝ աղջկա ամուսնությունը ամպրոպամարտիկի հետ, խորհրդանշվում է դարբնի կողմից հարսներին և կանանց մատանի նվիրելու ծիսական գործողությամբ, որում դարբինն արև-մատանի է նվիրում կանանց: Դա նշանակում է, որ նա սպանել է վիշապին, որը ոչ միայն արեւ պետք է կուլ տար, որպեսզի կործաներ տիեզերքը, այլ նաև մարդ երկնողին՝ կնոջը (այսինքն՝ կնոջն ազատելով, ապահովում է մարդկային վերարտադրությունը): Արև-մատանու նվիրատվյունը խորհրդանշելով կնոջ ազատագրումը վիշապից, միևնույն ժամանակ, ինչպես նշվեց վերը, աղջում է բեղմնավորման ու ծննդաբերության հաջորդության վուա: Կարծում ենք, որ ծեսում մատանուն տրվող նման գործառույթը պետք է փնտըել այն պատրաստողի՝ դարբնի սրբազնության մեջ: Ըստ իս, այստեղ խորհրդանշողն արտահայտված է դարբնի և նրա կորմից վիշապից փրկված կնոջ ամուսնության (բեղմնավորման և մարդկության արարման նպատակով) առասպելական թեման: Նշենք նաև, որ մատանուն պտղաբերող գործառույթ են վերաբրում նաև սկանդինավյան ժողովուրները:⁵⁴

Անդրադասոնալով դարբնի ծեսը գաղտնի և գիշերով⁵⁵ կատարելու սովորույթին, այն կարելի է մեկնարանել տեսանելի-անտեսանելի հակադրությաբ, որը համապատասխանում է աշխարհիկ-սրբազնան հակադրությանը:⁵⁶ Ըստ

⁴⁶ Զուն համաշխարհային առասպելարանությունում հայտնի է որպես սաղմ, որից վերին աստվածության միջնորդությամբ արարվում է Տիեզերքը: D. MacLagan, op. cit., p. 16. A. Lang, op. cit., p. 166:

⁴⁷ Ա. Շարությունյան, նշվ. աշխ., էջ 65:

⁴⁸ Անդ, էջ 66:

⁴⁹ Անդ, էջ 67:

⁵⁰ C. Arutyunyan, укаz. соч., с. 239.

⁵¹ «Սասնա կամ կավիթ». Հայկական ժողովրդական էպոս, խմբ: Ա. Արեւոյան, Եր., 1939, էջ 82:

⁵² В. В. Иванов, В. Н. Топоров, Исследования в области славянских древностей, с. 28, 30-70.

⁵³ Որոշ վկայություններով, նաև աղջիկները, տես Շո. Աւազյան, սկզ. սու., ս. 164.

⁵⁴ Е. М. Мелетинский, «Эдда и ранние формы эпоса», с. 159.

⁵⁵ Դեմքեստոսը աիեգերը պատկերող Աքիլեսի վահանը նույնպես պատրաստում է գիշերով ընթացքում մինչև արևածագ, տես E. Charles, M. S. Mann, op. cit., p. 60.

⁵⁶ А. П. Рыфтин, Категория видимого и невидимого мира в языке.- Ученые записки Ленинградского университета, серия филологическая, вып. 10, 1946.

⁵⁷ С. Ю. Неклюдов, Чудо в билине.- Труды по знаковым системам, IV, Тарту, 1969, 144-159.

դրա, բոլորից բաքում, ծպտված դարբնոց գնալը և այնտեղ անձուկ վիճակով աշխատելը նշուն է նրա պատկանելությունը սրբազն աշխարհին: Աշխարհիկ միջավայրից նման առանձնացվածությունը բնորոշ էր նաև գերմանա-սաքսոնական ավանդույթներուն սրբազն համարվող դարբիններին, որոնց հաճախ տրվում էին հրաշագործ կախարդի գժեր:⁵⁷ Նշենք նաև, որ գերմանա-սկանդինավյան դարբինների գվերգների մոզական հրերից նեկան էլ անտեսանելի գլխարկն էր:⁵⁸ Ասվածը կարելի է լրացվել նաև այն եգրակացությամբ, որ անձկությունը և լրությունը որոնես խորհրդանշանային միջոցներ կարող են նշել արարչագործության սկզբում Արարչի միայնությունը:⁵⁹ Ինչ վերաբերվում է ծեսի կատարման ժամանակին, ապա կարելի է ասել, որ այն համապատասխանում հայոց ավանդական նոր տարվա պարբերաշրջանին և այդ առումով կարող է մեկնաբանվել որպես նշված տոնական ծիսաշարքի մասը կազմող ծես:⁶⁰

Ամփոփելով վերլուծությունը, կարելի է ասել, որ դարբնի գլխավորությամբ Զատկի ծիսակաղութ հաստատուն տեղ գրաված այս ծեսի ենթատեքստային թեման վիշապամարտն է, իր հիմնական դրվագներով՝ վիշապի կողմից արևի (մատանու) կուլ տալու փորձը, ինչն ավարտվում է ամպրոպամարտիկի կողմից կայծակ ամպրոպներով վիշապի սպանությամբ, դրան հաջորդում է արևի

(մատանու) վերածնունդը: Դրան գուգահեռ, միահյուսված ծևով ընթանում է վիշապի կողմից աղջկան կուլ տալու (կամ փախցնելու) փորձը: Աղջկան փրկում է ամպրոպամարտիկը վիշապի սպանությամբ, որից հետո նրանք ամուսնանում են (առաջին բեղմնավորում, ծնունդ): Այս երկու գուգահեռ սյուտեներով գլխավոր առասպելական հերոս ամպրոպամարտիկի գործառույթը ծեսում կատարում է դարբինը, իսկ աղջկա դերում այն կանայք, ովքեր դարբնից մատանի են նվեր ստանում:⁶¹

Այսպիսով, քննարկված ծեսում պարզվեցին դարբնի ծիսական կերպարին բնորոշ միշարք առասպելական գժեր: Դրա օգնությամբ փորձեցինք հասկանալ նաև արարչագործական բնույթի ծեսի ընթացքում դարբնի պատրաստած նատանու ծիսական գործառնության հիմքում ընկած խորհրդանշանային ենթատեքստը, ինչպես նաև պարզաբանել մատանին ծիսական կիրառության մեջ դնող կանանց գործառույթն ու գտնել շփման այն եզրերը, որոնք կապում են մատանին պատրաստողին:

Փաստորեն դարբնի ծիսական գործողության մեջ կարելի է նկատել երկու հիմնական գործառույթ՝ ռազմական (վիշապամարտ) և արարչագործական (արև, արազում), որոնք դրսևորվելով չափազանց միահյուսված ծևով, համարյա նույնանում են:⁶² Դարբինը դառնում է Տիեզերքի գերագույն արժեքի արևի ստեղծողը և այն պաշտպանողը (հետաքրքիր է, որ պաշտպանական դերը նա իրականացնում է կայծակների միջոցով, որոնց ստեղծողը նույնպես ինքն է): Դրանով հանդերձ, նրա, որպես տղամարդկային նախասկզբի արարչագործական գործառույթը տարածվում է մատանին կրող կանանց վրա, իսկ ըստ ռազմական գործառույթի կանայք ծեռք են բերում նրա հովանավորությունը:

⁵⁷ Գերմանա-սկանդինավյան մշակութային միջավայրում շատ դարբիններ, համարվելով սրբազն, դարբնուցները կառուցում էին անտառների խորերություն: Նույնիսկ որոշ տեղերում գոյություն ուներ, այսպես կոչված, «անտեսանելի դարբնություն», որի երթյունն այն էր, որ որոշակի տեղում դնելով երկարի կտորը, հաջորդ օրը վեցողնում էին պատրաստի սուրը կամ այլ առարկա: *Տե՛ս Ե. Կերիկ, Մետալ-շելօվեկ-քրեմա, ... , ս. 193. Օ. Շրալեր, յակա. սու., ս. 242-244.*

⁵⁸ *Ա. Խունաւեր, յակա. սու., ս. 386.*

⁵⁹ «Արքալ լեզվի ծիսական արգելման մասին, տե՛ս Ա. Գույյան, Վերրալ լեզվի ծիսական արգելման բնույթը: - Երիտասարդ գիտնականների կոնֆերանս, նվիրված Վ.Ի. Լենինի ծննդյան 110-ամյակին, գեկուցումների թեգիսներ, Եր., 1980, էջ 38:»

⁶⁰ Այս մասին ավելի համգումանորեն տե՛ս աշխատանքի «Դարբինը շղթաված հերոսի ծեսում» բաժնում: Օ. Ֆրեյնենբերգը նոր տարվա համատեքստում բացահյտել է «փեսա-թագավորի» և «հարս-թագուհու» ամուսնության թեման կապված արևի կրակային (տղամարդ) և մոլորային (կիմ) երթյան հետ: Ըստ նրա, այս ամենը տոնում ունի նշան, որը կարելի է համարում համարել մեր կողմից քննարկվող ծեսին՝ այն նոր տարվա համա-

կարգում դիտելու դեպքում: *Տե՛ս Օ. Փրեյնենբերգ. Պոэտիկա հայելու ս խառա, ս. 72-73.*

⁶¹ Բոլորակ մատանին կարելի է դիտել նաև որպես մոզական շրջան, որն այն կրողին առնելով իր մեջ, անվտանգ է դարձնում նրա գոյությունը: Այդ մասին տե՛ս *Ա. Խորայելյան, նշվ. աշխ., էջ 15:*

⁶² Այստեղ նկատելի են Ժ. Դյումեզիլի կատարած հնդեվրոպական պանթեոնի եռափունկցիոնալ բաժանմանը բնորոշ դրսևորմներ: *Ժ. Դյումեզալ. Եթոքական եղանակային աշխատանքները:*

2. Դարբինը և անձրկը ծիսական համակարգում

Դարբնությունը հայ համայնքի կյանքում կարևոր նշանակություն ունեցող արհեստներից էր: Դարբինը բավարարում էր ողջ համայնքի պահանջմունքները կապված երկաթե աշխատանքային գործիքների և կենցաղային առարկաների հետ: Հատկապես կարևոր էր դարբնի դերը երկիագործական աշխատանքային գործիքների պատրաստման առումով: Այդիսի գործիքներից կարևորներն էին գութանի և արորի երկաթե խոփը, բար, մանգաղը և այլն: Տնտեսական կյանքում ունեցած դարբնի կշիռը, ինչպես և երկարը հնագանդեցնելու շնորհը, համայնքային միջավայրում նրա նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքի պատճառներից էին: Նման վերաբերմունքը դրսերպիւմ էր ոչ սրայն ամենօրյա հարաբերություններում, այլ նաև տոնական կյանքում:

Դարբնի նաև ակցությունը հատկապես մեծ էր գարնանային զարթոնքի հետ կապված Զատկի տոնակատարությանը, որում դարբնն ինքը կատարում էր որոշակի ծեսեր, պատրաստելով ծիսական և մոգական երկաթե կամ պողպատե առարկաներ համայնքի կամանց համար: Այս ոլորտում մեր դիտարկումները թույլ են տալիս անելու մի շարք եգորակացություններ, ըստ որի դարբինը համայնքի ծիսական համապարզում նույնպես ունի որոշակի գործառույթներ, որի արմատները տանում են դեպի հնամենի մտածողությանը բնույթ առասպելական աշխարհների մայման ժամանակաշրջան, որից սակայն, ծեսն այսօր պահպանել է արտաքին խորհրդանշանային դրսնորումները, իսկ ժողովուրդը՝ հետևանքային բացատրությունը (որպեսզի չարը խափանվի, որպեսզի անձրև գա և այլն): Դարբինը, որպես ծիսական կերպար, որոշակի գործառույթներ ունի ոչ միայն գյուղի տոնական կյանքում, այլ նաև համայնքում առաջացած ծայրահեղ վիճակները ծիսականորեն կարգավորելու գործում: Գյուղական համայնքում նման վիճակ կարող էր ստեղծվել գյուղատնտեսությանն անհրաժեշտ անձրևի երկարատև բացակայության պատճառով: Բերքի փշանա-

լը կարող էր համայնքը կանգնեցնել ճգնաժամի առջև: Այսինքն՝ անձրևի երկարատև բացակայությունը կամ երաշտը, խախտելով գյուղի բնականոն կյանքի ընթացքը, քասային վեճակ էին ատեղծում թե՝ տնտեսական, թե՝ հոգեբանական առումով: Համայնքի կյանքը չէր կարելի նման վիճակում թողնել և անհրաժեշտություն էր առաջանում դիմել որոշակի կարգավորիչ քայլերի ու գործողությունների:

Հայոց երկիագործական մշակույթում հայտնի են երաշտի դեմ պայքարելու ինչպես իրական, այնպես էլ ծիսական եղանակներ: Մեր ասելիքը վերաբերում է ոչ թե իրական եղանակներին, որոնց մասին համապատասխան գրականության մեջ կան մշակված մոտեցումներ,⁶³ այլ ծիսական միջոցառումներին:

Բնության առաջադրած այդպիսի ծայրահեղու, կիհտիկական պահերին բազմաթիվ անձրևաբեր ծեսերի հետ միասին,⁶⁴ գյուղացիները հաճախ դիմում էին դարբնին, խնդրելով նրա միջամտությունը ստեղծված վիճակի կարգավորմանը: Այդ պարագայում դարբինը, չներժելով համագյուղացիների խնդրանքը, գործի էր գցում դարբնոցը քուրայում վառելով կիակը, մուրճով սկսում էր կուանահարել մի որոշ ժամանակ: Գյուղացիները հավատում էին, որ դրանից հետո անպայման անձրև կգա:⁶⁵ Որպեսզի կարողանանք պարզաբանել այս չափագանց ուշագրավ ծեսը, անհրաժեշտ է դրանում առանձնացնել երեք դրվագ, որոնք եմ՝ երաշտը, դարբնի կուանահարությունը և անձրևի ակնկալիքը: Մեր նպատակն է իմաստաբանել դարբնի ծիսական կուանահարության սրբագան գործառույթը, կապված անձրևի հետ: Դա հնարավորություն կտա անձրևի և երաշտի երևույթների առասպելականացումը դիտարկել մի տեսանկյունից ևս: Կփորձենք այս ուսումնասիրությունը կատարել բանահյուսական, հնագիտական և լեգվարբանական նյութերի հետ գուգակցված, որի

⁶³ Վ. Թողյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1973, էջ 322-334:

⁶⁴ Ե. Լալայան, Երկեր, հ. 2, էջ 430: Առյօնի, Նոր Բայազետի գավառ, ս. 1, գ. 15, Թիֆլիս, 1903, էջ 96, Առյօնի, Բորչարդի գավառ, ս. 7, գ. 10, Թիֆլիս, 1903, էջ 201: Վ. Թողյան, նշվ. աշխ., էջ 488: Մ. Աբեղյան, «Վիշապներ» կոչված կորունդներուն իրու մստղիկ Դերկետու ոիցուհու արձաններ, Եր., 1941, էջ 89:

⁶⁵ Ա. Թաղևոսյան, Դաս, թ. 2, էջ 68

շնորհիվ ծեսը հնարավոր կլինի դիտել մշակութային ավելի լայն դաշտում: Միաժամանակ, օգտագործելով ազգագրական նյութի կապերը նշված ոլորտների հետ, ընդհանրացուների միջոցով, կարելի է լրացնել, ամբողջացնել և առավել հիմնավոր ձևով հնչեցնել բանահյուսական, հնագիտական և լեզվաբանական հանաննան նյութերը, գտնել նոր տարրեր, որոնք դրանցում բացակայելով, դրսնորվում են մշակույթի այնպիսի մի ոլորտում, որպիսին ծիսականն է: Ահա թե ինչու, հետագոտական ինդիրների համար շատ կարևոր է ծանոթանալ բանահյուսական աղբյուրներուն երաշտի և անձրևի հետ կապված առասպելական իմաստավորմանը, որը բավականին լավ է պահպանվել հայկական ժողովրդական էպոսուն և ժողովրդական ավանդապատումներում:

Ծեսի վերոհիշյալ երեք դրվագում դարբնի կրանահարությունն ունի միջանկյալ, կապող դիրք և որպես սահմանային երևույթ, որոշում է անցումը երաշտից անձրևին: Ի՞նչն էր դառնում երաշտի պատճառ և ե՞ր ու ի՞նչպես էր այն վերացվում: Երաշտի հայկական պատկերացումները շատ ընդհանուր գծեր ունեն հնդեվրոպականի հետ⁶⁶ և բավականին ամբողջական ձևով արտահայտված են նաև հայկական ժողովրդական էպոսում: Այսպես, մի շարք պատումներում Աանասարը (մեկ դեպքում նաև Սիերը) հաղթում է ջրարգել վրշապին, որը փակում է երկնային ջրերի ակը և երաշտի պատճառ դառնում:⁶⁷ Պատումներից մի քանիսում վրշապը փակելով ջրի ակունքը, աղջիկ է պահանջում այն բացելու համար: Էպոսի հերոսներն սպանում են նրան, ագատում ջրերի ակունքը, մարդկանց փրկում երաշտից և ամուսնանում իրենց ագատած աղջկա հետ:⁶⁸ «Սասնա ծոերում» վիշապի և երաշտի կապը կածես թե ունի բացահայտ դրսնորում: Երաշտը դիտվում է որպես երկնային ջրերի ակունք տիեզերակործան վրշա-

⁶⁶ Վ. Գ. Արճինին, Ռուսական և միֆի դրեմնեան Անամուս, Մ., 1982, 87.

⁶⁷ Ա. Դարությունյան, նշվ. աշխ., էջ 80: Երկրային ջրերի պատկերացումները տարածված առասպելական երևույթ, տես Ա. Հ. Աֆանասև, Պոэտմական ազգագրական հայության մասին, մ., 1868, ս. 123. S.G.Brandon, Religion in Ancient History, N.Y., 1969, թ. 23. D.MacLagan, op. cit., թ. 28.

⁶⁸ Ա. Դարությունյան, նշվ. աշխ., էջ 80:

աի կողմից փասվելու հետևանք: Երաշտի նման բացատրությունը բնորոշ է ոչ միայն հայերին, այլ լայն տարածում ունի համաշխարհային առասպելաբանության մեջ: Բեռնը երկու վառ գուգահեռ սլավոնական և հնդեվրոպական առասպելաբանությունից: Սլավոնական առասպելաբանության մեջ երաշտը առաջանում է, երբ Վալես տիեզերակործան հրեշը փակում է երկնքում գտնվող ջրի ակունքը:⁶⁹ Նման թեմա բնորոշ է նաև ոռւսական հեթիաթներին:⁷⁰ Հնդարիական առասպելներում ջրարգել գործառույթը կրում է Վրիտրա հրեշը:⁷¹

Հայկական ժողովրդական էպոսում, ինչպես վերն արդեն նշվեց, ջրարգել վրշապին սպանում է հերոսը, որից հետո անձրև է զալիս.

Գուրգ մի զարկեց վեր վիշապի գլխուն,
Վիշապ զինք թափ էտու,
Ակ բերնեն թռավ գնաց մեջ դաշտուն,
Վիշապ զինք թափ էտու. ջուր ելից թագը.⁷²

Հատկանշական է, որ վրշապի սպանությունը հայկական էպոսում ուղեկցվում է նաև կայծակ-ամպրոպներով, իսկ էպոսի հերոսների և ամպրոպամարտիկի միջև կապն ակնառու է և այդ մասին արդեն իյուսվել է Ս. Դարությունյանի աշխատանքում:⁷³

Այս թեման շատ բնորոշ է նաև աղբյուրների առաջացմանը վերաբերող հայկական ավանդություններին, որոնցում այն դրսնորվում է վարագուրված ձևով: Ըստ այդ գրուցների, աղբյուրն առաջանում է այն տեղում, որտեղ սպանվում է (ագռավի,⁷⁴ ծիու,⁷⁵ գավազանի⁷⁶ միջոցով) վնասաբեր օձը: Ավանդություններից մեկն էլ աղբյուրի առաջացման

⁶⁶ Վ. Վ. Իվանով, Վ. Հ. Տոլորով, Исследования в области славянских древностей, с. 30-60.

⁷⁰ Վ. Յ. Պրոպ, Исторические корни волшебной сказки, А., 1966.

⁷¹ Միֆի դրեմնեան Ինձաս, Մ., 1975, ս. 49-50. Վրիտրա անվանումը (Vritra) բառացիորեն նշանակում է արգելք, արգելափակոց: Ամպրոպամարտիկ ջրերի ակունք վրշապ կապը նկատելի է լիտվական և բելոռուսական աղբյուրներում: Տես Վ. Վ. Իվանով, Վ. Հ. Տոլորով, Ինձաս և տրանսֆորմացիա միֆոլոգических и фольклорных текстах, с. 55.

⁷² Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, էջ 83:

⁷³ Ա. Դարությունյան, նշվ. աշխ.:

⁷⁴ Ա. Ղանձանյան, Սվանդապատումներ, Եր., 1989, էջ. 97:

⁷⁵ Անդ, էջ 107:

⁷⁶ Անդ, էջ 100:

պատմությունը կապում է դարբնի պատրաստած մեխի հետ:⁷⁷ Դայկական տիեզերաբանական պատկերացումներին բնորոշ վերը հիշտակված դրվագները շատ նմանություններ ունեն վեդայական առասպելաբանության հետ: Վեդայական ամպրոպային աստված Ինդրայի գլխավոր հերոսական արարքների թվում է նաև Վրիթրա հրեշի սպանությունը, որը փակում է Երկնային ջրերի ակունքը:⁷⁸ Ի դեպ, Ինդրան Վրիթրային սպանում է Բրիհասպատիի (Բրահմանասպատի) օգնությամբ, որին ստեղծում է Տվաշտար Երկնային արարիչ վարպետը:⁷⁹ Նույն Տվաշտարը նաև Ինդրայի համար Երկաթե նիզակներ պատրաստողն է: Նկատենք նաև, որ «Ալասնա Ժոեր» էպոսի գլխավոր հերոսներից Եղրայրներ Մեծ Միերը, Զենով Օհանը և Ցռան Վերգոն համապատասխանաբար կրում են հետևյալ զորժառությունը չար ուժերի դեմ կովող և մարդկանց նրանցից պաշտպանողի (Մեծ Միեր), դարբնի և ամպրոպային ծայնային գործառույթ (Զենով Օհան), ջրերի հռվանավորության (Ցռան Վերգո):⁸⁰ Յ. Օրբելին Զենով Օհանի կերպարում, ըստ նրա հզոր, ամպրոպային ծայնային հատկանիշի, տեսնում է «Երկնային դարբնի գծերը», որը մուրճի հարվածներով խլացնում է Երկնակամարը, ինչպես իին գերմանների Թորը կամ Ռունարը:⁸¹ Կիսելով Յ. Օրբելու այս տեսակետը, կարելի է ասել, որ հայկական ժողովողական էպոսում Երեք Եղրայրները բաժանում են միմյանց միջև ամպրոպամարտիկին բնորոշ զորժառությունը միասին դառնալով նրա հավաքական կերպարը: Դայկական լեռնաշխարհում զտնված վիթխարի վիշապների արձանները, որոնք հիմնականում դրվում են ադրյուների ակունքներում, նույնպես կապված են Երաշտի և անծրսի նշված հնամենի պատկերացման հետ:⁸²

⁷⁷ А. Ганаланян, Армянские предания, Ереван, 1979, с. 78.

⁷⁸ *Rigveda*: мандалы I-IV, с. 376, 378, 382 (РВ, IV-16, IV-17, IV-1916). *Атхарваведа*: избранное, М., 1989, с. 281, 308 (AB III-13, IV-98).

⁷⁹ *Rigveda*, с. 263 (РВ, II-28).

⁸⁰ И. А. Орбелі. Армянский героический эпос, Ереван, 1956, с. 124.

⁸¹ *Անդ*.

⁸² Н. Я. Марр, Я. И. Смирнов, Вишапы, Труды Государственной Академии истории материальной культуры, 1931, Б. Б. Пиотровский, Вишапы. Каменные статуи

Այս առումով, խիստ ուշագրավ է նաև հայկական ժամագրից վերծանված «աղբյուր» նշանագրը, որն ուղեկցվում է օձավիշապին կլանող թռչնի, ամպրոպ-շամթ կողող աստվածամարդու և կայծակ խորհրդանշող այծի պատկերներով:⁸³ Այս նկարագիրն ունի անդրևաբերության, ջրի ակունքը վիշապից ազատելու իմաստ: Ժայռապատկերներում մտածողության այս հնամենի շերտը մեզ ավելի մաքուր է հասել, առանց հետագա պատմական երանգավորումների և ջրի ակունքի ու վիշապամարտի կապն այստեղ ավելի ակնհայտ է:

Տիեզերքի և բնական երևույթների հայկական պատկերացումներին բնորոշ է նաև ամպրոպի, կայծակի և Երկնային Երկաթի միջև փոխկապվածությունը: Ըստ այդ պատկերացումների, կայծակը Երկնքից ընկնում է պողպատի կտորի ձևով և իրվում հողի մեջ⁸⁴ կամ կայծակը մի շիկացած Երկաթ է, որը շանթահարում է հողը:⁸⁵ Սի այլ դեպքում էլ Երկնքից պողպատ է թափվում վիշապի դեմ կովելիս:⁸⁶ Կայծակը հետ կապված մի բացատրության համաձայն այն առաջանում է, երբ հրեշտակները Երկնքում ջիլիթ են խաղում և ձեռքի ջիլիթներով խփում սատանաներին:⁸⁷ Եթե այդ ժամանակ Երկնքից ընկած Երկաթից գտնեն, ապա այն կարող է առողջացնել հիվանդիմ՝ Երկաթը նրա մոտ դնելու միջոցով:⁸⁸ Անդրանիդառնալով մի շարք ավանդապատումների, որոնք ժամանակային առումով համապատասխանում են քննարկվող ծեսի կիրառության հետ, կփորձենք վեր հանել բնության և տիեզերքի բացատրության այն թեմատիկ ամբողջականությունը, որը բնորոշ է հայկական ժողովիդական էպոսին և հնդ-

տու և գործ Արմենս, А., 1939. *Մ. Արելյան*, նշվ. աշխ.: Վիշապ արձաններին տրվում են տարրեր բացատրություններ և չնայած գոյություն ունեցող կարծիքների հակասությանը, ջրի և վիշապի արձանի լամալ շեշտվում է որպես վերջիններիս բնորոշ հատկանիշ: Այս առումով մեր կողմից կատարվող դիտարկումը նույնական կարող է վիշապներ հմաստարաներու օժանդակ միջոց ծառայել:

⁸³ Դ. Ա. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 36:

⁸⁴ Գ. Փ. Կիրսին, Կուլտ շելеза у кавказских народов, с. 69.

⁸⁵ *Տամ խե*.

⁸⁶ Հ. Հ. Ջումազիլ, Օսетинский эпос и мифология, с. 60. Ասենք նաև, որ նման պատկերացումներ տարածված են կովկասյան առ ժողովուրդների մեջ: *Տե՛ս տամ խե*, с. 80.

⁸⁷ Գ. Փ. Կիրսին, սկզբ. հ. 1, էջ 69-70.

⁸⁸ Ե. Լալայան, Երկեր, հ. 1, էջ 240:

⁸⁹ Անդ, էջ 240:

Եվրոպական լեզուն կրող ժողովուրդների առասպելական նտածողությանը: Ավանդապատուններից նեկունք այն նիշոցին, երբ Գրիգոր Տաթևացին ուզում է աղբյուրից ջուր խմել, նի օձ փորձուս է խայթել նրան: Սակայն ագռավը նկատուն է Երկնքից և քար գցելով օծիզլիին, սպանում⁹⁰ նրան, փրկելով Գրիգոր Տաթևացուն նահից: Այդ օրվանից աղբյուրը ստանուն է Ագռավի աղբյուր անունը:⁹¹ Մի այլ տարբերակուն ու ագռավը նետվուն է օձի առջև և զոհելով իրեն, փրկում Տաթևացուն:⁹² Այստեղ առկա է աղբյուրի ակունքի մոտ գտնվող վնասաբեր օձը և սրբագործված թռչունը: Աղբյուրին անուն տալը (նինչ այդ դեպքն աղբյուրն անուն չի ունեցել) համագոր է նոր աղբյուրի առաջացմանը:

Ըստ մի այլ ավանդապատնան, դարբինն ուժը ցույց տալու: Նպատակով իր պատրաստած մեխիր խրում է աղբյուրի մոտ գտնվող ժայռի մեջ: Դրանից հետո աղբյուրը ստանուն է Խելսով աղբյուր անվանումը:⁹³ Այստեղ նույնպես առկա է աղբյուր անվանակոչելու դրվագը, որը կարելի է դիտել աղբյուրի առաջացման համագոր:

Դարրնի Երկնային մուրճի և ջրերի ագատման միջև փոխկապակցվածության հանդիպում ենք նաև Ագարանգեղոսի Երկում նկարագրվող Գրիգոր Լուսավորիչի տեսիլում:⁹⁴

Ըստ այդ նկարագրության, Երկնքից մի ահավոր որոտի ծայն է լսվում, Երկինքը քացվում է և այնտեղից լուսի մեջ ողողված ներքև է սլանում մի հգոր ու ահեղ կերպարանք ծեռքին ոսկե մուրճ րունած:⁹⁵ Նա իջնում, «հասնում է Երկրի հատակին», իսկ հետո քաղաքի մեջտեղում իր մուրճով մի հգոր հարված է հասցնում գետնին: Դրանից ամրող այդ տարածքը հավասարվում և հարթվում է դաշտի տեսքությամբ: Այդ հարվածը հասնում է

դժոխս և այնտեղից սարսափելի ծայներ ու թնդյուններ են հնչում: Իսկ հետո «հորդաբուժ աղբյուր բիւց, հոսեց, ծավալվեց բոլոր դաշտերուն»: Ըստ տեսիլքի բացատրության, «որոտնան հնչող ծայն այն է, որ Աստծո ողորմության անձրևն է իջնում», իսկ «ահավոր ու շեղ այրը, ոսկի կրանք իր ծեռքին, հարվածեց սանդարամետին (դժոխսին), ապա դա Աստծո նախախնամությունն է, որ կործանեց և տապալեց մոլորությունը Երկրից»:⁹⁶ Ագարանգեղոսից քաղված այս դրվագում մուրճն ունի Երկնային պատկանելություն և օժտված է հրաշագործությամբ: Այդ է վկայում նաև նրա ոսկե լինելը: Այն կրում է մի հգոր այր, որը նույնպես ունի աստվածային հատկություններ: Նրա գալուստն ուղեկցվում է որոտով: Նա հալածում է դժոխքի ուժերին, Երկրի վրայից վերացնում մոլորությունը և կարգ ու կանոն հաստատում այնտեղ: Այս կերպարը շատ ակնառու գուգահեռներ ունի գերմանա-սկանդինավյան Թորի հետ⁹⁷ (հրաշագործ մուրճ, որոտ, չար ուժերի ղեն կրիվ) և հիշեցնում է հնդեվրոպական առասպելաբանության մեջ մեծ հեղինակություն ունեցող Երկնային դարբնին:⁹⁸ Սակայն ամենից հետաքրքիրն այն է, որ դժոխքին հասցված մուրճի մահացու հարվածից հետո աղբյուր է ժայթքում, որի ջուրը հրաշագործ հատկությամբ է օժտված: Նշենք նաև, որ Ագարանգեղոսի Երկում Երկնային այդ հերոսին տրված են նաև թռչունի՝ արծվի

⁹⁰ Սեղքերումն արված է բնագրի տեքստի որոշ կրզատումներով, որոնք, սակայն, չեն ազդում տեքստի իմաստային ամբողջականությանը:

⁹¹ Старшая Эдда. М.-Л. 1963, с. 53. Младшая Эдда. Л., 1970, с. 80. Э. Тайлор. Первобытная культура. М., 1989, с. 400. А. Я. Гуревич. Эдда и сага. М., 1979, с. 71-73. Ж. Дюмезиль. Верховные боги индоевропейцев, с. 139-140. Այդափիսին է նաև ֆինների Ուկկո աստծո կայծականքը մուրճը: Э. Тайлор, укаz. соч., с. 309-400. E.O.S. Turvill-Petra. Myth and Religion of the North. The Religion of Ancient Scandinavia, L., 1964, p. 63.

⁹² Սուրբ չարփական հատկությամբ է օժտված նաև կովկասյան մողովուրդների ավանդություններում: Տես C.T. Званба. Абхазские этнографические эпюды. Сухуми, 1982, с.35. Н.С.Джанашия. укаz. соч., с. 71. И.В.Аджинаджали. укаz. соч., с. 238. В.Г.Ардзинба. К историю культуры хелеза и кузнецкого ремесла, с. 289. О.Х. Бгахба. По следам кузнеца Айнара. Сухуми, 1982, с. 56

⁹³ Այդափիսի աստվածային դարրիններ են օսերի Կուրդալագոնն, որի եռոմեական Կուլկան դարբնի ազգակցության մասին կարծիք կա հայտնված: В.И. Абасов. Дохристоанскская религия алан. М., 1960, с. 7.. հուլյերի Ղեփեստոսը. Վյոլանդը Էդրաններում և այլք:

⁹⁴ A. T. Ղանալանյան, սկզբ. սույն, էջ 78:

⁹⁵ Ագարանգեղոս, էջ 413-427:

Ա. Ղանալանյանի բերած մի ավանդապատումում այդ կերպարուն թրիստոսն է: Տես Ա. Ղանալանյան, նշվ. աշխ., էջ 223:

հատկանիշներ: Նա Երկնքից ներքև է սլանում որպես արծիվ: Ինչպես և առաջին ավանդապատումում, ագռավը Երկնքից ընկնելով, փրկում է Գրիգոր Տաթևացուն:

Մորված ուղղահայաց սյունակները նշում են դրվագների իմաստային համապատասխանությունը:

Գծապատկերում մեզ համար առավել հե-

Գծապատկեր 1

| 1 | 2 | 3 | 4 |
|--|--------------------------------|----------------------|------------------------|
| ա. հրեշտակները ջիլիթով խփում են սատանաներին | Երկնքից ընկնուն կիզայալ Երկարը | Խրվում է գետնի մեջ | առողջացնում է հիվանդին |
| բ. վոշապի դեմ կռիվ | Երկնքից թափվում է պողպատ | - | - |
| գ. ամպրոպ | Երկնքից ընկնող պողպատ | Խրվում է հողի մեջ | - |
| դ. ղարբինը հարվածում է ժայռին (աղբյուրի ակն) | Ղարբնի պատրաստած մեխս | Խրվում է ժայռի մեջ | աղբյուր է գոյանում |
| ե. ագռավը քար է նետում | Ագռավո նետած քար | Սպանում է օձին | աղբյուր է գոյանում |
| Էպոս. հերոսը կռվում է վիշապի դեմ | Գուրզի կամ թբի հարվածներ | Սպանում է վիշապին | աղբյուր է գալիս |
| Տեսիլք. հերոսն իջնում է Երկնքից ծեռքին մուրճ | Մուրճի հարված | Հարվածում է դժոխիքին | աղբյուր է ժայթքում |

Այժմ կփորձենք վերը բերված բնական երևույթները և տիեզերը բացատրող ավանդապատումները դրվագելու միջոցով, գտնել դրանք իրար հետ կապող ընդհանրությունները:

ա) Երկնքում հրեշտակները ջիլիթով իւփում են սատանաներին (1), որը մի կիզայալ Երկար է (2), որ Երկնքից ընկնելով՝ խրվում է գետնի մեջ (3): Այդ Երկարը առողջացնում է հիվանդներին (4):

բ) Վիշապի դեմ կռվելիս (1) Երկնքից պողպատ է թափվում (2):

գ) Ամպրոպի (1) ժամանակ Երկնքից պողպատ է ընկնում (2) և խըվում հողի մեջ (3),

դ) Ղարբնի պատրաստած մեխս (2) խրվում է ժայռի մեջ (3) և աղբյուր է ժայթքում (4):

ե) Ագռավը Երկնքից քար է գցում (2), որը սպանում է օձին (3), որի արդյունքում աղբյուր է առաջանում (4):

Եթե տանք վերը բերվածի սիեմատիկ պատկերը, ավելացնելով դրան ժողովրդական էպոսում անծրկի հետ կապված սյոււծն և Ագաթանգեղոսից քաղված վերը բերված դրվագը, ապա կստանանք հետևյալ գծապատկերը.

Չորիգոնական՝ տառերով նշված շարքերում տրված են թեմաներԸ ըստ ղրվագային հաջորդականության, իսկ ըստ համարների

տաքրքիրը «ոյ» հորգոնականն է, քանի որ կենտրոնական գործող անձը ղարբինն է: Գծապետկերի համատեքստում այն կարելի է մեկնարամել հետևյալ կերպ՝ ղարբինն սպանում է վրշապին ժայռին մեխսով հարվածելու միջոցով (1) (հայոց և հնդեվրոպական ժողովրդերին բնորոշ է մի պատկերացում ևս՝ կայծակը հաճախ է հարվածում ժայռերին և քարերին, որոնց տակ թաքնվում է կարգահավաք վրշապը):⁹⁹ Չայերն այդպիսի քարերը սպանում են):¹⁰⁰ Նրա պատրաստած մեխսը կայծակի հատկություն ունի, որը որպես Երկնային շիկացած պողպատ, օժտված է իրաշագործ գենքի հատկությամբ (2) և կարող է հատել քար, Երկար և այլը (3): Արդյունքում բացվում է Երկնային աղբյուրի ակունքը և անձրև գալիս (4):¹⁰¹ Էպոսում հերոսի ղարբնային

⁹⁹ В.В. Иванов, В.Н. Топоров, указ. соч., 4-180. В.Г. Арадзинба, Римуալы и мифы древней Анатолии, с. 97.

¹⁰⁰ Ե.Լապայան, Երկեր, հ. 2, էջ 417:

¹⁰¹ Չամաշիարիային ջրերի ակունքի տեղադրումը Երկնքում Տիեզերական ծառի հարլանությամբ բնորոշ է և «Եղիա»-ներին և «Վեղիա»-ներին, նաև վրացական ավանդություններին: Е.В. Вирсалиձե, «Грузинские народные предания и легенды», М., 1976, с. 50. Տես Ե. Սելեսինսկին Երկնային ջրերի հակադրությունը Երկրային դիտում է որպես կոսմոսի հակադրությունը քառսկի: Е.М. Мелетинский, «Скандинавская мифология как система», Труды по знаковым системам, т.

հատկանիշներին վերաբերող կարծիքն ընդունելու դեպքուն, գծապատկերի հիման վրա վերը ներկայացված եղահանգումն ավելի համոզիչ է դառնում: Այսինքն դարբնի մեխով ժայռին հարվածելն իմաստաբանորեն և նշանային առումով նույնացվելով ամպրոպի կամ վիշապի դեմ կովի հետ, հիմք է տալիս նրան կերպարում տեսնել ամպրոպամարտիկի հատկանիշներ: ¹⁰² Ի դեպ, հայոց ծիսական մտածողության մեջ դարբնի նման գործառույթներ են բացահայտվել հարսանեկան արարողության և երաժշտական զորժիքների իմաստաբանության հետ կապված մի ժեսուս ևս, որտեղ ամպրոպի և կայծակի խորհրդանիշ են ներկայացված թբուկին կայծականախչ փայտիկի հարվածները և գրւոնայի ձայնը: ¹⁰³ Վերն ասվածը գծապատկերի «տեսիլք»-հօրիզոնականի հետ համադրելով, կարելի է ասել, որ որոտի միջոցին երկնքից իջնող աստվածային կերպարանքը և դարբինը, որոնց արարքի վերջնական արյունքն աղբյուրի առաջացումն է, անձնավորում են միևնույն առասպելական էակին, որը սպանում է ջրարգել վիշապին, ազատում երկնային ջրերի ակունքը և մարդկանց փրկում երաշտից:

մուրճ-ամպրոպ, դարբին, վիշապ, ակունք (անձրև) հարաբերություններում, որն էլ բացահայտում է նաև դարբին-անձրև կապը:

Փորձենք բանահյուսական նյութի հիմամբ արված պարզաբանումները գուգորդել ծեսի հետ. գծապատկերում ներառելով դարբնոցի հետ կապված անձրևաբեր ծեսը. ժողովրդական եպոսը. «Մեխի աղբյուրի» ավանդությունը և Ագաթանգեղոսի երկից քաղված Գրիգոր Լուսավորչի տեսիլքի դրվագը:

Բոլոր չորս հորիզոնականում էլ 4-րդ սյունակը գործողության արյունքը, անձրևն է կամ աղբյուրի առաջացումը: Ծեսում վիշապի սպանությունը ներկայացնող սյունակում որպես խորհրդանշանային գործողություն դիտվում է զնոյանին մուրճով հարվածնելը, իսկ մուրճի հարվածը պարզապես դիտվում է որպես վիշապի դեմ կովելիս ամպրոպային գենքի հարվածին համազոր: Իսկ այս ամենն ընդգրկող կրանահարության ծիսական գործողությունը դիտվում է որպես վիշապամարտը խորհրդանշող: Վայոց ծորից հավաքած դաշտային նյութում ունենք գնդանի կոճղի (քրուկ) հետ կապված մի հետաքրքիր սովորույթ: Ըստ դրա, զնոյանի տակ դրվող կոճղն

Գծապատկեր 2

| | 1 | 2 | 3 | 4 |
|---------------------|--------------------------------------|--------------------------|----------------------|---------------------|
| Ծես | Դարբնի կոանահարություն | մուրճի հարված | հարվածում է զնոյանին | անձրևն է սպասվում |
| Էպոս | Ներոսի կոիվը վիշապի հետ | գորգի կամ թրի հարվածներ | սպանում է վիշապին | անձրևն է սպասվում |
| Ավանդություն | Դարբնին մեխով հարվածում է ժայռին | դարբնի կոված մեխի հարված | խրվում և քարի մեջ | աղբյուր և առաջանում |
| Տեսիլք | հերոսն իջնում է երկնքից ծեռքին մուրճ | մուրճի հարված | հարվածում և դժոխքին | աղբյուր և ժայթքում |

Այսպիսով, վերն ասվածից պարզ դարձավ, թե ի՞նչ կապ կա դարբին-ամպրոպամարտիկ,

ընտրված էր այնպիսի ծառատեսակից, որին կայծակը հաճախ է խփում: ¹⁰⁴

Պարզենք, թե ինչը կարող է կապել գնդանը կայծակի հետ: Դրա համար անհրաժեշտ է, նախ, անդրադառնալ դրանցից յուրաքանչյուրին, գտնելու երկուսի հաճար ընդհանուր և կապող այն օղակը, որի հիմքի վրա կառուցվել է սովորությի վերը նկարագրած պատկերը:

VII, Տարբу, 1975, ս. 50. Նման մոտեցումը խոր արմատներ ունի նևան և անմաշլատրիային մշակույթում, տես *Πλατυκήκιս Μουσείον* և *Τόρα: Βρεύσαστ*, ս. 25-27. *Новая толковая Библия*, թ. 1, ս. 265-266.* E.O.S. Turvil-Petra, op. cit., p. 75:

¹⁰² Հովհաննեսի աստվածային դարբին Յեփիեստոսը նույնային շիկագում լուսական է քափում իր քշնամի քառոտիկ ուժերի վրա: *A.A. Տախո-Գոլս*, սկզ. սու. ս. 88. *Քրոնիկա*, սկզ. սու. ս. 97.

¹⁰³ *Ա.Ա.Աբրամյան, Բ.Վ.Պուկուրյան*, սկզ. սու. ս. 180.

ա) Դարբնոցի սրբազն կյանքում գնդանը և Տիեզերական ծառը խորհրդանշողը նույնական են:

բ) Կայծակը Երկնային ուժերի գենքն է, կարգախափան, չար ուժերի դեմ պայքարելիս: Այն Երկնքից թափվող շիկացած պողպատ է, որով իրեշտակաները խփում են սատանաներին (Վրշապ):

գ) Սատանաները (Վրշապ) թաքնվում են ծառերի կամ քարերի տակ, որոնց հաճախ նաև խփում է կայծակը:¹⁰⁵

դ) Դարբնոցում գնդանի կոճղի (քոթուկի) համար կիրառվում է ծառատեսակ, հատկապես կաղնի, որին կայծակը հաճախ է խփում:

Տիեզերական ծառի (գնդանի) (ա) մոտ տեղի է ունենում սիեզերապահպան կոիվը: Երկնային ուժերն այդտեղ կայծակ են թափում քառսուկ ուժերի վրա (թ), վերջիններս գտնվում են Տիեզերական ծառի ստորոտում (զ): Զնդանի եռամաս կառուցվածքում Երկարեն մասը խորհրդանշում է Երկնային միջավայրը: Ըստ այդ կառուցվածքի, դարբինը և նրա մուրճը նույնպես պատկանում են այդ միջավայրին: Զնդանի կոճղը ներկայացնում է մարդկանց ու Երկրային միջավայրը: Կոճղի ստորգետնյա հողի մեջ թաղված մասը քառտիկ ուժերի վեշապի կամ սատանաների միջավայրն է:

Զնդանի եռամասն կառուցվածքում վերը նշված Երեք կետերը (ա,թ,զ) արտահայտվում են հետևյալ կերպ: Երկնային ուժերը ներկայացնում են դարբինը և մուրճը: Կայծակը, որպես Երկնային ուժերի գենք, շիկացած պողպատի ծևով գտնվում է դարբին և նրա մուրճի տնօրինության տակ,¹⁰⁶ որով նա Երկնային

ուլորտից (գնդանի Երկարեն մասում կռանահարելու միջոցով) խփում է կոճղի տակ թաքնված չար ուժերին: Այսպիսով, դ) կետում նշված կոճղի ծառատեսակի ընտրության պայմանը (հաճախակի կայծակնահարում) անհրաժեշտ է դարբնոցի սրբազն կյանքում կառուցվածքային ամբողջականության պահպանման համար, առանց որի այդ կառուցվածքը որպես համակարգ կկորցնի իր գործունակությունը: Այս ֆոնի վրա դիտելով կռանահարությամբ անձրևաբեր ծեսը, դարբնի ծիսական մրցահարությունը գնդանին կարելի է մեկնել որպես քառտիկ ուժերի դեմ դարբին-ամպրոպամարտիկի ամպրոպային կռիվ: Առ համապատասխանում է ծեսում գծապատկեր 2-ի միջոցով բացահայտված դարբնի սրբազն գուրծառությին և ավելի է ամրապնդում ծեսի մեր մեկնարանությունը:¹⁰⁷

3. Դարբինը և «շղթայված հերոսը» ծիսական համակարգում

Դայոց մեջ շղթայված հերոսի կերպարը տարածվում է մի շաք առասպելական հերոսների վրա: Դրանցից առավել հայտնին շղթայված Արտավագրի առասպելն է: Ժայռում փակված նման մեկ այլ հերոս Փոքր Միերն է: Դայոց ավանդություններում շղթայվածի առասպելա-ծիսական գծերը տարածվում են նաև Վիշապ առասպելական ուժի և Քրիստոսի վրա: Շղթայված հերոսի, հատկապես Արտավագրի և Փոքր Միերի կերպարներն ավելի քան հարյուր տարի բանագիտության ուսումնասիրության առարկան են:

¹⁰⁴ Ա.Թաղևոյան, ՂԱԱ, թ. 1, էջ 34:

¹⁰⁵ Կայծակի ժամանակ սատանաները փորձում են թաքնվել մարդկանց թվի տակ և եթե մարդուկ չխաչակնքեն, կայծակը նրանց կիվիի: Տես Ե.Լալայան, հ. 1, էջ 240: Նման սովորույթ ունեն նաև լիպվումները:

¹⁰⁶ Այս առումով հետաքրքիր է «մուրճ» բառի հնդեվրոպական ուժ արմատի ստուգաբանությունը: Մի շաք լեզուներում այն ընկած է՝ մուրճ, կայծակ և գենք բառերի հիմքում: Քին սլավ. *m̥l̥at̥us մուրճ, լատին. malleus մուրճ, հին հուն. ῥηγιλτίρ ամպրոսի թոր աստծոն մուրճ, հին սլավ. *m̥l̥om̥ij կայծակ. mealde կայծակ, հեթ. mallati գենք: Տես T.B. Գամքրելաձե, Բ.Վ. Խանօս, յեզ. սու., շ. 75. Կարելի է ասել, որ հնդեվրոպական լեզվամտածողությամբ Հնուրին տրվել է ամպրոսի աստծոն գենքի նշանակություն: Դա հատկապես ցայտում է դրսնորություն թոր աստծոն Melnīk մուրճի և ոռւսերեն մօլհս կայծակ բառերի համեմատությամբ:

¹⁰⁷ Զի կարելի ուշադրության չափնել մի Երևույթ, որին համեմիւլ ենք դարբնոցային մշակույթը աչքի ընկնող վայոցձորյան մի շաք գյուղեղում: Դա դարբնոցի և գյուղի Սեծ կամ Սլուրը աղբյուրի՝ գյուղի կենտրոնում հարևանցիւթյունն է, որը մեր կողմից առաջարկվող համակարգում կարելի է դիտել որսիս աղբյուրին դարբնոցի հովանավորության դրսնորություն: Մալիշկայի հին գյուղատեղում դարբնոցի անմիջական հարևանությամբ գտնվել է Սլուրը համարվող Յոթնադրյուրը, Մարտիրոսի հին գյուղատեղում դարբնոցը և Սեծ աղբյուրը գտնվել են Եկեղեցու հարևանությամբ գյուղի կենտրոնում: Նույն կարելի է ասել նաև Սղավնածորը և Արեմի գյուղերի դարբնոցների վերաբերյալ: Նկատենք նաև, որ սույն պարագան հատկապես ընդգծում էին գյուղացիները: Զնայած այն բանին, որ Սղավնածորը և Արեմի գյուղերում աղբյուրները մի փոքր հեռու էին դարբնոցից, սակայն գյուղացիները դարբնոցի տեղը բացատրելիս, խոսքում նշում են «Սեծ աղբյուրի մոտ», «կենտրոնում»: Ա.Թաղևոյան, ՂԱԱ, թ. 1, էջ 3; թ. 2, էջ 9, 51-52; թ. 3, էջ 58:

Հայ¹⁰⁸ և այլազգի¹⁰⁹ գիտնականներն այն դիտարկել են սի շարք տեսանկյուններից, որոնցից յուրաքանչյուրը լրացրել և հառստացրել է, այդ առասպելական կերպարի ուսումնասիրությունը:

Եթե բանագիտական տեսանկյունից այս խնդիրը գտնվում է ուսումնասիրության որոշակի աստիճանուն. ապա ազգագրական առունով շղթայված հերոսի կերպարն ըստ արժանվույն չի հետագութվել: Գրավոր աղյուրներուն և նույնիսկ մինչև մեր օրերը պահպանված ավանդություններում թաքնված են հնամենի բանաձևեր, որոնց իմաստը թեև գիտակցական մակարդակում կորսվել է, սակայն պահպանված է խորհրդանշաններում: Ազգագրական նման նյութերի ուսումնասիրությունը և դրանց իմաստաբանումը ճշգրտող նշանակություն կարող է ունենալ բանահյուսական նյութի վերլուծության համար: Այս առունով չափազանց արժեքավոր կարող է լինել դարբնի ծիսական կերպարի բացահյուսունը, որը սակայն, դուրս է մնացել ուշադրությունից հիմնականում միայն շղթայվածի կերպարի վրա կենտրոնացվածության պատճառով:

Կցանկանայինք մի փոքր փոփոխություն մտցնել շղթայվածի առասպելի նկատմամբ մոտուցման մեջ և այն ուսումնասիրել ծեսի տեսանկյունից, կենտրոնական կերպար ունենալով ծեսի հերոսին կոանահարող դարբնին: Այս իննիրը նպատակահարմար է իրականացնել ծիսական հերոս-առասպելական հերոս կամ դարբնի-շղթայված հերոս հակառադրության մեջ, միևնույն ժամանակ պարզաբանելով նրանց ծիսական հակառադրության պատճառը և այն արտահայտող խորհրդանշանային միջոցները

Այս առունով անհրաժեշտություն է առաջանալ նշված հարցերը պարզաբանել շղթայվածի առասպելի տարբեր շերտերում: Այդ շերտերի բացահյուսումը մենք կփորձնենք իրականացնել: Ըույնաեւ ելնելով դարբին-շղթայված հերոս հարաբերության վերլուծությունից: Առասպելա-ծիսական նման երկողմանի հարաբերությունը նպատակահարմար է նրանով, որ կողմերից յուրաքանչյուրը ուսումնասիրվում է որոշակի համատեքստում: Կերպարների ուսումնասիրությունը որոշակի հաջողացնում է կապերը նրանց միջև: Իսկ դա էլ հնարավոր է դարձնում հերոսների կերպարներն ամբողջացնող հատկանիշների բացահյուսումը: Այսպիսով, շղթայված հերոսի հետ կապված դարբնոցային ծեսին մեր մոտեցումը ունի դիախրոն և սինխրոն կողմեր, որը համապատասխանում է մեր նպատակին՝ բացահյուսել շղթայված հերոսի առասպելականական շերտերը և դրանցում դարբնի կերպարի տեղը ու դերը միևնույն ժամանակ ըստ շերտերի ցույց տալով հերոսների (շղթայվածի ու դարբնի) հատկանիշների և հարաբերության մեջ կատարված փոփոխությունները:

Սույն իննիրներն իրականացնելու համար օգտվել ենք գրավոր աղյուրների միջոցով մեզ հասած ծեսի և առասպելի մի շարք Մովսես Խորենացու¹¹⁰ Եզնիկ Կողբացու,¹¹¹ Վարդան Վարդապետի, Վանական Վարդապետի, Կիրակոս Արևելցու, Գրիգոր Անավարդեցու տարբերակներից, որոնց մի մասը ժողովել է Գրիգոր Խլաթեցին «Յայսմավուրքում»:¹¹² Նշենք նաև, որ պատմիչներից ժառանգված ծեսի վկայություններից առանձին տարրեր պահպանվել են ժողովրդի մեջ մինչև օրս: Այն ուշադրության է արժանացրել Աս. Լիսիցյանը.¹¹³ 1980-ականներին Վայոց ծոր կատարած գիտարշավների ժամանակ տարբերակներ են գրանցվել նաև մեր կողմից:¹¹⁴

Շղթայվածի կերպարը առասպելի Մովսես Խորենացու հիշատակած տարբերակում: Ար-

¹⁰⁸ Հ. Էմին, սկզբ. սույն, համար 76-77. Գ. Խալատյան, սկզբ. սույն, համար 314-326; համար 73-77. Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 35: Ա. Արենյան, Յայ ժողովողական առասպելը լուսաբանելու լուրջանացու Յայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1899, էջ 325-379: Նույնը, Երևան, հ. Ա. Երևան, 1966, էջ 141-153: Թ. Ավելարեցյան, Միհրը հայոց մեջ, Վիեննա, 1929, էջ 62-63, 65: Ա. Դարրությունյան, նշվ. աշխ., էջ 84: Դ. Ռովհամմիսյան, Յայ հին դրաման և նրա սլավանաձևերը, Երևան, 1990, էջ 25-102:

¹⁰⁹ Բ. Փ. Միլլեր, Կավազսկие предания о великанах прикованных к горам. — Журнал министерства народного просвещения, 1966, №1, с. 101-106. Մ. Ա. Կոկովան, Народный грузинский эпос о прикованном Амирану. М., 1966, с. 16, 30-31.

¹¹⁰ Մովսես. Խորենացի. Յայոց պատմություն. էջ 232-233:

¹¹¹ Եզնիկ Կողբացի. Եղծ աղանդոց. էջ 80-81:

¹¹² Գրիգոր Խլաթեցու ժողոված տարբերակները ներկայացված են Գ. Խալատյանի նշված աշխատության մեջ Գ. Խալատյան, սկզբ. աշխ., էջ 74:

¹¹³ Աս. Լիսիցյան, նշվ. աշխ., էջ 166:

¹¹⁴ Ա. Թաղնուսյան. ԴԱՆ, թ. 3, էջ 54, 59:

տավագդին վերաբերող տարբերակներից մեկում, որը մեզ է հասել Մովսես Խորենացու երկի միջոցով, հերոսը ներկայացված է երկարորեն բացասական և դրական: Բացասական գծերը դրսերպում են Արտավագդի վիշապային հատկանիշների մեջ: Նախ նշվում է, որ Արտավագդին վիշապագունք գոլանալով նրա տեղը դև են դնում:¹¹⁵ Նա նաև գտնվում է վիշապ Աժդահակի կանանց կախարդանքի տակ, որին տեղյակ էր նաև նրա հայր Արտաշեսը:¹¹⁶ Արտավագդին շղթայողները քաջքերն են: Քաջը ոգիներին տրվում են բարի և չար հատկանիշներ, ոմանց կողմից նրանք նույնացվում են չարքի հետ: Մովսես Խորենացու վկայաբերված առասպելի համատեքստում քաջըն ունի դրական իմաստ: Ան համապատասխանում է բարի բուն նշանակությանը: Քաջը քաջի հոգնակին է և հայերի մեջ գործածվող չարքին (չարի հոգնակի) հակադիր՝ դրական ուժի իմաստ ունի:¹¹⁷ Արտավագդի ազատվելը շղթաներից հղի է աշխարհը կործանելու վտանգով, մի գործառույթ, ինչը հատուկ է տիեզերակործան չար հրեշ-Վիշապի կերպարին:¹¹⁸ Նա նախանձում է հոր փառքին, այսինքն թագավորի փառքին: Թագավորը կուելով արեգակնային խորհրդանիշներ թագը և ծիրանին, կիում է նաև արեգակնափայլ տիտրոսը, կարևորությամբ նույնանալով արեգակի հետ:¹¹⁹ Արտավագդի նախանձն, այսպիսով, սովորական նախանձ չէ: Ան վտանգավոր է դառնում նաև ժողովորի համար: Իսկ քանի որ առասպելը ստոշոնող ժողովուրդն իրեն դնում է աշխարհի կենտրոնում, նույնացնելով աշխարհն ու հայրենի երկիրը,¹²⁰ Արտավագդը վտանգավոր ուժ է դառնում ողջ աշխարհի համար: Կարծում ենք, որ սա այն պատճառամերից է, որի համաձայն առասպե-

լում Արտավագդի ազատվելը վտանգավոր է դիտվում աշխարհի համար: Մովսես Խորենացու երկում Արտավագդի կերպարը երկակի դիտելուն հիմք է ծառայում նրա կրիվը վիշապագունների դեմ և վերջիններիս գլխավորին սպանելը. ինչի պատճառով էլ Արտավագդին վերագրվիմ է վիշապասպան հատկանիշներ:¹²¹ Սակայն վիշապների դեմ Արտավագդի պայքարն իր նպատակով էականորեն տարբերվում է մյուս վիշապասպան հերոսների պայքարից: Վերջիններս կրվում են վիշապի չար էության դեմ, որպեսզի փրկեն տիեզերական արժեքները: Արտավագդի պայքարը վիշապների դեմ ավարտվում է նրանց կալվածքների նվաճմամբ: Փաստորեն, Արտավագդը սպանելով վիշապագուններին և հիմնավորվելով նրանց զբաղեցրած միջավայրում, փոխարինում է նրանց: Արտավագդի այս գիծը դրսերպում է նաև վիշապների և հայոց թագավոր Արտաշեսի թշնամության սյուժեում: Արտավագդը սպանելով Արտաշեսի թշնամի վիշապների գլխավոր Արգավանին, ինքն է դառնում իր հոր հակառակորդը, ուստի և արժանանում է հոր անեծքին, ինչն էլ դառնում է Մասիսի մեջ նրա շղթայման պատճառը: Տեղին կլինի նկատել նաև, որ Արտավագդը Ասախի ստորոտի վիշապներին սպանելուց հետո, երբ հաստատվում և ապրում է այնտեղ՝ իր կառուցած տաճարում, դեռ ոչինչ նրա դեմ չի ծեռարկվում, քանի որ նա գտնվում է իր միջավայրում և չի փորձում, դուրս գալով այնտեղից, խախտել կարգը: Նա շղթայվում է, երբ փորձում է նման քայլ կատարել: Այսինքն՝ երբ փորձում է, փոխարինելով հորը, թագավորել:

Ըստ Մովսես Խորենացու հադորդած պամուռթյան «Վիշապ» որդու և թագավոր հոր հակամարտության¹²² մեջ, դարրնի դիրքորո-

¹¹⁵ Մովսես Խորենացի, Դայոց պատմություն, էջ 232-233:

¹¹⁶ Անդ:

¹¹⁷ Դր. Ամառյան, հ. IV, էջ 554-555:

¹¹⁸ Զուգահեռ տես Լոկիի կերպարում գերմանա-սկանդինավյան առասպելարամության մեջ Ե.Օ.Ս. *Turville-Petra*, op.cit., pp. 28-33.

¹¹⁹ Դայերից քացի այս երևույթը բնորոշ է նաև այլ ժողովուրդների, տես՝ H.A. and H. Frankfort, op. cit., pp. 34-35. A.M. *Hocart*, Kingship, London, 1927. A.M. *Hocart*, Flying Trough the Air – The Life giving Myth and Other essays, London, 1970, pp. 28-33.

¹²⁰ Միկրոկոսմ-մակրոկոսմ այլաձևան մասին տես. M. *Eliade*, Occultism, witchcraft and cultural fashions, pp. 21-27

¹²¹ Մ. Արենյան, Երկեր, հ. Ա, էջ 101:

¹²² Հոր և որդու կռվի թեման տարածված առասպելական մոտիվ է իւլա Մուլրոմեցի որդին դուրս է գալիս իր հոր դեմ, տես Բ.Ի. *Путинов*, Застава богатырская (к структуре билингвого пространства) – Труды по знаковым системам, т. VII, Тармут, 1975, сс. 52, 59: Պերկունասը երբ զայրանում է իր ինը որդիների վրա, հետապնդում և անհօռում է նրանց: Այդ ժամանակ փոթորկի և կայծակ է սկսվում: Տես В.И. *Топоров*, К реконструкции индоевропейского ритуала и ритуально-поэтических формул (на материалах заговоров) – Труды по знаковым системам, т. IV,

շրջու հստակորեն թագավորի կողմն է:¹²³ Արտավագդին գերողները քաջքերն են, իսկ բն ո՞վ է նրան շղթայող հերոսը, պաղո չէ: Սակայն դարբինների կողմից Արտավագդի շղթաներն աճրացնելու պատճահոր հիշատակած ժեսը կարող է որոշակի եղանակացության հիմք ծառայել: Թանի որ ժեսն ինքնին, որպես սրբազն գործողություն, Վերարտադրում կամ կրկնում է նախասկզբնական ժամանակուն կատարված և առասպելականացված գործողությունը, ապա ծիսական գործողությունը և առասպելական գործողությունը թեմատիկ առումով կարող են նույնական լինել:¹²⁴ Եթե ունենք առասպելը կրկնող ժեսը, ապա կարելի է այն օգտագործել առասպելի այս կամ այն բաց դրվագը Վերականգնելու համար: Այսպիսով, թե՛ առասպելում, թե ժեսում բացասական կերպարվ Արտավագդն է, գործողությունը նրա դեմ պայքարն ու նրան շղթայելը, գործողությունն իրականացնող դրական ուժն առասպելում քաջքերն են, ժեսում դարբինը: Առասպելում ունենք բարի ուժեր, որոնք բռնում են վիշապ-Արտավագդին, բայց թե ով է նրան գամում կամ շղթայում և միշտ հսկում նրա այդ վիճակը, բացակայում է: Առասպելի այս հատվածում ունենալով ժեսի հետ դրվագային համապատասխանությունը, կարելի է որպես քաջքերի պայքարը գլխավորողի և Վերջնական ավարտին հասցնող հերոս դիմուել դարբնին:

Նման դիտարկումն ունի բազմաթիվ գուղահեռներ մշակութային այն միջավայրում, որտեղ տարածված է շղթայված հերոսի առասպելը: Վրացիների,¹²⁵ պարսիկների,¹²⁶ գեր-

մանացիների.¹²⁵ Իուների մեջ՝¹²⁶ դարբինն առասպելական այն հերոսն է, որը գլխավորում է կամ ինքն է իրականացնում գերելու և շղթայելու գործողությունը: Նույնը կարելի է տեսնել նաև կովկապան որու ժողովուրդների ավանդություններում:¹²⁷

Ծղթայվածի կերպարը առասպելի միջնադարյան պատմիչների հիշատակած տարրերակներում: Որպեսզի մեր ամելիքն առավել համոզիչ դառնա, հարկ է հարցին մոտենալ առկա տարրերակները գուգահեռաբար քննարկելու միջոցով։ Մովսես Խորենացու թողած առասպելի և ծեսի հիշատակությանը չափազանց մոտ է Վանական Վարդապետի գրառածը։ Միայն ըստ Վերջինիս, Արտավագդին կապողներն «Աստվուածք» են, որոնք հորը բամբասելու համար զայրանում են Արտավագդի վրա և շղթայում նրան Մասիսի վրա։ Խևկ «Ղարբինները կունահարում են Նավասարդի նախօրեին նրա շղթաներն ամրացնելու նպատակով։¹³⁰

Կիրակոս Արևելցու ու Գրիգոր Անավարդեցու տարբերակները համարյա կրկնելով իրար, վկայում են, որ Արտավազդը՝ Արտաշեսի որդին, գաճված է ժայռին, որպեսզի աշխարհը չափերի: Եվ Նավասարդի օրը զարդինների կռանահարությունն ամրացնում է նրա մաշվող շղթաները, որոնք օր ու գիշեր լիգում են նրա սպիտակ և սև շները¹³¹:

Գրիգոր Խլաթեցու ժողոված մի այլ տարբերակում է մեզ հետաքրքրող հերոսը Ծիդարն է, հայոց Արտավազդ արքայի որդին: Նա հոր կողմից գրկվում է գահը ժառանգելու իրավունքից ինելագար լինելու պատճառով: Սակայն մի օր նա ըմբոստանում է հոր պատգամի դեմ, հայտարարելով իրեն թագավոր: Բայց որսի ժամանակ կամուրջն անցնելիս, նրա ծին իյրտնում և հեծյալին նետում է անդունդը: Եվ ասում են, թե աստվածներն են նրան պատժել ու շղթայել Մասիսի մեջ: Ամեն

Տարբե, 1969, ս. 30-31. Այդ թեմայի մասին տես նաև
MHM, ոլ. II, Մ., 1991, ս. 671:

¹²¹ Ομρρήση ἡ ρωμαϊκή μῆχος ουδανός καμι ουρβελής ε
τίτικαπική ουάκι ούερμαννο-ικανηγηνναψιανός μηδιαψιαρητιμ,
την ε *Α.Χούσλερ*, υκαζ. σογ., ε. 398:

¹²¹ Տեսական նման հոգերի շոր առավել հաճախ մանրեն տես *M. Eliade, Myth, dreams and Mysteries*, pp. 115-124. *В.Н. Топоров*, О ритуале. Введение в проблематику – Архаический ритуал в фольклорных и раппелитературных памятниках, М., 1989.

¹²⁵ М. Я. Чиковани, указ. соч. Е. Б. Вирсалаадзе, Грузинские народные предания и легенды, с. 100. В. Ф. Миллер, Осетинские этюды, ч. 1, М., 1881, сс. 58-71. Г. Ф. Чурсин, Культ железа у кавказских народов. С. 97.

¹²⁶ И.С. Брагинский, Из истории таджикской и персидской литературы. М., 1972, с. 251. В.Ф. Миллер, Кавказские предания о великанах прикованных к горам, с. 113.

¹²⁷ Старшая Элла, М-Л., 1963 с. 60. Младшая Элла, Л., 1970. сс. 52, 88. Е.О.С. Turvil-Petra, op.cit., р. 130.

¹²⁸ А.А. Тахо-Годи, указ. соч., с. 88. В.Ф. Миллер, Кавказские предания о великанах прикованных к горам, с. 114. Е. Charles, M.S. Man, op.cit., p. 58.

¹²⁰ В.Ф. Миллер, Кавказские предания о великанах прикованных к горам, сс. 101-102.

¹³⁰ Г.Халатянц. Указ. соч., с. 74.

131 ԱՐԴ, էջ 76:

տարվաս վերջին շղթաները բարակում են և եթե Շիդարն ազատվի. կկործանի աշխարհի: Ուստի բոլոր դարբինները Նավասաբրդի առաջին օրը երեք անգամ մրճահարում էին սալին, որպեսզի Շիդարի շղթաներն ամրանան:

Նշված տարբերակներում Արտավևզդը, իսկ մեկում Շիդարը շղթայված կամ գամված են ժայռին (Մասիսի մեջ): Գամվելու պատճառն, ըստ Վանական Կարդապետի հայր-թագավորին բանբաւելն է, «Շիդարի տարբերակում» նրա խելագարությունը և զահին տիրելու փորձը: Շղթաներից ագատվելու հետևանքը բոլոր տարբերակներում էլ կարող է աշխարհի կործանումը լինել: Արտավագդին սկզբնապես ժայռին շղթայողները կամ գամողներն աստվածներն են, իսկ ամեն տարի՝ Նավասարդին Արտավագդի թուկացող շղթաներն ամրացնողն ու նորոգողը դարբինները: Առաջին և վերջին տարբերակներում ինչպես և Մովսես Խորենացու Երկում, կա նաև որսի կամ որսորդության դրվագը: Արտավագդը կամ (Շիդարը) գերվում է որսի ժամանակ:¹³² Վանական Կարդապետի հիշատակած տարբերակում Արտավագդի րմբոստությունը, հակադրությունը թագավորին դրսկորվում է բամբասանքի ձևով: Նկատենք շղթայված հերոսին բնորոշ մի հատկանիշ և խելագարությունը: Վերջինս, ընդունված ժողովրդական բացատրությամբ, հասցնում են չար ուժերը՝ դեեր-չարքերը կամ վիշապները¹³³: Խելագարությունը վրա է հասնում այն ժամանակ, եթե վերջիններս «մտնում են մարդկանց մեջ» և այն բուժելու պայմանը չարը մարդու միջից դուրս մղելու մեջ է:¹³⁴ Այն ամենը, ինչ կատարում է խելագարված մարդը վերագրվում է

ոչ թե մարդուն, այլ նրա մեջ մտած չար ուժին: Ուստի խելագարը վտանգավոր է նաև հանրության համար: Պետք է ենթադրել, որ խելագարության նման ընկալում բնորոշ է նաև մեր քննարկած առասպելին: Արտավագդը կամ Շիդարը (Վերջինիս առիթով դա նույնիսկ շեշտվում է) չի կարող ժառանգել գահը խելագարության պատճառով, այսինքն որպես չար ուժի կրող և դրան ծառայող, քանի որ դա կարող է կործանարար լինել ամբողջ ժողովրդի համար: Իսկ եթե, այնուամենայնիվ, նա տիրում է գահին և թագավորի տիտղոսին, նրա դեմ դուրս են գալիս քաջերը կամ «Աստվուածք» (դարբնի ուղեկցությամբ), գերում և շղթայում են քարայրում՝ Մասիսի մեջ: Քաջերը կամ «Աստվուածք», որպես բարի տիեզերքի (մեր առասպելում որպես տիեզերքի մողել զործում է թագավորությունը) և մարդկանց պահապան ուժեր դիմագրավում են հակառակ իմաստ և գործառույթ կրող կործանարար ուժին: Առասպելի մեջբերած տարբերակներում, վերջինս արտահայտված է շղթայվածի ագատվելու հետևանքի նկարագրությամբ: Եթե նա ազատվի և դուրս գա ապա կկործանի աշխարհը: Այսինքն՝ բերված տարբերակներում, ինչպես և Մովսես Խորենացու հիշատակած տարբերակում, հերոսը կրում է տիեզերակործան վիշապին բնորոշ գործառույթ:

Արտավագդը շղթայված կամ գամված է Մասիսի քարայրներից մեկում: Մասիսը ըստ հայկական ժողովրդական պատկերացումների օճերի և վիշապների բնակատեղի է, հատկապես փոքր Ասախը:¹³⁵ Եթե դրան ավելացնենք նաև այն, որ քարայրները դիտվում են իրու վիշապի բույն կամ դեերի բնակատեղի, այսա իմանալով Արտավագդի վիշապային բնույթը, քարայրում նրա գամվելու պատճառը կարելի է բացատրել հենց դրանով: Նա որպես վիշապային, չար, կործանարար ուժ, պետք է գամված պահվի իր վիշապային միջավայրում: Հակառակ դեպքում կարող է թափանցել այլ մարդկանց կամ աստվածային միջավայրեր, խախտելով Տիեզերքի ներդաշնակ կարգը և վտանգ ստեղծել Տիեզերքի

¹³² Անդ, էջ 75-76:

¹³³ Վրացիների Ամիրանին նույնպես որսորդ է ու շատ տարբերակներում նաև որսորդի որոդի: Տես Ե.Բ. Վորովաձե, Գրյունցու օհոտհսկան մսիք և ուսուա, Մ., 1976, ս. 92, 94-95. Մ.Յ. Կոկոնան, յակա սու.

¹³⁴ Մ. Արենյան, Երկեր, հ. Ա, էջ 147:

¹³⁵ Այս երևույթը ահայիկ ձևով նկարագրվում է Նար Դոսի «Աեր քաղը» պատմվածքում: Նար Դոս, Երկեր, հ. 1, Երևան, 1968, էջ 36-41: Մարդու մարմնի մեջ հիվանդության ժամանակ մտնող և վիշապի կրկնակ դիտվող որդերը մարդու միջից դուրս են քշվում ամարոպային հերոսի կողմից: Դաճախ որպես գենք հիշատակվում է կուակը և երկար քենք ունեցող բռչունը: Վ.Ի. Տոլոսով, Կ քեկոնտրուկցիա սնդօւքրուույսկու բայումա և բայումա-ու-պօտմական ֆորմուլ (հա մատերաւ զագօրօնօ), ս. 24-30. Դրա լեզվարանական հիմքի մասին

տես Տ.Վ. Ղամկրելսաձե, Վ.Վ. Իվանով, Ինդօւքրուույսկու յազիք և սնդօւքրուույսկու, թ. 2, Երևան, 1984.

¹³⁶ Մ. Արենյան, Երկեր, հ. Ա, էջ 143:

տարածական կառուցվածքի համար: Նկատենք, որ Արտապազդը շղթայվուն է իր միջավայրը փոխելու փորձի համար և նորից վերադարձուն իր միջավայր:

Ժողովրդական բանահյուսության մեջ կան պատարիկներ, որոնցում ոչ միայն նկատվում է Արտավագդի վիշապային հատկանիշների արտահայտությունը, այլ նաև հակառակը վիշապների մասին պատկերացումներում հանդիպում են շղթայված հերոսին զուգահեռներ: Այդպիսին է վիշապների շղթայման ավանդությունը: Ըստ դրա, վիշապը հազար տարեկանում սարսափելի չափերի է հասնում, վտանգավոր դառնալով մարդկանց ու տիեզերի համար: Այդ ժամանակ հրեշտակները երկնքից իջնելով, շղթայում են վիշապին և բարձրացնում երկինք, ուր արեգակի կիզիչ հուրց մոխրացնում է նրանց:¹³⁷ Որոշ տարրերակների համաձայն էլ նա շղթայված կախված է երկնքի ու երկրի միջև և եթե գլուխն իջնեցնի երկրի վիա, այն կկործանվի:¹³⁸ Վիշապին երկինք բարձրացնելը և արևից այրվելը ուղևացվում է մեծ շառաչյունով: Եթե նշենք նաև, որ հայերն իրենց ավանդական ժողովիդական պատկերացումներում հրեշտակների հիմնական գենքերից մեկը համարում են մուրճը,¹³⁹ որով նրանք հարվածում են դժուրին, ապա հրեշտակների կողմից վիշապին և դարբնի կողմից Արտավագդին շղթայելը ծեռք ևն բերում ընդհանուր զժեր: Այդպիսի ընդհանրական զուգահեռ կարելի է գտնել նաև վիշապի և արևի հակադրության, առաջինի և երրորդից պատմվելու դբվագի և թագավոր հոր կողմից խելազար որդու պատմվելու որվագի միջև Վիշապն այրվում է արեգակի կիզիչ իրով, իսկ նախանձ, խելազար որդին պատմվում է հոր ամենքով: Զափազանց նուրբ դրվագ է, եթե տիեզերի ու մարդկության համար վտանգավոր վիշապը, ոքը կարող է նաև կուլ տալ արևը, շղթայվելուց հետո մոխրացնում է արևի իրից և որ դա ուղեկցվում է հզոր

շառացունով։ Այստեղկարսես թե ոանդիպում ենք վերը քննարկված ծեսերից մեկում բացահայտված Արև աստծո ռազմական զորքառույթի (ամպրոպային աստված) դրսելում Արևի հուրը և աստծո կրակը կայծակը գործառութային առօւմով նույնանում են։

Հղթայվածի կերպարը «Սասնա ծռեր» հայկական ժողովրդական էպոսում: Հայկական միջավայրում «Սասնա ծռերի» պատումներից մեկում, որպես շղթայված հերոս հանդես է գալիս նաև **Փոքր Միերը**: Նրա շղթայման այստոնությունն ընդունուր զժեր ունի հիշատակված նախորդ տարբերակների հետ: **Փոքր Միերի** շղթայման պատճառը հոր հետ կրիպն է և հոր անեքքը:¹⁴¹ Միերը մեխսվում է վերին աստվածության կողմից, իսկ ագռավը կտցահարում է նրա **պլոտիկները** (երիկամ):¹⁴²

Սիերի ժայռում, որը կոչվում է Ազռավա-
քար, վառվում է հավերժության կրակը և պտ-
տվում ճակատագրի անիվը: Աշխարհը կոր-
ծանվի, երբ այդ անիվը կանգ առնի:¹⁴³ Սիերի
դուրս գալը լպատումներում հիմնականում
կապվում է աշխարհից անարդարության վե-
րացման հետ:¹⁴⁴ Փոքր Սիերի շղթայնան պատ-
մությունը համապատասխանում է Արտավագ-
դի շղթայնան առասպելին: Սակայն այստեղ
բացակայում են հերոսի շղթաները լիզող և
բարակացնող շները: Փոխարենը հանդիպում
ենք հավերժության կրակի և ճակատագրի
անիվի գոյությանը: Նպատակահարմար չենք
գտնում անդրադառնալ հավերժության կրա-
կի խորհրդանշանային իմաստաբանությանը,
քանի որ դրա, որպես արևի խորհրդանիշ
համոզիչ մեկնությունը կատարվել է հայ բա-
նագիտական գրականության մեջ:¹⁴⁵ Փոքր
Սիերի հարցը մի շարք հեղինակների ուսում-
նասիրության առարկա է եղել և նրա կեր-
պարի մեկնությունների առանձին մանրա-
մասների բացառությամբ, ընդհանուր առ-

¹¹¹ 4. Արվանտօնյանց. Երկեր. հ. 1, էջ 69: Պարսկական առասպելներում հրեշի դեմ կովում է Մթարը (արկի որդին): *И.С. Брагинский*, Иранское литературное наследие. М., 1984, с. 30.

1¹ Եւայլայան, Երկեր, հ. 1, էջ 241:

¹¹⁹ Ա. Դանիելյան, Ծագութ, Խ. 1, էջ 247.

¹²⁰ Ա. Դանիելյան, Ծագ. աշխ., էջ 223: Այդ պատկերացումը նկատելի է նաև Ազարանգեղոսի նկարագրած գրիգոր Լուսավորչի տեսիլքում Ազարանգեղոս, էջ 413-427:

¹⁴⁰ **Ա. Թադևոսյան**, Հայոց տիեզերաբանական պատկերացումների արտահայտությունը դարբնոցային ծեսում - Բանքեր Երևանի համալսարանի (հասարակական գիտություններ) 1992, թիվ 3:

¹⁴¹ Սատունցի Դավիթ. հայկական ժողովրդական եպս. Երևան, 1983: էջ 332:

Սասնա Ժոեր. Երևան. 1979. էջ 79:

¹⁴¹ զ. Արվանտօյանց, հ. 1, էջ 387:

¹⁴¹ Սասնա Ժոեր, Երևան, 1979, էջ 55, 296:

¹⁴⁵ С. Арутюнян, указ. соч.

մամբ ընդունելի է նրան արեգակնային առասպելական գժեր Վերագրելը: Այս առումով հետաքրքիր մի տեսանկյուն ունի թ. Ավոլարեգյանը, որը Միերին որպես ժայռի մեջ փակված երկնային հոլոր, համեմատում է կայծքարի մեջ փակված կայծի հետ:¹⁴⁶ Նման համեմատական գուգահեղոներ անցկացնում է նաև Դ. Յովիաննիայանը:¹⁴⁷ Փոքր Միերի գերության դրվագը ընդհանուր գժերով համապատասխանում է Մրտավագրին վերաբերող տվյալ հատվածի հետ: Այս մասում առկա են բացասական հերոսի գժեր: Դետաքրքիր է, որ մանուկ Միերի ուժը բնութագրող փոխարերության համար օգտագործվում է վիշապ բառը, որը նշում է ուժի վլուանգավորությունը: Ավանդություններից մեկի համաձայն, Միերի տատմերը երեխայի պորտը կտրելիս, շփոթելով նրան վոշապի հետ, վժալով փախչում է և ասում. «Վիշապ է, ինձ քաշեց ձեեց»:¹⁴⁸

Արդյո՞ք սա չի հիշեցնում Արտավագրի մանկությունը պատմող զրույցները:¹⁴⁹ Ժայռից Միերի դուրս գալը կապվում է իին աշխարհի կործանման և նորի սկզբնավորման հետ «Երբ աշխարհը քանդվի և նորից շինվի»:¹⁵⁰ Այսինքն՝ նա վտանգավոր է տիրող տիեզերական կարգուկանոնի համար և, ինչպես Արտավագը, ունի աշխարհակործան գործառույթ: Այս առումով ինձ կործանումը և նորի ծևավորումը կառուցվածքաբանորեն նույնանում են: Պետք է ասել, որ այս երևույթը բնորոշ է էսխատոլոգիական առասպելներին, որոնց չար ուժերի կողմից աշխարհի կիրծանումը կամ ավարտվում է քառոսվ, կամ նոր տիափի աշխարհի ծևավորմամբ:¹⁵¹ Վերջինս ինի համեմատ փաստողեն նորից քառութեալ է, քանի որ դրանում չեն գործում իին կառուցվածքներն ու օրենքները: Այսպիսի փոփոխու-

թյունը ուղեկցվում է նաև չար ու բարի հերոսների տեղերի փոփոխությամբ: Դին բարի ուժերը, հերոսներն ու աստվածությունները որպես նոր կարգի հակառակորդներ և ինի ներկայացուցիչներ ստանում են չարության գործառույթ: Իսկ չար աստվածությունները կամ հերոսները, որպես ինի կործանիչներ և նորի հաստատողներ, ձեռք են բերում բարի հատկանիշներ: Այս այն պատճառներից է նաև, որ ընկած է այստեղ քննարկվող առասպելական հերոսի երկակո բնույթի հիմքում: Արտավագը կամ Միերը՝ որպես տիրող կարգը, տիեզերը կործանումներ, չար են, ուստիև նրանք շղթայված են: Ավկայն նրանք բարի են որպես նոր, ավելի արդար աշխարհի ստեղծողներ: Դին աշխարհի գոյատևումը ժամանակային առումով կախված է հերոսի շղթայված լինելուց: Այս առումով կարևոր է շղթայված հերոսին ուղեկցող ժամանակը խորհրդանշող հատկանիշների դիտարկումը:

Փոքր Միերին ուղեկցող հատկանիշներից մեկը հավերժության հոլոր, նշում է ժամանակի հավերժությունը, իսկ երկրորդը ճակատագրի անհիմը, նրա պարբերականությունն ու հոսքը և որպես այդպիսին՝ նաև վերջավորությունը (ճակատագրի անհիմը եթե կանգնի, աշխարհը կկործանվի): Նման ատրիբուտիկա գործում է նաև Արտավագի առասպելում: Անմահ ու անժառանգ Արտավագի շղթաները լիգելով կամ կրծելով մաշում են նրա գամփոնները,¹⁵² որոնք մի քանի տարբերակում սև և սպիտակ գույներ ունեն:¹⁵³ Այս և սպիտակ շները գրականության մեջ մեկնվում են որպես ցերեկ և գիշեր նշող օրվա խորհրդանիշ:¹⁵⁴ Տարվա խորհրդանիշը շղթան է, որը կարգավորում և պարբերության մեջ ֆիքսում է ժամանակի հոսքը: Այն մաշվում է օրերի հաջորդականության մեջ ու երբ ժամանակի (տարին) մոտենում է ավարտին և շղթայի պոկվելուն «մի մագ» է մնում, դարբինը նոր տարվա նախօրեին կամ առաջին օրը երեք ծիսական հարվածով նորոգում է ժամանակը, ամրացնելով շղթաները: Արտավագի ագատվելը կնշանակի ժամանակի վերջը, ժամանակ, որի ոիթմին համապատասխան կա-

¹⁴⁶ Թ. Ավոլարեգյան, նշվ. աշխ., էջ 79:

¹⁴⁷ Դ. Յովիաննիայան, նշվ. աշխ., էջ 31:

¹⁴⁸ Սասայա ժուբը (գր. Ե. Լալայան), ԱՐ, գք. 13, Թիֆլիս, 1906, թիվ 1, էջ 74:

¹⁴⁹ Փոքր Միերի ծեղքի մեջ սեղմված արյան պուտո, որն էպոսում բացատրվում է որպես թե աշխարհը դարձել է մի պուտ արյուն ու պահվել ծեղքուն, ունի համաշխարեային զուգահեռներ և բացատրվում է, մի կողմից, որպես հերոսի վիշապային, մյուս կողմից հերոսական էլերան դրսկորում: Տես Հ.Ю. Խեկալով, Դպրա յնաւեմայ ս մշտակայ. – Տրամա յն պատահական համապատասխան կառուցքական բառերի մասին, մ. VII, Տարթու, 1975, ս. 66:

¹⁵⁰ Սասունցի Դավիթ, էջ 369:

¹⁵¹ ՄՀԿ, մ. II, ս. 670-671:

¹⁵² Սովուս Խորենացի, էջ 232-233:

¹⁵³ Գ. Խալատյան, Սկզբ. ս. 73-76.

¹⁵⁴ Դ. Յովիաննիայան, նշվ. աշխ., էջ 92:

ոուցված է տիեզերքը: Իսկ ժամանակի նորուստը քառու է, կարգուկանոնի վերջ, որ նշանակուն է աշխարհի կործանում:¹⁵⁴ Այսպիսով, կարելի է ասել, որ Արտավազդը խորհրդանշուն է հավերժությունը, շոթաները ժանանակի պարբերականությունը, իսկ շները ժամանակի հոսքը: Ըստ իս Փոքր Սիերին բնորոշ, կապը երկնային կրակի արեգակի հետ, Արտավազդի առասպելական կերպարում թաքնված է նրա թագավորական տիտղոսի մեջ:

Եղթայված հերոսի առասպելական շերտավորումների համեմատական համառոտ բնութագիր: Ժողովուական ավանդապատումների, առասպելի տարբերակների, Փոքր Սիերին վերաբերող պատումների դիտարկումը և գիտարշավների ընթացքում մեր գրանցած քրիստոնեացված ծեսի տարբերակը, որտեղ շղթայվածի դերի մեջ մտցված է Քրիստոսը, թույլ է տայլիս նկատելու շղթայված հերոսի չորս շերտ շղթայված վիշապ,¹⁵⁵ շղթայված Արտավազդ, ժայռում փակված կամ շորայված Սիեր և խաչին մեխված Քրիստոս: Փորձենք, բայց բացասական և դրական հատկանիշների, գծապատկերային ներկայացման միջոցով համեմատել այդ շերտերը:

Վերը բերված հերոսների համեմատական գծապատկերային նկարագրից երևում է ըստ բացասական հատկանիշի առաջին երեք րողիանորությունը, որտեղ, որպես իիմնական չափանիշ դրված է աշխարհակործանման գործառույթը: Դրական հատկանիշ վիշապին բնորոշ չէ, որը որպես սկզբնական առասպելական կերպար, պահպանել է չար, կործանալիար նախասկզբի իր գործառույթը: Նման առասպելական շերտ նկատելի է նաև Արտա-

վազդի և Սիերի կերպարներում: Սակայն վերջին երկուսը միանույն ժամանակ կրում են նաև սեփական ժողովորի բարերարի և օտարների լծից նրանց պաշտպանող հերոսի դրական հատկանիշներ, որն, ինչպես երեսում է գծապատկերից, առաջինը չունի: Ըստ իս այստեղ մետք դեր ունի նաև առասպելի վիշապականացումը, որի դեպքում առասպելական կերպարները մտնում են սեփական-օտար, ազգային-հակագգային հակադրության մեջ:

գծ. 1

| | բացասական | դրական |
|------------|-----------|--------|
| 1 Վիշապ | - | - |
| 2 Արտավազդ | - | + |
| 3 Սիեր | - | + |
| 4 Քրիստոս | - | + |

• Օչում է համապատասխան հատկանիշի բացակայությունը

• Եղում է կրոնական պաշտամունքալին գործոնի ճնշմաբ առասպելական այդ հատկանիշի չորակությունը:

Եղթայված հերոսի կերպարի ծիսական դրսևորումները: Այժմ փորձենք բանահյուսական նյութի վերլուծությունից անցնել ծիսական գործողության իմաստաբանությանը: Բացի վերված պատմական աղբյուրներից, որոնց միջոցով մեզ է հասել ծեսի նկարագրությունը, դրա մասին տեղեկություններ կան նաև 19-րդ դարից,¹⁵⁶ ինչպես նաև գրառվել է մեր կողմից Դայաստանի մի շարք գյուղերում: Ըստ մեր հավաքած նյութի, դարբինը երեք հարվածով Արտավազդի շղթաների ամրացման ծեսը կատարել է ամեն շաբաթ օր երեկոյան, աշխատանքի վերջում: Ծեսի հետաքրքիր մի տարբերակ ենք գրանցել, որտեղ շղթայված հերոսի դերում Քրիստոսն է: Ըստ այդմ, դարբինը Զատկի Չարչարանաց շաբաթվա Մկագ հինգշաբթի երեկոյան, գնդանին դրված երկարի կտորին մուրճով երեք հարված էր հասցնում: Այնուհետև դարբինն իր մուրճը թողնում էր գնդանին դրված երկարի կտորի վրա մինչև լուսարաց: Ուրբաթ առավոտյան նա այդ երկարից մատանի, ապարանջան կամ չարիափան իրահան էր պատրաստում գյուղի կանանց համար: Ըստ բանասացների վկայության, երկարի կտորին

¹⁵⁴ Ժամանակի և կրոսնու հետ կապված կառուցվածքային գործակեններ լուրկի է գտնել Ս. Ավերինցի հունական և բյուզանդական մշակույթին նվիրված, ինչպես և Ս. Նելլյուդովի պականական մշակույթի վերաբերյալ աշխատության ներքում: **C.C. Ավերինցօվ,** Порядок космоса и порядок истории в мировоззрении раннего средневековья. — Актуальность и Византия. М., 1975, сс. 266, 279. **С.Ю. Неклядов,** Статистические начала в пространственно временнно организаций повествовательного фольклора. — Типологические исследования по фольклору, с. 188. **М.И. Стеблин-Каменский,** Миф, Л., 1976, сс. 44-46.

¹⁵⁵ Եղթայված հերոսի առասպելում վիշապը որպես նախաշերտ, պարսկական և հունական տարբերակներում դիտարկել է Վ. Միլլերը: **Տե՛ս Յ.Ֆ. Մուլեր,** Кавказские предания о великанах прикованных к горам, сс. 113-114.

¹⁵⁶ Կավկազ, 1887, № 81; 1988, № 107.

մուրճի երեք հարվածը տրվում էր Զդիաստոսի մեխերն ամրացնելու նպատակով: Դրանով դարբինն իր վոյ էր վերցնում քրիստոսի խաչը՝ Ակարտության մարդկության մեղքը ազատելով նրանց աստծոն զայրույթից:¹⁵⁸

Դարբինների կողմից կատարվող այս ծեսն ունի նաև րազմաթիվ գուգահեռներ ինչպես հայերին հարևան, այնպես էլ ոչ հարևան ժողովուրդների մեջ: Այդ առօմնով ամենասերտ գուգահեռները հանդիպում են Վիհացիների ավանդություններում: Վրաստանի համարյա բոլոր շրջաններում դարբինների մեջ ընդունված էր Ավագ իինօշաբքի օրը կուանահարել, որի միջոցով նրանք ամրացնում էին Ամիրացի շղթաները, թույլ չտալով նրան ազատվել: Ահա ինչու Ամիրացին չի սիրում դարբիններին և եթե ազատվի շղթաներից, առաջինը նրանց է վերացնելու:¹⁵⁹ Բավարիայում կամ Վալդկիրիենում նման գործողություն անում է դարբնոցից վերջինը դուրս եկող դարբինը, որպեսզի սատանան չսղողի իր շղթաները:¹⁶⁰ Գերմանիայի մի շարք այլ շրջաններում էլ դարբինները այդ գործողությունը կատարում էին տոն երեկոները՝ Լյուցիթերի շղթաներն ամրացնելու նպատակով:¹⁶¹ Նման սովորույթ գործել է նաև Չեննոգորիայում, որտեղ այն ավարտվել է Ծննդյան տոնների նախօրեին Եղիա մարգարեի կողմից շղթայված Դուկյան հրեշի շղթան ամրացնելու նպատակով:¹⁶² Ինչպես տեսնում ենք, շղթայված հերոսի հայկական առասպելը խիստ նմանություններ ունի նշանակած մշակութային միջավայրին պատկանող առասպելների հետ:

Դարբնի գործառույթը շղթայվածի հետ կապված ծեսերում: Որպեսզի հասկանանք դարբնի գործառույթը ծեսում, այն պետք է դիտարկել տվյալ տոնական ցիկլում կատարվող դարբնոցային այլ ծեսերի խորհրդանշանային համակարգում: Վերն արդեն վերլուծված մի շարք ծեսերում դարբնի կուանահարությունը իմաստավորվում է որպես երկնա-

յին ուժի պայքար քառտիկ ուժի՝ վիշապի ոեմ արեգակի ազատագրությամբ պահպանելու տիեզերական կարգը:¹⁶³ Դարբինը դրանում կը ունի ամայրոպամարտիկ վիշապաքաղ հերոսի գործառույթ. իսկ նրա մուրճը օժտված էր կայծակաբեր հատկությամբ:¹⁶⁴ Այս ծեսում դարբնին հակառակող ուժն Արաւակագոմ է, որն, ինչպես տեսանք, վիշապային հատկանիշի կողողն է: Ավանդություններից մեկում շղթայվածի կերպարում հանդիպեցինք նաև վիշապ առասպելական հերոսին:¹⁶⁵ Այսինքն՝ մեր առջև կանգնում է դարբին-վիշապ հակադրությունը, որի ծիսական լուծումը կուակարանում վառվող կրակի ուղեկցությամբ երեք խորհրդանշանային հարվածներով ծիսական արարողության մեջ է: Դժվար չէ նկատել դարբնի հարվածների իմաստային ընդհանրությունը այլ ծեսերում կատարվող կուանահարության հետ:¹⁶⁶ Ի դեպ, նշենք, որ մուրճի հարվածների ծիսական գործողության կովկայան ժողովուրդների ընկալումը գուգահեռներ ունի հայկականի հետ: Զերբեգները գտնում են, որ մուրճի հարվածը վախ է առաջացնում չար ուժերի մեջ և փախուստի մատունում նրանց:¹⁶⁷ Մեկ այլ բացատրությամբ դրանք չեզոքացնում են չար աչքի ազդեցությունը կամ վերացնում ներս մտնողի չար մտադրությունը և ցանկությունը:¹⁶⁸ Արիսազների պատկերացմանը, այս գործողությունը ուղեկցում է դարբնության աստծուն նվիրված ծիսական

161 Ա.Թաղևոսյան, նշվ.աշխ.:

164 «Ալուճ» և «Կայծակ» բառերի իմաստային գուգահեռները նկատելի են նաև հնդեվրոպական լեզուներում: Քին սլավ. *тла́ту* մուրճ, լատին. *mallēus* – մուրճ, հին հոլ. *mjultir* – ամպրոպի թռո աստծո մուրճ, հին սլավ. *тлуми́ји* – սաւսապ. *mealde* – կայծակ, խեր. *mallati* – գենք: Ելենելով այն բանից, որ մուրճ, կայծակ և զենք բառերի հիմքում ընկած է միմնույն արմատը, ասլակարենի է ասել, որ մուրճն տրվել է սմարոպի աստծո զենքի նշանակություն: *Т.В. Ղամքրելսձթ, В.В. Իվանոս, յկազ. սու., թ. 2, Տեսլուս, 1984, ս. 75:* Դա հասկապես ցոյցուն է ողուսորվում թռո ամպրոպի աստծո Մելլեսիր – մուրճ և ուսերեն մոլհսա – կայծակ բառերի ընդհանրության մեջ:

165 Յայոց մեջ կա նաև պատկերացում, ըստ որի երկնրի և երկորի միջև կախված վիշապի շղթաներից ազատվելը կկործանի տիեզերը: *Ե. Հայացան. Երկեր, հ. 1, էջ 241:*

166 Դարբնոցային ծեսերում դարբնի կուանահարության խորհրդանշանային իմաստաբանումը կապվում է դարբնի և սիեզերախսափան չար ուժերի պայքարի հետ:

167 Գ.Փ. Կորսին, Կուլտ խելезա յ կավազսկի նարություն, ս. 97.

168 Գ.Փ. Կորսին, Կուլտ խելеза յ կավազսկի նարություն, ս. 97.

¹⁵⁸ Ա.Թաղևոսյան, ԴԱՆ, տ. 3, էջ 52, 92:

¹⁵⁹ Գ.Փ. Կորսին, Կուլտ խելезա յ կավազսկի նարություն, ս. 97.

¹⁶⁰ Բ.Փ. Միլթը, Կավազսկի պատմությունների մասին, ս. 114. Գ.Փ. Կորսին, Ալղ, ս. 99.

¹⁶¹ Գ.Փ. Կորսին, Կուլտ խելезա յ կավազսկի նարություն, ս. 99.

¹⁶² Ալղ:

արարողության ու աղբերին. ինչպես նաև դարբնոցուն տրվող երդման արարողությանը՝¹⁶⁹ ինչպես տեսնուն ենք, ծիսական կռանհարության հետ կապված. կովկասյան ժողովուրդների նշակութային միջավայրուն նույնպես նկատելի է դարբին-չար ուժեր հակառությունը:¹⁷⁰

Զննարկվող ծեսուն կփորձենք դարբնի մուրճով ծիսական հարվածների իմաստաբանական վերլուծությունը կատարել կայծքարի և հրահանի մասին ժողովրդական պատկերացումների համեմատության միջոցով, քանի որ դրանցուն կան մի շարք ընդհան- բություններ, որոնց այլ հեղինակների մեկնությանը ծանոթացանք վերը: Դրան մեզ մղում է նաև շոթարյակած հերոսի ծեսի հետ անմիջականութեն կապված և նույն ծիսական ցիկլուն նրան հաջորդող մատանի-հրահանի պատրաստումը:¹⁷¹

Կայծքարի մասին ժողովրդական մի պատկերացմանք վկայվում է, որ նրա մեջ թաքնված է կայծակը:¹⁷² Իսկ կայծակը ժողովրդական բացատրությամբ աստծո կրակն է, իրեշտակների գենքը, որով նրանք հայածուն են սատանաներին¹⁷³: Կայծակի միջոցով առաջացած կրակը սուրբ է և այն հանգցնելը մեղք է համարվում:¹⁷⁴ Կայծքարի մեջ թաքնված լիրակը դուրս է գալիս դարբնի պատրաստված սլոյսատե հրահանի միջոցով:¹⁷⁵ Ըստ ժողովրդական ավանդույթի, դարբնի պատրաստած պողպատե հրահանը չարխափան է և լիրսովում է չար ուժերից անվնաս մնալու ակնկալիքով:¹⁷⁶ Այն, որպես չարխափան, ամ-

րացնում են Երեխայի հագուստով ծայր ռասին, կամ նորածնին լողացնելու պահին դժում են ջրով լցված տաշտի մեջ:¹⁷⁷ Այն դրվում էր նաև նորածնի բարձի տակ կամ կախվուն նրա օրորոցից:¹⁷⁸ Պողպատե հրահանը դրվում էր նաև օննեկան հարսի բարձի կամ անկողնու տակ, որպեսզի չարերը չվնասեն նրան և ծննդարերությունը հաջող ընթանա: ¹⁷⁹ Չարխափան նպատակով օգտագործվող հրահանը պետք է պատրաստված լիներ ծիսականորեն ծեծված երկաթից. Ավագ ուրբաթ օրը:¹⁸⁰ Դիշեցնենք, որ այդ օրն էր դարբինը պատրաստում նաև ծիսական նշանակության մյուս առարկաները չարխափան մատանի, ապարանջան. «Պօղ» վզնոց, ծիսական մեխեր և այլն: Այս օրվա հետ է կապված նաև քննարկվող ծեսի հրականացումը, այդ թվում նաև նրա քրիստոնեացված տարբերակը:

Հրահանի հիմնական հատկանիշը կայծքարում թաքնված կրակը դուրս բերելն է: Ըստ ժողովրդական պատկերացման, կրակը և կայծակը, բացի քարից, պահվում է նաև որոշ ծառատեսակների մեջ:¹⁸¹ Նկատի ունենանք նաև, որ դարբնի սալի կոճղը նույնպես այն ծառատեսակներից էր ընտրվում. որոնց կայծակը հաճախ էր խփում կամ որոնց մեջ երկար կար:¹⁸² Որոշ պատկերացումներ էլ ասում են, թե կայծակը երկնքից ընկնող շիկացած երկար է:¹⁸³ Ելնելով բերված փաստարկներից, կարելի է ընդհանուր հատկանիշներ գտնել իր մեջ կրակը թաքցնող կայծքարի և զնդանի կոճղի միջև: Նկատենք նաև, որ զնդանի «սալ» ու լերկ քար, ժայռ, որոնց, ըստ հնդեվրոպական առասպելի, վիշապի դեմ կրվելիս իր կայծակներով խփում է

¹⁶⁹ Н.С. Джапаридзе, Абхазский культ и быт.- Христианский Восток, т. 5, 1916, в. III, с. 170. Там же, с. 73.

¹⁷⁰ Սուրբի նման լիմաստավորման կարելի է հանդիպել նաև զերմանա-սկանդինավյան և վավինական միջավայրերում: Е.М. Мелетианский, «Эдда» и ранние формы революции, сс. 181, 195. Его же, Провисхождение германского эпоса, сс. 115, 126. В.Я. Пропп, Морфология сказки, с. 54.

¹⁷¹ Ст. Лисициян, указ соч., с. 164.

¹⁷² Ե. Լալայան, Երկեր, ե.2, էջ 5:

¹⁷³ Ե. Լալայան, Երկեր, ի.1, էջ 240. Ст. Лисициян, указ соч., с. 146.

¹⁷⁴ Ե. Լալայան, Երկեր, ի.1, էջ 240:

¹⁷⁵ Ст. Лисициян, указ соч., с. 164.

¹⁷⁶ Հրահանը որպես հրահագործ օգնական է դիտվում նաև ուստական հերթարներում: В.Я. Пропп, указ соч., с. 43. Հրաշալի օգնականը հաճախ նաև ծնվում է հրաշալի մատանուց: С.Ю. Неклюдов, Время и прос-

транство в Биллине. – Славянский фольклор, М., 1972, с. 42:

¹⁷⁷ Г.Ф. Чурсин, указ соч., с. 75. Ст. Лисициян, указ соч., с. 164. Ա. Թաղենոյան, ՂԱՆ, տ. 3, էջ 54:

¹⁷⁸ Ե. Լալայան, Ալիսիան, ԱՐ, գր. Գ., Թիֆլիս. 1898. էջ 256: Նոյնի, Զանգեզուր, էջ 110: Ա. Թաղենոյան, ՂԱՆ, տ. 3, էջ 57:

¹⁷⁹ Ա. Թաղենոյան, ՂԱՆ, տ. 2, էջ 65; տ. 3, էջ 57:

¹⁸⁰ Ст. Лисициян, указ соч., с. 164.

¹⁸¹ Ա. Արենյան, Քայ ժողովրդական առասպելներ, էջ 140:

¹⁸² Ա. Թաղենոյան, ՂԱՆ, տ. 2, էջ 42 50: ժողովրդական այն պատկերացումների մասին, թե կայծակը հարվածում էր այն ծառատեսակներին. որոնց մեջ երկար կար. մեզ հաղորդել է նաև ազգագրագետ Յու. Ակրտումյանը:

¹⁸³ Г.Ф. Чурсин, указ соч., с. 69. Ж. Дюмезиль, Скифы и народы, с. 17.

ամպրոպամարտիկը¹⁸⁴, հսյերենում ունեն ընդհանուր անվանում: Դրահանը պողպատից պատրաստում է դարբինը: Պողպատը, ինչպես և դարբնի մուրճը, երկնային պատկանելությունը ունի և օժտված է կայծակնային հատկությամբ, հաճախ նույնանալով դրա հետ: Ստացվում է այսպիսի մի կառուցվածք:

գԺ.2

| | ա | բ | գ |
|--------------------|----------------------------|---------------------------------------|--------------------------------|
| հրահան չարիափան | կայծակնային հատկություն | կրակի ազատում կայծքարի միջից | |
| դարբնի մուրճ | չարիափան | կայծակնային հատկություն | կրակի ազատում կրանասալից |

Վերը շեշտվել է դարբնի կատարած ծեսերին ուղեկցող անհրաժեշտ մի հատկանիշի առկայությունը: Դա հնոցում վառվող կրակն է, որն ուներ զուտ ծիսական նշանակություն, քանի որ այն վառվում էր առանց կիրառական անհրաժեշտության, աջակցելով դարբնի կռանահարությանը: Ըստ իս, այն խորհրդանշում է հավերժ հուրը կամ դարբնոցային ծեսերում հանդիպող արեգակ-մատանին, որը տիեզերապահապան հերոս դարբինն ազատում է տիեզերքի կարգի դեմ ընթուստացող ոգուց: Տիեզերը կարգավորող գործոնը ժամանակի ոիթմիկ պարբերականությունն է, որն իրականացվում է Արևի միջոցով: Ահա թե ինչու, չարուժի կողմից դրա Վտանգումը նաև ժամանակի և սիհեզերական կարգի խախտման վտանգ է նախատեսում: Այս համակարգում, դարբնի հարվածները գնդանին (իրահանձ հարվածը կայծքարին) նշում է վիշապային սկզբի վնասազերծվելը շղթայվելու միջոցով և Արևի ազատումը որպես ժամանակային ոիթմիկ պարբերականության նորոգում: Կարելի է ասել, որ դարբինը ծիսական կռանահարու-

¹⁸⁴ Յնդեվրոպական լեզվարմատում *perku*-ո ամպրոպի աստված, *peru* - ծառ և *perku* - ծայր բառերը կազմված են մեկ ընդհանուր արմատից, որը ցույց է տալիս լեզվական և առասպելական մտածողության ընդհանուրությունը նշված երևույթի առումով: *Т.В. Гамкрелидзе, В.В. Иванов*, յակա. սու., թ. 2, ս. 614, 793: Յակական միջավայրում կայծակնահար բարերի պաշտվելը սեմանտիկ առումով մտնում է սյս համակարգի մեջ: Տես Ե. Լալայան, Երկեր, հ. 2, էջ 417: Վրացիների մոտ վիշապը մեռնելուց հետո բար է դառնում. *Е.Б. Вирсавадзе*, Հրանության առաջնային պատճեններ, 101:

թյան մեջ հարաբերվում է միևնույն հերոսի երկվությանը՝ շղթայելով նրանում չարը. ազատում է բարին կամ շղթայելով վիշապին, ազատում է արևը:¹⁸⁵

Քննարկենք մի սովորույթ ևս. որում որպես չարիափան հրահան, երեխայի ուսից կահիելու համար օգտագործվում է Ավագ ուրբաթ դարբնի պատրաստած պողպատե մատանին: Դրա խորհրդանշանային իմաստաբանությանը, կապված իդի կանանց և հարսների հետ, անդրադարձել ենք: Գործառութային առումով նրան բնորոշ էին չարիափանությունը. արարչագործությունը: Այս խորհրդանշում էր արևը: Մատանի-հրահանի հետ կապված սովորություն մատանին ունի արաշագործության արդյունքի (երեխայի) այսպահանության գործառույթը: Այն, ինչպես պողպատե հրահանը, ունի կայծքարից կրակ ազատելու իմաստ: Ծիսական առումով այն ոչ միայն կապված է չարիափան հրահանի հետ, այլ նաև լրացնում և ամբողջացնում է վերջինս: Որպես հրահան, նա ծեռք է բերում դրան բնորոշ ամպրոպամարտիկի ռազմական գործառույթը: Իսկ որպես մատանի պահպանում է արևային հատկանիշները: Եթե դիտարկենք մատանի-հրահան-դարբնի կապը, ապա համաձայն Վերն ասվածի, դարբինը պահպանում է կրակը (արևը) վիշապից ագատող ամպրոպամարտիկի գործառույթը:¹⁸⁶ Իսկ մատանին, ըստ նրա ծիսական կիրառություններում ունեցած լուրիրդանշանային իմաստավորման, կարող է նեկ-

¹⁸⁵ Նարտյան եպոսում արևային հերոս Սոսրիկոյի ծնունդը բարից, ըստ երևույթին նույնանության առանձներ ունի բարում փակված իդի և բարայրում շղթայված հերոսի հետ: *В.С. Мимляр*, Օսетинскиն էտյօւգի, վ.1, ս. 30. *В.Г. Ардзинба*, Հարմակու սյույն օրոշումները և գործությունները, 1985, ս. 133-134. Իսկ արևագական տարրերական մելուն է դարբին Այնար իդին իր մուրճով բարից դորու և բերում Սոսրիլյանին և հետո էլ կոփում նրա մարմինը: *Ш.Х. Салакая, Абхазеский нармакиный герой*, 1968, ս. 69. Այս առումով հետաքրիդ է խեթական առասպելում թեշուր ամպրոսի աստծոն կոփուր բարի դեմ, որն ավարտվում է թեշուրի հաղթանակով. *Г.Г. Гютербог*, Խետմական միֆոլոգիա. — Միֆոլոգия древнего мира, М., 1977, с. 192: Թոռի և Ուղգարդ Լոկիիի մրցաւյթարում առանձին տեղ ունի թոռի կողմից ժայռին մուրճով երեք հարված հասցնելը, որոնք փոփառերականորեն նշանակում են Լոկիին հասցված հարվածներ. *Младшая Эдда*, ս. 69-70, 77: ¹⁸⁶ Սա տարածված է տարբեր ժողովուրդների առասպելներում և համարական ցայտուն դրսերում ունի սկանդինավյան հլմարինեն առասպելական դարբնի կերպարում: *Кальевала*, ս. 339-345.

Նաբանվել որպէս Արև-անպրոպի աստծո խորհրդանիշ։ Մատանրն կարող է լինել նաև դարբնի ծիսական գործառույթների խորհրդանիշ։ Այսպիսով, ընդունելով գրականության մեջ հայտնված հուր-Միերի և կայծքարի մեջ գտնվող «աստծո կրակի» ընդհանրության վարկածը, կցանկանայինք ավելացնել, որ կրակի հետ նիշմամանակ քարի մեջ կամ քարայրուն թաքնված է նաև հուր կրակը գերող վիշապը.¹⁸⁷ Այդ է վկայում ժողովրդական պատկերացուներուն քարայրը որպես վիշապի բույն դիտելը¹⁸⁸ կամ քարի կամ ծառի տակ վիշապի թաքնվելու բացատրությունը։ Սա կարող է հիմք ծառայել այն եզրակացությանը, ըստ որի կայծքարից մատանի-հրահանի միջոցով կրակի ստացման գործողության ծիսական իմաստավորումը նույնական է վառվող քուրայի մոտ չար հերոսի շղրաներն (գամերը) ամրացնելու և չարիափան մատանի-հրահանի պատրաստման դարբնոցային ծեսի հետ։

Դարբնի և շղրայվածի ծիսական կերպարի շերտավորումները և հարաբերությունն ըստ շերտավորումների։ Չափազանց հետաքրքիր շերտավորում է նկատելի ծեսի քրիստոնեացված տարբերակում։ Ինարկե, ծեսի քրիստոնեական մեկնության հիմքում ընկած է ժողովրդականացված քրիստոնեական առասպելը, ըստ որի Քրիստոսը խաչվում է դարբնի պատրաստած մելսերով և այդ առումով դարբնի հանդես է գալիս որպես բացասական հերոս։¹⁸⁹ Նշենք, որ նման բացատրություն տևրածված է նաև արխագական միջավայրում։¹⁹⁰ Սակայն ինչպես է քրիստոնեական առասպելը գուգորդվում շղրայված հերոսի առասպելի հետ։ Կա՝ արդյոք նման մի

առասպելական հինգ, ըստ որի դարբնի կատարած ծեսը վերահանացավորվում է։ Փորձենք ավելի մանրամասնել քրիստոնեական առասպելը. պարզելով թե ի՞նչն է դառնում Քրիստոսի խաչման պատճառ։ Քրիստոսը խաչվում է թագավորի տիտղոսի նկատմամբ ենթադրյալ հավակնության և վտանգավորության համար։¹⁹¹ Նա խաչվում է նաև հրեաների իր ժողովրդի համաձայնությամբ։¹⁹² Այս կոնտեքստում Քրիստոս առասպելական հերոսին բնորոշ են շղրայված հերոսին հատուկ բացասական գծերը նա վտանգում է թագավորին և տիրող հասարակական գոյավիճակը։ Պատահական չէ, որ նրան խաչելու գործում ժողովրդական բացատրությամբ տեղ է տրվում նաև դարբնին։ Առասպելական այս կոնտեքստում դարբնը պահպանում է հասարակության (տիեզերքի) նկատմամբ դրական հերոսի գործառույթը։

Կրոնա-պաշտամունքային համատեքստում, սակայն, դարբնի դերի արժեքավորումը որոշ փոփոխությունների և ենթարկվում, քանի որ Քրիստոսը, որպես շղրայված հերոս, ունի աստծո կողմից ուղարկված փրկչի հատկանիշ, ինչը բնորոշ է նաև Վերը հանդիպած շղրայված հերոսներին (Արտավազդ, Միեր) և ընկած է նրա դրական իմաստավորման հիմքում։ Դարբնը, որպես Քրիստոսի խաչմանը մասնակցող բացասական հերոս, պահպանում է դրական հերոսի իր դերը հասարակության նկատմամբ։ Մասնակցելով Քրիստոսի խաչմանը, նա իր վրա է վերցնում ամբողջ մարդկության մեղքը, փրկելով մարդկանց լևատծո պատժից։ Այս ծեսում դարբնի երկակիությունը պայմանավորված է նաև շղրայված հերոսին բնորոշ փրկչի գործառույթի հետ կապված փոփոխությամբ։ Եթե շղրայված հերոսի փրկչային առաքելությունը դիտարկենք սրբագան և աշխարհիկ ժամանակներում գու-

¹⁸⁷ Նման բեմայի արծարժումը տես «Կայեվսլա» եսլուտում։ **Կալեబալա**, cc. 339-345. Ալակինական հերիարներում լիուչկան, որ միաժմանակ իր մեջ լրաւ է թե Ամպրոպամարտիկի և թե նրա հակառակորդի հատկանիշներ, ետմահու վերածվում է քարի։ Վ.Վ. Խանոս, Վ.Վ. Տոպորօ, Ինքնահու և ուրանական միջավայրում։¹⁹¹ Սակայն ինչպես է քրիստոնեական առասպելը գուգորդվում շղրայված հերոսի առասպելի հետ։ Կա՝ արդյոք նման մի

¹⁸⁸ Քարայրի, քարանձավի քառային երեսությունների դասին պատկանելության մասին տես։ G. JONES, Dictionary of mythology, folklore and symbols, pl.1, p. 300: A. M. Hocart, Kings and consillors, Chicago-London, 1970, pp. 171, 229.

¹⁸⁹ Աթաղնոսյան, ԴԱՆ, լտ. 3, էջ 57:

¹⁹⁰ Г.Ф. Чурсин, սկզ. соч., с. 95.

¹⁹¹ **Աստվածաշունչ**։ Նոր կտակարան, Ըստուգարդ, 1989, Ավետարան ըստ Մատթեոսի, գլ. Բ, էջ 1086, 1112, գլ. Ի, էջ 1124, 1125։ Ավետարան ըստ Մարկոսի, գլ. ԺԵ, էջ 1151, Ավետարան ըստ Ղուկասի, գլ. ԻՇ, էջ 1195։ Ավետարան ըստ Հովհաննեսի, գլ. ԺԹ, էջ 1227։ **Յ. Թենան**, Հայոց Խոսք, Մ., 1991 ս. 263-269. Բնելեսկայա էնցիկլոպեդիա, Մ., 1981 (թոր. Ա. Վ. Առաքելյան) ս. 777։ **Ա. Ճոնիս**, Ստորագրություններ, Մ., 1989, ս. 80.

¹⁹² **Աստվածաշունչ**։ Նոր կտակարան, Ավետարան ըստ Մարկոսի, գլ. ԺԵ, էջ 1151, Ավետարան ըստ Հովհաննեսի, գլ. ԺԹ, էջ 1227։ **Յ. Թենան**, սկզ. соч., ս. 267-268։ **Ա. Ճոնիս**, սկզ. соч., ս. 80.

գահեր. ապա հերոսներից յուրաքանչյուրի համար այն կունենա հետևյալ պատկերը:

գծ. 3

| Ծրայված հերոս | Վիրկչի առաքելություն | | |
|------------------|-------------------------------|---------------------|---------|
| | Սրբազն- ծիսական ժամանակ | աշխարհիկ ժամանակ | Առաջարկ |
| Ներկա | Առաջարկ | Ներկա | Առաջարկ |
| Արտավագդղ | + | + | |
| Միեր | + | + | |
| Քրիստոս | + | + | |

Արտավագդղ և Միերը սրբազն-ծիսական ժամանակում վիրկչի առաքելությունը կատարելու են ապագայում ազատվելուց հետո: Ալո-օրեական-աշխարհիկ ժամանակում նրանք դեռ շղթայված են և ապագայում ունեն նորից վիրկչի գործառույթ: Արբազան, ծիսական ժամանակի համար ասվածը վերաբերվում է նաև Քրիստոսին քանի որ նրան խաչելու պահի համեմատ, առաքելությունը գտվում է ապագայում: Սակայն աշխարհիկ ժամանակում նա արդեն ազատված է գամերից և որպես վիրկչի իր առաքելությունը կատարել է, նահատակվելով մարդկության համար: Ահա թե որտեղ է Քրիստոսի տարբերությունը Արտավագդղից կամ Միերից շղթայված հերոսի ծիսական կերպարում և ինչու է նա որպես դրական կերպար կորցնում այն բացասականը, որը բնորոշ է Արտավագդին և Միերին: Նշենք նաև, որ մարդկությունը մեղքերից ազատելու և նահատակվելու գործառույթ, պատումներից մեկում կոում է նաև Փոքր Միերը:¹⁹³ Շղթայվածի ծիսական կերպարների շերտավորումների միջև վիշապ-Արտավագդ-Միեր-Քրիստոս անցումում նկատելի է հատկանիշների բացասականից-դրական տեղաշարժը և դրականի խտացումը: Շղթայվածը վիշապի կերպարում ունի բացասական հերոսի գործառույթ, որն Արտավագդի կերպարում ծեռոք է բերում դրական հատկանիշներ, որոնք ավելի գերակշիռ են Փոքր Միերի մոտ: Քրիստոսի կերպարը նախորդների համեմատ այս առումով փոքր ինչ բարդ է: Առասպելական տեսանկյունից նրան կարելի է վերագրել նաև բացասական հերոսի հատկանիշներ, որոնք, սակայն, կոունապաշտամունքային մուտեցման տեսանկյունից տեղի են տալիս և նա ստա-

նում է գերագույնի աստվածային հատկանիշներ: Վերջինս էլ հիմք է տալիս Քրիստոս աստվածային երևույթի շուրջը դրական առասպելական շերտի ստեղծումը. այդ թվում նաև նրան արևային հատկանիշներով օժտելուն: Դետաքրօքիր է դարբնի կերպարի վոփիոխության դիտարկումը ըստ Վեը նշված շերտավորումների: Դա կանենք երկու կտրվածքով ըստ դարբին-շղթայված հերոս և դարբին-հասարակություն հարաբերությունների:

Դարբին-վիշապ (1-ին շերտ) հարաբերակցության մեջ դարբնը դրական կողմն է:¹⁹⁴ Դա պահպանվում է նաև հասարակության նկատմամբ հարաբերությունում: Դարբին-Արտավագդ (2-րդ) և դարբին-Միեր հարաբերակցությունում դարբնը պահպանում է դրական հերոսի հատկանիշները: Միաժամանակ դա պահպանվում է նաև հասարակության նկատմամբ դարբնի ունեցած դերում: Դարբին-Զրիստոս հարաբերակցությունում դարբնը ստանում է բացասական հատկանիշ, սակայն հասարակության նկատմամբ պահպանում է դրական հերոսի գործառույթներ: Դարբնի գործառույթի շուրջ ասվածը գծապատկերային ներկայացնելու դեպքում ստացվում է հետևյալ գծապատկերը.

գծ. 4

| Դարբնի գործառույթի արժնորումը | |
|--|---|
| Հղթայվածի նկատմամբ ըստ առասպելական շերտերի | հասարակության նկատմամբ ըստ շղթայվածի շերտավորումների |
| Վիշապ | + |
| Արտավագդ | + |
| Միեր | + |
| Քրիստոս | - |

Եթե ըստ այս գծապատկերի հասարակության նկատմամբ դարբնի գործառույթը համեմատենք հասարակության նկատմամբ շղթայվածի հարաբերությունն արտահայտող գծապատկեր 1-ի հետ, ապա հնարավոր կլինի կատարել մի շարք ընդհանրացումներ: Շղթայվածի 1-ին շերտի վիշապի համար հասա-

¹⁹³ Տեղին է հիշատակել գերմանականունավան առասպելու Ֆաֆնիր և Ուզին եղբայրների հակալրության դրվագը: Դակարության արյունքում Ֆաֆնիրը վերածվելով վիշապի և տիրելով ուկուն, պառկում է նրա վրա, իսկ Ուզինը դառնում է բագավորի դարբինը: Նա սսլանելով Ֆաֆնիրին, ազատում է ուկին: *Ա.Խունչեր,* յակա.սու., շ. 398.

¹⁹³ *Թ. Ավրամեամ, նշվ. աշխ. էօ 80:*

րակության նկատմանը դարենի ունեցած դրական և շղթայվածի բացասական գլուխությունը հավասարակշռում են: Հասարակությունն ազատվում է շղթայվածից, դարբինը պահպանուած է դրական հերոսի իր դերը: Արտավագոյի (2-րդ) և Միերի (3-րդ) դեաքտում դարբինը դրական գործառույթների և շղթայվածի բացասականի հավասարակշռումը գործուն է արդյունքուած շղթայվածից վերացվելով բացասականը, պահպանվուած է դրականը (փրկիչ, հավերժ հոլոր, արեգակ), որը փոխանցվուած է նաև դարբինի հաղորդելով նրան նոր դրական հատկանիշներ: Զրիստոսի (4-րդ) դեաքտում պատկերը մի փոքր այլ է: Զրիստոսը հասարակության նկատմամբ դրական հերոս է, դարբինը նույնապես: Չկա այն հակադրությունը, իսկ ավելի ճիշտ կրոնապաշտամունքային տարբին ճնշմամբ այն չի դրսնորվել, որը պետք է հավասարակշռություն ստեղծեր հերոսների միջև: Զրիստոսն ինքն է գլխավոր աստվածության մարմնացումը և դուրս է մողում դարբին, իր վրա վերցնելով արեգակնային հատկանիշներ: Սա քրիստոնեության շրջանում կրոնադավանաբանական աշխարհընկալման արմատական փոփոխությունների հետևանքով դարբինի կերպարում առասպելական գծերի փոփոխություն էր, որում, սակայն դարբինը շարունակում է պահպանել տիեզերական (հասարակական) կարգը պաշտպանող հերոսի դրական հատկանիշները որոշ վերահմատավորմամբ: Վերը բերված համեմատությունը գժապատկերով ներկայացնելու դեպքում, կունենանք այսպիսի տեսք.

գծ. 5

Հասարակության նկատմամբ հերոսների դերի արժենորությն բատ շեռտերի

| Շորավաճած | | Ուղարի |
|------------|-----|--------|
| Վիշապ | (-) | (+) |
| Արտավագոյի | + | (+) |
| Միեր | + | (+) |
| Բրիսուոս | + | (+) |

(-) - այս փակագծերով նշվուած է հերոսների հակադրի գործառույթների հալաւարակայությունը
[] - այս փակագծերով նշվուած է կրոնապաշտամունքային գործունի ճնշմամբ չղուարված առասպելաբանական հայադրությունը:

Բերվածը գժապատկերային առումով գալիս է հավաստելու մեր այն ենթադրությունը, որ դարբինը պայքարելով շղթայվածի չար եռթյան դեմ, ազատում է նրա բարի կեսը: Վերջինս էլ դարբինի ծիսական կերպարի դրա-

կան իմաստավորությունը պայմանավորող գործուներից է: Զրիստոսի կերպարի կրոնապաշտամունքային առումով միայն դրական դրսնորումը ոչ միայն ծպտում, այլ անտեսում է, ժխտելով նրա բացասական գծերը: Իսկ դարբինը դուրս գալով Զրիստոսի կրոնապաշտամունքային դրական կերպարի ոեմ, այդ հարթությունում ծեռք է բերում նոր բացասական որակ, դրականը պահպանելով հասարակության նկատմամբ ծիսական հարաբերակցության ոլորտում:

Այսպիսով, հայկական միջավայրում շղթայված հերոսի հետ կապված դարբնոցային ծեսում կարելի է առանձնացնել չորս հիմնական շերտավորություններ: Առաջինը հնամենի շերտն է վիշապ-դաբրին հակադրությամբ: Դրանում դարբինը որպես տիեզերապահապան ուժ, դրսնորվում է արև-ամարուպային Երկֆունկցիոնալությամբ և վիշապ տիեզերակործան ուժին հադրանակող: Երկրորդը վաղ միջնադարյան աղբյուրներում պահպանված շերտն է, որտեղ շղթայվածի դերում հանդես է գալիս Արտավագոյը, ում կերպարում, բացի տիրապետող վիշապային գծերից, դրսնորվում են նաև ագային փրկչի դրական հատկանիշները: Մի փոքր կանգ առնելով, փորձենք ավելի հստակեցնել Եգնիկ Կողբացու և Վարդան Վարդապետի տարբերակներում շեշտվող Արտավագոյի այդ հատկանիշը, որն իմաստային միահյուսվածության մեջ է գտնվում վերը բազմից նշված Երկվության հատկանիշի հետ: Արտավագոյի ժայռի մեջ փակվելու անեօթի պայմանը անմահության հետ նաև անժառանգությունն է: Նա չի կարող իր գործառույթը դրսնորել իրեն շարունակող ժառանգի մեջ դրանից գրկված լինելու պատճառով: Արտավագոյի անմահությունն այս առմամբ նշում է, որ ինքն իրեն ժառանգող որդու կրողն է նաև, որի շնորհիկ էլ նա ստանում է ազգի փրկչի գործառույթը: Ահա թե ինչու նրա մահը կարող է թագավորության կործանում նշանակել (փաստորեն Արտավագոյը հայոց թագավորության և նրա հավերժության խորհրդանիշն է): Արտավագոյի անմահության երաշիյիքը տարածական և ժամանակային առումներով սրբագան կենտրոնում գտնվելու է: Եթե նա դուրս գա այդտեղից և մտնի աշխարհիկ տարածաժամանակային միջավայր, կոր-

ցնելով անմահության հատկանիշը. կստանա սովորական մահկանացուի հատկանիշներ: ¹⁹⁵ Իսկ նրա վերածվելը անժառանգ մահկանացուի համագոր է թագավորության կործանմանը: Թագավոր-արև իրորդանշանային համազորության մեջ դա հավասարվում է նաև տիեզերքի կործանմանը: Այսպիսով, նորից կանգնում ենք կործանողի և փրկչի (վիշապ և թագավորի որդի) հատկանիշներն անծնավորող Արտավազդի կերպարի առջև: Ուստիև, մի կողմից, (Եգիպտական կողմացի, Վարդան Վարդապետի) նրան շոթաւելու մեկնում է որպես վիշապների գործ, քանի որ վերջիններս մարդկանցից առանձնացնում են նրանց հերոսին կասեցնելով աշխարհը փրկելու գործը: Այսու կողմից Արտավազդին շղթայողները րարի ուժեր են, քանի որ շղթայելով նրան պահպանում են հերոսի անմահությունը, փրկելով աշխարհը կործանումից: ¹⁹⁶ Փրկչի հատկանիշների ավելի խտացված արտահայտություն են ստացել Փոքր Միերի կերպարում, որի շուրջը ծեավորվել է հայկական ժողովութական էպոսի վերջին գլուխը: Լինելով իր նախորդների ժառանգորդը նաև րացասական առումով, ըստ Երևույթին այն կազմում է շղթայված հերոսի առասպելույթի երջորդ շերտը: Վերջին Երկու շերտում շղթայված հերոսները կարծես թե սինթեզում են առաջին շերտում դրսնորվող վոշապ-արև հակադրությունը, իսկ դարրնի պայքարը վոշապի դեմ ի փրկություն արևի, վերսիճաստավորվում է որպես պայքար շղթայված հերոսի չար եռւթյան դեմ՝ ի փրկություն նրա րարի եռւթյան: ¹⁹⁷

¹⁹⁵ Արտավազդի տարածական տեղակոխությունը կնշանալի հավերժություն – ժամանակ հակադրության մեջ անցում առաջինց Երկրորդին: Տարածածւմանակային նման օրենքներ գործում են նաև սլավոնական թիվնայում: *С.Ю. Неклюдов*, Время и пространство в быту, с. 44: *Его же*, Душа убиваемая и мстящая, с. 66: Այստեղ անմահության պայմանը կողմնակի աչքից անմատչելի աեղում քայնված լինելու: Տես նաև *М.И. Стеблюин-Каменеский*, Указ. соч., с. 46: Ծեսում տարածածամանակային նման հատկանիշների մասին տես *M. Eliade*, Myth, dreams and mysteries, p. 115. *D. MacLagan*, op. cit., pp. 22, 28:

¹⁹⁶ Նման թեմա նկատելի է նաև հնդկութական նախառասպեկի վերականգնման ուղղությամբ արված փորձերում: *В.В. Иванов, В.Н. Топоров*, Инвариант и трансформации в мифологических и фольклорных текстах, с. 49.

¹⁹⁷ Այս առումով Արտավազդը նոտենում է Տիհրստերի հայտնի կերպարին: Տես *P. Radin*, Trickster: Նման գծեր

Եվ, վերջապես, չորրորդ շերտում հանդիպում է ծեսի քըստոնեացված տարրերակը. որտեղ Քրիստոսի կերպարը առասպելականացված է և ըստ ինչի էլ տեղի է ունենում դարրնի կերպարի երկատումը: Առաջին երեք ծեսերում նկատելի է վիշապամարտի առասպելական թեման, որտեղ զործում է վեշապարև-ամպրոպամարտիկ սյուժեն: Առաջինում այս սյուժեն առավել մաքուր ծեսով է դրսնորդում: Երկրորդում արևային հատկանիշները բնորոշ են թե վիշապային շղթայված հերոսին, թե ամպրոպամարտիկ դարրնին: Դարրնի պայքարը շղթայված հերոսի դեմ ավարտվում է իր արևային հատկանիշների ազատմամբ: Այս առումով դարրնի ծիսական կրանահարությունը համապատասխանում է Արտաշեսից Արտավազդին կամ Դավթից Միերին տրված անեծքի հետ: ¹⁹⁸ Հատկանշական է, որ Արտավազդի բնորոշ գծերից մեկը որսորդ լինելու է, ինչը հատուկ է նաև Սիերին: Արտավազդը գերվում է հենց որսորդության պահին: Որսորդը նաև ռազմիկ է, որով նշվում է շղթայված հերոսի ռազմական գործառույթը: Այսինքն՝ շղթայված հերոսը հավակնում է ոչ միայն գերազույնի գործառույթին, այլ նաև ռազմականին, դրանով իսկ ուղղակիորեն հակադրվելով առասպելական ամայրոպամարտիկ-ռազմիկ դարրնին: Ահա թե ինչու Արտավազդի ազատվելը Վտանգավոր է: դիտվում առաջին հերթին դարրնի համար: Նշված հարցերում հայկականի հետ րավականին նմանություններ ունի վրացական էպոսը շղթայված հերոս Ամիրանիի և դարրնի հակադրության դրվագներում:

Տարածամանակային կառուցվածքները ժեսում. և առասպելում: Բննարկվող պուտենում արտահայտվում է: հին աշխարհի ու կարգերի կործանման առասպելական թեման, ուստիև ծեսի համակարգում գործում են ժամանակային կոսմոսի խորհրդանշանային միջոցները և դարրին առասպելական հերոսի տիեզերապահապան հատկանիշները լրացվում

Նկատելի են նաև Պրոմերևսի կերպարում՝ *K. Kerényi*, op.cit., p. 180: Նման հերոսները համաշխարհային առասպելարանությանը բնորոշ երևույթ են և խոր արմատներ ունեն մարդկային հոգերանության մեջ *G.G. Jung*, op.cit., pp. 195-211:

¹⁹⁸ Անեծքը կուանահարությամբ գուգորդելու ավանդույթ է եղել նաև արխագների միջավայրում: *И.В. Азхин-Ахвл.* Առաջ. սույն, կազ. соч., с. 240.

Են ժամանակային կարգը պահպանողի հատկանիշով:

Ասվածն ավելի է անրսապնդվում ծիսառասպելական տարածաժամանակային հանատեքստը հաշվի առնելու դեպքում: Ըստ ավանդապատումների, վրշապը շղթայված վիճակում կախված է երկնքի և երկորի միջև, ինչը կարելի է դիտել որպես Տիեզերական առանցքի խորհրդանշանային դրսնորման ձև:¹⁹⁹ Նման խորհրդանշանային դրսնորում նկատելի է նաև շղթայված հերոսի պատումների վերը ներկայացված 2-րդ և 3-րդ շերտերում: Ժայռը կամ սարը և հատկապես Մասիսը հայոց առասպելական մտածողությունում ունի կենտրոնի խորհրդանշանային իմաստ: Դայ ժողովրդական ավանդական պատկերացումներում լեռները, սարերը, քարայրները դիտվում են միաժամանակ որպես թե՛ վիշապների կամ դների, թե՛ աստվածների միջավայր:²⁰⁰ Չնայած Ղ. Ալիշանը դա բացատրում է որպես հեթանոսական քուրմերի խորամանկություն, սակայն իր իսկ բերած մի շարք փաստերում նկատելի են այդ ուժերի հակամարտության դրսնորումներ, կապված սրբազն կրակի հետ:²⁰¹ Դա հատկապես, առնչվելով մեր կողմից քննարկվող խնդրի հետ. վառ կերպով արտահայտվում է Ղարբնաց քար կոչվող (որն, ի րեա, Ագուապարոի այրերից մեկն է) պաշտամունքային վայրի հետ կապվող ավանդությունում:²⁰² Ըստ դրա, Ղարբնաց քարում բնակվում են բազում դիմաց օր գիշեր լսվում է դարբինների կոանձայնը: Ենչու է, Սովորենացին որպես քրիստոնյա գործիչ, բացասական է արտահայտվությունը հեթանոսական աստվածներին, անվանելով նրանց «չաստվածք», իսկ ըստ երևույթին նրանց հետ կապված դարբիններին համարում է չարի կողմից գործող, սակայն մեզ համար ոչ այնքան հեղինակի վերաբերմունքն է կարևոր, որքան նրա թողած հիշատակությունը: Ըստ դրա, Ղարբնաց քարը դարդինների և դների նիաժամանակյա գործունե-

ության միջավայր է, որտեղ լսվում է դարբինների կօանածայնը: Ղ. Ալիշանը Ղարբնաց քարը կապում է հրապաշտության հետ. իսկ վերջինս էլ դարբինների հնոցների կրակների և սալերի կօանահարության հետ:²⁰³ Ղարբնաց քարի ավանդությունում հանդիպում ենք հակամարտության ուղղակի օրինակի. որում արծարծվում է նաև դարբինի կօանահարության ծիսականացվածության հարցը և կապը կրակի հետ: Սա իմաստային կառուցվածքով անմիջականորեն ընդհանրանում է լեռանը շղթայված հերոսի և դարբինի միջև գործող առասպելածիսական բնույթի կապերի հետ, դրսնորելով նույնական հակամարտության վայրի և կենտրոնի հատկանիշներ:²⁰⁴ Այս առումով շատ հետաքրքիր է սր. Ղավթի մասին վրացական մի ավանդությունում սրբի և վիշապի բնակության տարածական միջավայրի կառուցվածքը: Այն իրար վրա տեղադրված երկու քարանձավ է վերևում բնակվում է սուրբը. Ներքում վիշապը, որը սրբին ընդդիմանալու համար պատժվում է աստծո կրակով:²⁰⁵ Նշենք նաև, որ Մասիսի համար Տիեզերական առանցքի և կենտրոնի խորհրդանշանային համակարգը պահպանվում է նաև միաժամանակ չար և քարի ուժերի միջավայր լինելու մեջ:²⁰⁶ Այն Ազատ ու Բարձր որակումների հետ կրում է նաև հակառակ՝ Մութ որակումը:²⁰⁷ Արտավագրի Մասիսում շղթայված լինելը խորհրդանշանային նշանը մոսիկը տարածում է նրա վրա նույնական և մնացած գործուների հետ դառնում է նրա երկվության պատճառներից մեկը:²⁰⁸ Կենտրոնի և Տիեզերական առանցքի խորհրդանշանային իմաստը գոր-

²⁰³ Ղ. Ալիշան, Եշվ. աշխ., էջ 47-48:

²⁰⁴ Լեոնդ, ժայոր կամ քարը որպես սահսանայն տարր գործում է նաև այրանական հեթիարներում Տ. Վ. Ցևեյն, Կ семантике пространственных элементов. – Типологические усследования по фольклору. М., 1975, с. 201:

²⁰⁵ Պ. Գոսման. Գորա սվյատության մատերալները. Հայաստան, 1975, օմական կամ քարը որպես սահսանայն տարր գործում է նաև այրանական հեթիարներում Տ. Վ. Ցևեյն, Կ սեմантике пространственных элементов. – Типологические усследования по фольклору. М., 1975, с. 201:

²⁰⁶ Լեոնդ նման իմաստավորման հանդիպում ենք սկանդինավյան բանահյուսությունում: Ե. Մ. Մելետինսկի,

Скандинавская мифология как система, с. 43. *Ego же*, О семантике мифологических сюжетов в древнескандинавской (эддийской) поэзии и прозе. – Скандинавский сборник, т. 18, М., 1973, с. 146.

²⁰⁷ Ղ. Ալիշան, Եշվ. աշխ., էջ 35:

²⁰⁸ Ա. Երնջակյան, Մրտավագոյի առասպելի տիեզերածնական նշանակության հարցի շուրջը: -Երիտասարդ գիտնականների կոնֆերանս (գեկուցումների թեգիսներ), Եր., 1980, էջ 35:

¹⁹⁹ Նման ավանդություն կամ նաև Պրոմերևսի մասին, իոր նա շղթայված է երկնքի և եռորի միջև:

²⁰⁰ Ղ. Ալիշան, Եշվ. աշխ., էջ 46:

²⁰¹ Ամդ, էջ 33-53:

²⁰² Սովորենացին, Սատենագրութիւն, էջ 294-295:

²⁰³ Արվանտծյան, Երկեր, հ. 1, էջ 390: Ղ. Ալիշան, Եշվ. աշխ., էջ 43-48:

ծում է նաև ծիսակյան համակարգում՝ գնդանը որպես Տիեզերական ծառ, ձիսական գոհողության կենտրոն լինելու հանգանաքում:

Ժամանակային առումով ծեսի մասին ունենք երեք տարբեր տվյալ՝ ամեն շաբաթ օրվա վերջում ևամ կիրակի, Զատկի Ավագ հինգշաբթի երեկո կամ գիշեր, Նավասարդին: Շաբաթ օրը կամ սիրալին ցուցում է յոթ օրվանից կառուցված ամբողջական ցիկլի վերջը: Շաբաթվա վերջում ծեսի կատարումը համապատասխանելով առանձին ժամանակային հին ցիկլի նորոգման իմաստին, ներառվում է ծեսի համալեքստի մեջ: Լոռաջին հայացքից մի փոքր անսովոր կարող է թվալ հինգշաբթի օրվա գուգակցումը ծեսի հետ: Դայոց լեզվում, ավանդություններում կամ առասպելներում սրա պատասխանը չափագանց դժվար է գտնել: Այն կարծես թե նշմարվում է հնդեվրոպական ծագում ունեցող հին անգլիական լեզվում: Է. Թայլորի վկայությամբ, սաքսերի լեզվում շաբաթվա օրերից մեկը Thursday (հինգշաբթի) նշանակում է «ամպուայի օր» և ըստ նրա, երբ վերացվեց ամպուայի աստծո հետ կապված հավատալիքային համակրո, որոշ ժողովուրդների մեջ դրա արձագանքները պահպանվեցին միայն լեզվում:²⁰⁹ Դիմգշաբթին համարվել է նաև Յուլիսերի օրը:²¹⁰ Բերվածից կառելի է ներառել, որ հինգշաբթի օրը կատարվել են որոշակի բնույթի և բովանդակության ծեսեր՝ կապված ամպուայի աստծո հավատալիքային համակրոի հետ: Իսկ քանի որ հայերը նույնպես հնդեվրոպացիների ժառանգորդներ են, ապա որոշ առումով բացատրելի է դառնում վիշշապմարտի թեմայով և ամպուամարտիկ հերոսի հետ կապված ծեսերի կատարումը հինգշաբթի օրը: Տիկլային առումով կա մի հետաքրքիր պահ ևս: Ծեսը կատարվում էր Զատկին: Քրիստոսի հարության տոնին, որը ցիկլիկ և իմաստային տեսանկյունից համարյա թե համընկնում է հայոց արեգակնային տոնարով նոր տարվա հետ: Այդ շրջանը մարտ-ապրիլ, համապատասխանում է հայոց Արեգ ամսվան, որը որպես արեգակի ամիս՝

կապվում է տիեզերքի նորոգման հետ:²¹¹ Տիկլային այս իմաստավորումն ամրապնդվում է ծեսը Նավասարդի նախորդ կամ առաջին օրը կատարելու վկայություններով:²¹² Նավասարդը որպես նոր տարվա տոն, ունի ժամանակային խախտված կոսմոսի նորոգման և ամրապնդման իմաստ ու որպես այդպիսին, իր խորհրդանշանային և ծիսական համակարգի մեջ ներառում է նաև քննարկվող «շղթայված հերոսի» դարբնոցային ծեսը:²¹³ Նշվածը ցիկլիկ առումով կապվում է նաև Քրիստոսի խաչելության և հարության տոնական ցիկլի հետ: Ծեսի քրիստոնեացված շերտում Ավագ հինգշաբթուց Ավագ ուրբաթ անցումը, որպես Քրիստոսի խաչելության օր,²¹⁴ ցիկլային առումով համապատասխանում է ծեսի քրիստոնեացված ենթատեքստին: Վերջինս էլ կապված է նախաքրիստոնեական սիմվոլիկայի փոխանցմանը քրիստոնեականին, որում ամենից որոշիչներից է արև-ամպրոպային սիմվոլիկայի անցումը Քրիստոսին և հրեշտականերին:²¹⁵ Դա ցայտուն արտահայտություն ունի նաև հայոց միջավայրում և հաճախ Քրիստոսի խաչելությունն ու արեգակի խավարումը դիտվել է որպես փոխկապակցված երևույթ: Դրա հետ կապված են բացատրվել նաև ազգային դժբախտությունները ու հայեմնի հորի ավերածությունները օտարների կողմից: Այդպիսի բացա-

^{211.} Ա. Օղաքաշյան, Ամանորը հայոց տոնացուցում, ՀԱԲ, գք. 9, Երևան, 1978, էջ 11-20: Ա. Պմայակյան, Երկու դիտողություն հայ-ուրարտա-իրանական փոխազդեցությունների մասին: Դանրապետական գիտական նատուրոջան, Եվկրպած Ե. Լայալանի հիշատակին (գեկուցումների թեզիներ), Երևան, 1990, էջ 39:

^{212.} Արխազա-աղդական միջավայրում դարբին աստծուն ուղղված աղոթքը դարբինը հասարակության ներլիայությամբ անուն էր նոր տարվա նախօրեին Հ.С. Ճշանասյա, Ըմբռանք ու ժողովությունների մասին: Հանրապետական գիտական նատուրոջան, Եվկրպած Ե. Լայալանի հիշատակին (գեկուցումների թեզիներ), Երևան, 1990, էջ 39:

^{213.} Նոր տարվա նշված հմաստը և տարեկան ցիկլում ունեցած դիրքը ընորոշ էր ամբողջ Սերծավոր Արևելքին: Տես H. A. and H. Frankfort, op.cit., p. 33. G. Jobes and J. Jobes, Ouler Space: Myths meaning calendars, New York-London, 1964, pp. 44-49:

^{214.} Բիблեական անուանություն, ս. 589.

^{215.} Քրիստոսին տրվում են թե արևային և թե կայծակնային հատկանիշներ: Քրիստոսն իր երկրորդ զայտայան ունենալու է երկնային կրակի տեսք: Խրիստոնեական և օւթեական պարագաները, ս. յանչեական պարագաները, Մ., 1924 (բռն աշակերտ 1991). Բիբլեական անուանություն, ս. 484, 525, 666:

^{209.} Յ. Տավոր, ս. 400.

^{210.} Անդր.

տրություններ են տրվել օրինակ 1040թ. արեգակի խավարնանը, կապելով այն քրիստոսի խաչելության հաջար տարվա հետ ու դրանով բացատրելով բարբարոս ցեղերի ասպատակություններն ու կոտորածները Հայաստանում:²¹⁶ Այդպիսի բացատրություններում նկատելի է թռ ուղղահայաց ժամանակային և թե հորիզոնական կապեր՝ առնչված տիեզերքի և սոցիումի կարգի ընկալման կառուցվածքային ընդհանրության հետ:

Ժամանակի և տարածության ծիսական կառուցվածքն առավել ընդգրկուն և անբողջական է առասպելականից²¹⁷: Դրանում կարելի է ժամանակի կառուցվածքը բնորոշել անցյալ-ներկա-ապագա ուղղագծությամբ, իսկ տարածությունը հորիզոնական, որտեղ գործողությունները կատարվուն են մեկ տարածական հարբությունում:²¹⁸ Այստեղ բացակայուն է Տիեզերքի եռամասն ուղղահայաց կառուցքը: Փոխարենը գործում են կենտրոն-ոչ կենտրոն, սեփական-օտար տարածական կառուցվածքները: Չնայած հերուսին քարանձավում շղթայելու մեջ կամ անդունող գահավիժնելու տեսարանում կարելի է փնտրել ուղղահայաց կառուցքի արձագանքներ, սակայն այն չի կարելի ընդունել որպես դրսեռում: Բոլոր առանցքային դեպքերը և գործողությունները կատարվում են կենտրոնում: Ի դեպ, առասպել-վեպում գործում է երկու կենտրոն վիշտապների քաղաքը և քագավորի քաղաքը (սյու երկու լիենտյունները համապատասխանում են իւրուսի երկությանը): Նշված երկու կենտրոններն առասպելապներ ժամանակի վերջում միավորվում են նոր կենտրոնի լեռան մեջ, որտեղ շղթայվուն է հերոսը: Լեռը կամ

ժայռը խտացնուն է նշված երսու կենտրոնի արժեքները և հորդագույնական առումով դառնում զիսավոր կենտրոնը. որը կրում է նաև ուղղահայաց կենտրոնի հատկանիշներ:

Ծեսն, ի լրումն ասվածի, ունի իր ժամանակային և տարածական կառուցվածքները: Ծեսն ունենալով նախնական ակտը (չար հերոսի շղթայուն և բարու աօատում) վերարտադրելու հատկություն, ծեղը է բերում ժամանակային ուրույն հատկանիշներ, որոնցից զիսավորը ժամանակի պարբերականության հատկանիշն է: Վերն ասված ծիսա-առասպելական խորհրդանիշների վերլուծությունում տեսանք, որ ժամանակի հետ առնչվող համակարգում դարբնի վրա ընկած է այդ գործառույթը ապահովել ժամանակի պարբերականությունն այն նորոգելու միջոցով: Ծեսի տարածական կենտրոնին գնդանին վերը նշված ուղղահայաց կառուցվածքի հետ բնորոշ է նաև հորիզոնական կենտրոն լինելու հատկանիշը, որքանով որ ծիսական ժամանակում այն վեր է ածվում համայնական տարածական կառուցքի կենտրոնի: Ելենով ծեսի նշված տարածամանակային հատկանիշներից, կարելի է ասել, որ այն ամբողջացնում և առասպելի համապատասխան հատկանիշները: Ծեսի թե տարածա-ժամանակային և թե այլ խորհպանշանային միջոցներն ու արտահայտչածները ավելի կայուն են, քան բանահյուսականը, ուստի այն կարող է կմախքի դեր կատարել բանահյուսական շերտավորումներն ուսումնասիրելիս:

Դաշվի առնելով ծեսում ժամանակի հետ կապված ատրիբուտները և սև և սպիտակ շներ, որոնք նշում են հավերժությունը, ժամանակի շարունակականությունը ու պարբերականությունը, կարելի է ճշտել ծիսական ժամանակի նշված հատկանիշների փոխկապակցվածությունը:

Ժամանակը շարունակական է լուսի և խավարի, օր ու գիշերվա հաջորդականությամբ: Այն ստանում է ցիկլային բնույթ, երբ այդ շարունակային բնույթի հաջորդականության ութմին համապատասխան տեղի է ունենում Տիեզերքի արարումը: Ժամանակն անսահման կամ հավերժ չէ: Այն շարունակական է ցիկլի մեջ. Ամեն ցիկլի ավարտը հաջորդվում է նոր ցիկլի սկզբով, որը կրկնում է նախորդին, իսկ

²¹⁶ Գրիգոր Խլաքեցի. Յիշատակարան աղետից Գրիգորի հյուաքեցվոյ. Վաղարշապատ, 1897: Մատրես Ուռայեցի, ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 35, 45: Դ. Արշամ, նշվ. աշխ., էջ 133:

²¹⁷ Լուսասլեւալից բառն այստեղ մեծ վերապահումով է օգտագործվում: Դրանում նկատի է առնվում ոչ հինավոր առասպելականը, այլ ավելի շատ վիպականը. ուսնի որ շղթայվածի առասպելը խիստ վիպականացված է:

²¹⁸ Ժամանակի և տարածության պրոբլեմները բավականաչափ ուսումնաթիրված են սկավունական բանահյուսաթյանը նվիրված գրականությունում Հ.Ю. Խելլօլօվ, Վремя и пространство в биологии. Его же, Статистические и динамические начала в пространственно-временной организации повествовательного фольклора. Т.В. Ցևьян, указ. соч. Б.Н. Путалов, указ. соч.

Երկուսը միասին կրկնում են ժամանակի առաջին ցիկլը, որի հետ է կապվում տարածական Տիեզերքի երկինքի ու երկրի, հյուսիսի ու հարավի, արևելքի ու արևմուտքի արարունը և ամեն ինչ տեղաբաշխումը Տիեզերքում այդ տարածական կառուցյին համապատասխան: Այսպիսով, միհապոետիկ նուառողությունը ժամանակի շարունակականությունը դնում է սահմանների սկզբի և վերջի մեջ, որը կազմում է ցիկլ: Մնացած հետագա ժամանակը նույնպես կառուցված է ցիկլերից, որոնք բոլորը վերարտադրում են Առաջին ժամանակային ցիկլը այն կրկնելու միջոցով: Դրա շնորհիվ ժամանակը ստանում է նոր որակ՝ Ենթարկվում է պրոֆանացման: Վերջինս ժամանակի շարունակականության հատկանիշն է, որը որակապես տարբերվելով ժամանակի վերը նշված ներցիկլային շարունակականությունից, ներկայանում է որպես (առաջին ժամանակային ցիկլը վերարտադրող) ցիկլերի հաջորդակոնությանք նշվող շարունակություն: Վերջինս կարող է ստեղծել հավերժության պատրաճք: Ըստ իս, հավերժությունը Տիեզերքի արարչագործությանը նախորդող ժամանակային վիճակն է, այսինքն դուրս է նշված ժամանակային չափումներից և չի Ենթարկվում նրա օրենքներին: Դա կարելի է նկատել նաև Արտավագրի որպես հավերժության խորհրդանիշի, ագատվելու (շղթայի բարձելը) և ժամանակի սկզբնավորման (նոր տարի, նոր շարաթ, նոր օր) դրվագում: Արտավագրի երկրնությունը իր ժամանակային ատրիբուտիկայով Արևելյան նշակույթում գուգահեններ ունի ժամանակի և դրա հետ կապված հերոսների կերպարներում:²¹⁹ Ասվածն իմաստային և կառուցվածքային կապի մեջ է գտնվում Արտավագրի վերը նշված հատկանիշների հետ, որոնց համայնքում դարբինը նշված նեսում ներկայանում է. ա) Տիեզերքի արարչի բ) այն պահպանողի գործառույթներով:

4. Դարբինը և Հուդան ծիսական համակարգում

Զատկի ծիսակարգում, բացի վերը քննարկված «շղթայված հերոսի» ծեսից, կա դարբնոցի հետ առնչվող և մեկ ծես, որը կապված

²¹⁹ S.G.F. Brandon, op. cit., pp. 51-61.

է քոհստոնեական հավատալիքային համալիրի հետ: Շա պայմանականորեն կարելի է անվանել «Հուդայի աչքը հանելու» ծես: Դրա եռթյունը դարբինների կողմից Ավագ հինգշաբթի օրը հատուկ ծիսական մեխերի պատրաստման սրբագանացված գործողությունն էր: Այդ մեխերով գյուղացիները Ավագ ուրբաթ օրը հարվածում էին գետնին, իբր Հուդայի աչքը հանելու, որը բացատրվում էր այն բանով, իբր թե այդ օրը Հուդան գետնի վրա է, իսկ Քրիստոսը՝ խաչի:²²⁰ Այսպիսով, ծեսը մտնում է զատկի Ավագ հինգշաբթի-ուրբաթ կատարվող դարբնի ծիսական ցիկլի մեջ և քրիստոնեական շերտում առնչվում է Քրիստոսի խաչման ավանդույթի հետ: Ծեսի առանցքը կազմում է դարբին-մեխ-Հուդա շղթան: Որպեսզի պարգենք դարբնի դեբն այս ծեսում, անհրաժեշտ կլինի անդրադառնալ շղթայի մյուս անդամների պարզաբանմանը: Հուդան քրիստոնեական առասպելաբանությունում հանդես է գալիս որպես բացասական կերպար: Դրա հիմնական պատճառը նրա կողմից թույլ տրված դավաճանությունն է ուսուցչի և Աստծո որդու հանդեպ: Անկախ արարքի տարբեր մեկնություններից, նա դավաճան է, քանի որ նրա արարքն այդպես է որակում ինքը՝ Քրիստոսը, «գարլտնի ընթրիթ» ժամանակ արված կանխագուշակման մեջ: Դուկասի ավետարանում ուղղակի ասվում է, որ մատնության պահին սատանան մտավ Հուդայի մեջ:²²¹ Նույնը Հովհաննեսն է ասում, որ սատանան (Հուդայի) սրտի մեջ է զցել, որ մատնե նրան (Քրիստոսին):²²² Հուդայի արարքի մեջ կա աննաջուր, սատանայական որակ, որն արտահայտվում է նաև նրա կալսվելով ինքնասպան լինելու նկարագրությունում:²²³ Ավետարաններում Հուդայի նկատմամբ հակարանքը դրսնորվում է մինչև նրա հանցանք գործելու պահը: Նրան ներկայացնում են նաև որպես Ժաւատ գանձապահի: Իսկ ըստ հայ քրիստոնեական ավանդույթի, սատանան

²²⁰ Ե.Լավայան, Երկեր, հ. 2, էջ 286, Ա. Թաղևոսյան, ԴԱՆ, տ. 1, էջ 58:

²²¹ Աստվածաշունչ, Ավետարան Դուկասի, գլուխ հԲ, էջ 1191:

²²² Աստվածաշունչ, Ավետարան Հովհաննեսի, գլուխ ծԳ, էջ 1219:

²²³ Ըստ ավանդության, ծառից կախվելով նաև սանաւուն անհծվածների պաստիժն էր, տես ՄՀԱ, տ. 1, էջ 580:

հանարկություն էր Աստծո գանձապահը:²²⁴ Նրա բացասականության հատկանիշն էր նաև այն, որ նա տարբերվություն է նյութ առաջըալներից իր հնագավայրով: Ի տարբերություն ննացած ուսաննեկի, որոնք ծնունդով Գալիլեյից էին, Դուդան ծնունդով պատկանում էր այն հասարակությանն ու ազգին, որը խաչեց Զրիստոսին: Նրա անվան մեջ խտացված է Փրկչին խաչող ողջ ազգի մեղքը:²²⁵ Զրիստոնեական առասպելաբանության ֆոնի վրա ծեսի պատճիք զործողությունը ուղղված է չարի դեմ: Ասկայն հարց է ծագում, թե ինչո՞ւ Դուդային պատժելու զործողությունը կատարվում է մեխուսով: Պարզենք, թե մեխուս հայոց ծիսական ավանդույթում ինչպիսի կիրառություն և նշանակության է ունեցել: Բերենք մի շարք օրինակներ: Երբ հարսը ծննդաբերման հաջորդ օրը վեր էր կենում, նրա անկողնում մի մեխուս էր խրում, ասելով «մեխուս խտեղ ամրանա, տղան ա Ֆոն ծիզ մնա».²²⁶ Այսինքն կարելի է հասկանալ, որ այդ տեղում մեխուս հողի մեջ ամրագնելը պետք է ապահովեր երեխայի առողջ և անփորձանք լինելը: Մեխուս չարխափան կիրառության հետ կապված մի սովորույթ էլ հայտնի է եղել Լոռու հայերին: Ըստ այդմ, հիվանդաբեր չար ոգուն սպանելու համար, այնտեղ որտեղ կուը հիվանդանում էր, մեխուս էին խրում հողի մեջ.²²⁷ Լեռնային Ղարաբարդի հայերը, որպեսզի խուսափեն չար աչքից, մեխուս էին զամում սուրբ ծառին, իբր թե չարն են մեխում.²²⁸ Ըստ մեկ այլ սովորույթի, եթե իշխող լուսինը Վճառում էր երեխային, ապա նրան թժկելու համար կանգնեցնում էին սյան մուտ և սյանը երեք մեխուս մեխում:²²⁹ Նշված բոլոր սովորույթներում էլ, ինչպես նկատեցինք, մեխուս ունի չարխափան կիրառություն: Մի դեպքում այն կիրառվում է կապված Տիեզերական առանցք խորհրդանշող սուրբ ծառի կամ սյան հետ, մի այլ դեպքում էլ հողի կամ գետնի: Այդ երկու ծիսական միջավայրերն էլ չարի կրող են: Տիեզերական ծառի տակ բնակվում է չար ուժը՝ վիշապը, Զրիստո-

Աեական ապահովությամբ ստանան, որի կերպավումներից մենք էլ օծ է^{ՀՀ} և ա շարող է հայտնվել նաև Շառի բնի վրա: Դա սովորաբար տեղի է ունենում քառսային վիճակներում և դրա ժիսական լուծումը սպանելու միջոցով չար ուժին նորից իր միջավայր ստորերկրայք տևափոխելու մեջ է:

Բերված օրինակներում չար աչքի կամ հիշանդության բուժնան հետ կապված գործում է վերը բազմից շոշափված ծիսա-առասպելական թեման: Դիվանդությունը հայոց մեջ, ինչպես և հնդեվրոպական միջավայրում, բացատրվում է մարդու մեջ սատանա կամ վիշապ մտնելու ավանդությամբ²³¹ և դրանից ելքը առասպելական Ամպրոպամարտիկի օգնության մեջ է, որն իր գենքով սպանում կամ վտարում է հիվանդության պատճառ դարձած վիշապին:²³² Այս սխեման ընկած է մի շարք մոգական գործողությունների հիմքում: Եթե փորձենք բացատրել վերջին ծիսական օրինակը, ապա կարելի է ասել, որ հիվանդ երեխան, որպես չարի կրող՝ սեմանտիկորեն նույնական է վիշապ կրող Տիեզերական սյան հետ: Ուստի (քառոտիկ վիզակի կարգավորումը) սյանը երեք մեխ լիսինով խորհրդանշում է նրա վրա գտնվող օծի սպանությունը: Աև էլ նմանողական մոգության կանոններով²³³ տարածվում է նաև հիվանդ երեխայի մեջ մտած վիշապի կամ սատանայի վրա բուժելով հիվանդին: Մոտավորապես նույն մեխանիզմն է գործում նաև Սուրբ ծարի վրա «չար աչքը» մեխելու ծիսական գործողությունում: Այստեղ հետաքրքիր գուգահեռ է աչքը, քանի որ քննարկվող ծեսում նույնապես կարևոր տարր է Հուդայի «աչքը»: Եթե ընդունում ենք, որ Հուդան չար է, ապա «չար աչքը» և «Հուդայի աչքը» արտահայտությունները սեմանտիկորեն նույնանում են: «Աչքը» հայերենում ունի սկզբի, ինչ-որ բանի աղբյուրի նշանակություն

Հայոց Պատրիարքություն, Եռ.՝ 1982, Խ. 82:

²²⁵ А. Домбрович, указ. соч., сс. 33, 81.

276 *Lithuanian Folktale*, p. 1, no. 172:

Г.Ф. Чурсин, Культ железа у кавказских народов.
с. 84

⁷²⁸ Ст. Анишлан указ. соч. с. 160.

²²⁹ Ст. Абасян, указ. соч., с. 166.

230 Աղօնոց, Պատմություն. էջ 80: Չար աչքի և սև օծի այլաբանական ընդհանուրությունն ակնհայտ է Ե. Լալայանի գրասով չար աչքի ղեմ ուղղված աղործներից մեկում. տես Ե. Լալայան. Եսունը. հ. 1. էջ 343-349:

Առաջին համարը, սկզբու, թ. 1, էջ 343-345.

31 Յավը, հիվանդությունը քշելու համար հայերը հաճախ օգտագործել են կրակի կամ երկարի սրբազն ուժը. տես **3.Բ. Խարաբան**, սկզբ շօւ., էջ 55:

В.Н. Топоров, К реконструкции индоевропейского ритуала и ритуально поэтических формул (на мотиве заговоров)

²³³ Ամանողական մոգության մասին տես Զ. Զ. Ֆրեզեր, Ոսկե Ծրութը, Երևան, 1989, էջ 19:

կետ, որտեղից սկսվում է, ծագում է կամ ծնվում է մի բան:²³⁴ Այս առօսմով «չար աչքն» ունի նաև չարը կուտակող, պահստարան, կրող իմաստ: «Պատահական չէ, որ ժողովրդի մեջ դրա հետ կապված բազում նախապաշարումներ կան: «Չար աչքը» ծիսականորեն Սուրբ ծարի վրա մեխելն իմաստարանորեն նույնանում է չար նախասկզբին (վիշապին կամ սատանային) գերելու հետ:

Վերը իիշատակված ծեսերից առաջին երկուսում հանդիպեցինք մեխի չարխափան հատկության և հորի հակադրությանը: Դողը երկակի խորհրդանիշ է:²³⁵ Որպես պատարերո՛ այն բարի է, սակայն դրան հակառակ, նաև չարի՝ վիշապների և օձերի միջավայրն է, հատկապես գարնանամուտին, մինչև գարնանացան: Ժողովրդական պատկերացումների համածյան, այդ շրջանում չար ոգիները բնակություն են հաստատում հողում և գարնանամուտին կատարվող երկրագործական ծիսական շրջանն ուղղված է այդ չար ոգիներին այնտեղից վտարելուն և ոչնչացնելուն: Նրանց դեմ պայքարելու միջոցը հաճախ համարվում է երկնքից ընկնօղ կայծակը կամ շիկացած երկաթը, ժողովրդի մեջ տարածված հավատալիքով, այդ-

պիսի չար ուժերից էր նաև Ծվոտ կոչվող ողին. որը հողում բնակություն է հաստատում մարտ անսվա սկզբներին:²³⁶ Որպեսզի այն տուն չմտնի, որան շեմին ներսից կամ դրսից երկաթ էին դնում. քանի որ Ծվոտը վախենում էր երկաթից:²³⁷ Արցախում չարը տուն չմտնելու համար դրան շեմին մեխ էին մեխում:²³⁸ Նման սովորույթ ունեցել են նաև լաքերը:²³⁹ Կարելի է ասել, որ գետնի մեջ մխվող մեխը հիվանդության կամ ծնունդի ժամանակ նմանողական մոգության հնարք էր, որով հորի մեջ բնակվող չար ոգուն սպանելու միջոցով ոչնչացնում էին նաև հիվանդության պատճառ դարձած կամ նորածնի համար այստեղիալ վտանգ ներկայացնող չար ուժերին: Նշված հակառակություններում երկաթը, կայծակը կամ երկնային շիկացած երկաթ-հոլորը և մեխը որպես չարխափան, նույնանում են: Ըստ այդմ, մեխի խորհրդանշանային իմաստը մոտենում է կայծակին կամ երկաթին և կարող է մեկնաբանվել որպես զենք, որով վերին ուժը կովում է ստորին՝ քառսային սկիզբը ներկայացնող ուժը դեմ: Ծեսի համատեքստում դա արտահայտվում է այսպես: Մեխը խորհրդաշում է այն զենքը, որն ուղղվում է Քրիստոնեական բարու (Քրիստոսի) հակառակորդ ուժի սատանայի ժամանակավոր կրողի դեմ: Այդ մեխի պատրաստողը դարբինն էր: Փաստորեն դարբինը ծեսի համատեքստում ստանում, չչարի ու բարու պայքարում բարու համար գենքեր պատրաստողի դեր: Սա դարբնի (հնամենի ծիսա-առաստելական կերպարի հետ կապված թեմաներից է և ունի բազմաթիվ գուգահեռներ համաշխարհային առասպելաբանության հետ: Որպես օրինակ կարելի է բերել Ղեփեստոսին, որը Զևսի կայծակները կոռուն է,²⁴⁰ Կուսար-ի-Հուսարն սեմական առասպելաբանությունից, որպես Բակու ամպրուի աստծո զենքեր կոռողի,²⁴¹ Տվաշտարին որպես Ինդրայի զենքեր պատրաստողի,²⁴² Կալվի-

²³⁴ Աչքի և արթյուրի սեմանտիկ ընդիանրությունը բնորոշ է ամրող հնդեվրոպական միօպալատին: *T.B. Гем-кроэльде, В.В. Иванов*, սկզ. սու., մ.2, ս. 675-676: Նշված կապը սլավոնական միջավայրում տես *Н.И. Толстой*, Славянская географическая терминология, М., 1969, ս. 207-210: Նման սեմանտիկ կամ նկատելի է նաև Օդին աստծու արքի և Միմիր կախարդական աղբյուրին վերաբերող էպիկական դրվագի ենթատեքստում. *E.O.G. Petra*, op.cit., ս. 63: Աչքը որպես սկիզբ, կենդանուրյան խորհպանից են դիտում նաև ցելյոնյան քանդակագործները. *A.M. Hocart*, Turning into stone, The life-giving myth and other essays, ս. 37: Նման սպորույթ են ունեցել նաև եգիպտացիները. *М.Э. Матթе, Древнеегипетский обряд отрезания уст и овец*. – Вопросы истории и археологии, մ.5, М., 1958, ս. 345-359: Այս բնորոշ է աֆրիկյան այլ բնիկ ցեղերի ևս, տես նույն տեղը *C. Lienhardt*, Divinity and experience, Oxford, 1961, ս. 10: Աչքը համարվել է հոգու ապաստարան և կապվում է նաև արևի ակնի հետ. *М.Э. Матթе*, Тексты по парамид-заянокоянью ритуал, Вестник древней истории, М., 1947, № 4, ս. 42: Աչքերի ընդգծված պատկերումով դիմակները և քանդակները թույլ են տալիս ենրադրիլու, որ հնում դրանց տրվել է հատուկ նշանակություն. *M. Gimbutas*, The Gods and Goddesses of old Europe 7000-3500: Myths, legends and cult images, Los Angeles, 1974, ս. 57-65: Պետք է ասել, որ լրակի և չար աչքի միջև հակադրությունը դըսւորվում է հունական առասպելաբանությունում Պոլիֆենա չար կիկլոպի կուրացման դրվագում *G. S. Kirk*, op. cit., ս. 164: Նման սեմանտիկա կարելի է նկատել նաև դադղանի, որպես չար աչքից պահպանող հմայիլի, սիմվոլիկայում:

²³⁵ Ծես այդ մասին *D. MacLagan*, op.cit., pp. 27-28:

²³⁶ Յ.Յ. Խարատյան, սկզ. սու., ս. 45:

²³⁷ Գ.Փ. Կորսին, Կультъ железа у кавказских народов, с. 85.

²³⁸ Անդ. էջ 78:

²³⁹ Անդ:

²⁴⁰ *Ա.Ա. Тахо-Году*, սկզ. սու., ս. 70, 80. *Ո. Գրենիս*, սկզ. սու., ս. 97. *E. Charles, M.S. Mann*, op. cit., ս. 58:

²⁴¹ *ՄՀՄ*, մ. 2, ս. 21, 30.

²⁴² *Ригведа*, 1-11, ս. 263-264. *ՄՀՄ*, մ. 2, ս. 496.

սին Պերկունասի զինագլործի.²⁴³ Քրիստոնեական ավանդույթուն նման հրեղեն նետերով է օժտված Գաբրիել հրեշտակապետը:

Յետաքրքիր է, որ Յուղային պատժողի Երկնային Տիեզերապահպան ուժի դերը կատարում է համայնքը, հանձին տղամարդկանց: Դարբինն, այս առունով հակաղորվում է չար ուժին, որպես բարի ուժ (գենք-մեխեր է պատրաստում Յուղային պատժելու համար): Յիշենք, որ այս հակաղորության օրը Չարչարանց շաբաթվա Ավագ ուրբաթն էր, որն, ինչպես հայտնի է Քրիստոնեական ավանդությունից, Քրիստոսի խաչելության օրն էր: Որպեսզի ցույց տրվի Քրիստոսի հակաղորությունը Յուղային ժողովրդական ավանդությը կիրառում է «Յուղան գետնի վրա է, Քրիստոսը խաչի» խոսքային բանաձևը:²⁴⁴ Ինչպես նշվեց վերը, ըստ հրեական ավանդության ծառի կամ խաչի վրա բարձրացվում էին անհծվածները: Քրիստոսը հրեական միջավայրում այդպիսին էր, ուստի և խաչ բարձրացվեց: Սակայն որպես Քրիստոսի խաչելության պատճառ, Քրիստոնեական աշխարհի համար անհծվածը Յուղան էր:²⁴⁵ Որպես անհծվածներ, Քրիստոսին ու Յուղային տրվում է նույն կարգավիճակը: Մեկսը որպես ծիսական առարկա, թե Քրիստոսի և թե՝ Յուղայի համար ընդհանուր պատճամիջոց է: Սակայն նրանք, ում կողմից անհծված են Քրիստոսն ու Յուղան, միանգամայն հակաղիր ուժեր են: Յուղային անիծողների (քրիստոնյաների) հակառակորդն են (նույնական Յուղայի հետ) նաև Քրիստոսին խաչողները: Եվ, ըստ Եությւն, «Յուղայի աչքը հանելու» ծեսն ուղղված է ոչ միայն Յուղայի, այլ նաև Քրիստոսի խաչելության պատճառ դարձած ուժերի դեմ:²⁴⁶ Դա հատկապես շեշտվում է «Յուղայի աչքը» արտահայտուրիամբ: Պատահական չէ, որ որպես ծեսի նպատակ շեշտվում է, ոչ թե Յուղային սայանելը, այլ նրա աչքը հանելը: Այսինքն հանգցնել այն ակրությունը, որտեղից բխում է հակարիստոնեական չւսրը: Դարբինն, ի տարբերություն Քրիստոսի խաչելության մեջ ունե-

ած դերի,²⁴⁷ այս ծեսում թե նրոնապաշտամունքային և թե առասպելաբանական տեսանկյունից ունի դրական հերոսի դեր: Մարդարկիտ դիտարկման դեպքում կարելի է նկատել, որ ծիսական, առարկայացված խորհրդանշանները շատ ավելի լայն իմաստավորում ունեն. քան կարող էին ունենալ զուտ քրիստոնեական ծիսա-առասպելական խորհրդանշային հանակարգին պատկանելության դեպքում: Ծիսական սիմվոլիկան կրող գլխավոր տարրերին հիմնականում տրվում են ժողովրդական բացատրություններ: Դրանց արմատները գնում են մինչքրիստոնեական առասպելա-ծիսական ժամանակաշրջան և կրում են հնամենի տիեզերաբանական պատկերացումնեկի հետքեր: Այսպես, ծեսի «Յուղայի աչքը» մեխով հանելու բացատրությամբ տեքստն անձանոթ է Քրիստոնեական առասպելաբանությանը: Ինչպես հայտնի է, Յուղան գոջալով իր արարքը, ինքնասպան է լինում: Այսինքն մեխով և երրորդ ուժի կողմից Յուղայի պատժվելն առկա է միայն ծեսում: Ծիսական խորհրդանշանային իմաստավորում է դրված նաև հողի որպես չար ուժի կրողի բացատրության մեջ: Այս որպես նախաքրիստոնեական տիեզերաբանության տարր պահպանվել է ժողովրդի մեջ և, հավանաբար, հարմարեցվել Քրիստոնեական խորհրդանշանային համակարգին: Հնամենի արմատներ ունի նաև «աչքը» և դարբնի առասպելական կերպարը, որը չի գործում քրիստոնեական առասպելաբանության մեջ: Եթե փորձենք ծեսի տեքստը հնաստաբանել, ելակետ ընդունելով ժողովրդական ավանդությունում պահպանված հնամենի շերտը, ապա կիհաջողվի վերականգնել ծիսա-առասպելական այն նախական շերտը, որին հետագայում հարմարեցվել են քրիստոնեական խորհրդանշանները: «Չար աչք» արտահայտության տակ կարելի է հասկանալ չար նախասկիգրը, որի ծիսա-առասպելական արտահայտությունը հայոց մեջ վիշապ կարգախափան ուժն է, որը հաճախ մտնելով հողի մեջ, իսկափանում է նրա պտղաբերությունը: Ուշադրություն դարձնենք, որ «Յուղայի աչքը» համար որպես միջավայր է ընտրված հողը, որը մասնակիորեն կրում է վիշապային միջավայրի խորհրդանշային ի-

²⁴³ ՄԻՄ, ու. 2, ս. 618.

²⁴⁴ Ա.Թաղենոյամ, ՂԱՆ, ու. 1, էջ 58:

²⁴⁵ Ա. Դոմենիս, սկզբ. սու., ս. 81-82. Է. Բենան, սկզբ. սու., ս. 257-258. Բնություն էնցիկլոպեդիա, ս. 370.

²⁴⁶ Այլուրը: դա է պատճենը, որ պատժող ուժի ծիսական դերում ոչ թե անհատն է, այլ հասարակությունը:

²⁴⁷ Այդ մասին խոսվել է նախորդ ծեսը վերլուծելիս:

մաստը: Դարբնի կողմից կատարվող անձրևեր ծեսի վերլուծությունում արդեն ցույց ենք տվել մեխի և կայծալիյի, որպես վիշապասպան զենքի, ընդհանրությունը: Կարելի է ասել, որ այդ ընդհանրությունը գործում է: Նաև այս ծեսի այն որվագում, եթե հոդում գտնվի վիշապային նախասկիգը (Յուլայի աչք) սպանվում է: Դարբնի պատրաստած գենքի կայծակ խորհրդանշող մեխի միջոցով: Դարբինն այս ծեսում որսանորվում է: Առողջ Ամպրոպանարտիկի գենք պատրաստողի որակով: Նկատենք, որ նա ոչ թե ինքն է կոիշը մոդում, այլ նրա գենքերով պայքարողի դերում են Ամպրոպանարտիկի գործառույթ կրող համայնքի տղամարդիկ: Նշված համատեքստում դարբինը պահպանում է բարի, երկնային ուժի ծիսական դերը: Այսպիսով, «Յուլայի աչքը» հանելու ծեսում հանդիպում ենք թեմատիկ երկու քրիստոնեական և հինամենի նախաքրիստոնեական շերահի: Դրանց որվագում համադրության դեպքում կարելի է ստանալ հետևյալ ընդհանրական պատկերը:

I. ա. դարբին, բ. մեխ, գ. համայնքի տղամարդիկ, դ. «Յուլայի աչք»:

II. ա. դարբին, բ. մեխ, գ. համայնքի տղամարդիկ, դ. Վիշապ:

Սրանից կարելի է եգրակացնել, որ քրիստոնեական շերտը վիշապամարտի իմաստ ունեցող ծեսի փոխակերպումն է, որտեղ վիշապին, որպես քրիստոնեական չարության խորհրդանիշ, փոխարինում է Յուլան: Դարբինը երկրորդ շերտում պահպանում է առաջին շերտի ծիսական գործառույթը և իմաստավորումը, չենթարկվելով եական փոփոխության: Եթեկու դեպքում էլ նա հանդես է գալիս որպես տիեզերապահպան, բարի հերոս:

5. Դարբնոցի տաշտի ջրի բուժական հատկությունների մասին

Գիտարշավների ընթացքում մի շարք գյուղերից գրանցվում է դարբնության հետ առնչվող յուրօրինակ բուժամիջոց: Յուրօրինակությունն այն է, որ առաջին անգամ հանդիպում ենք դարբնոցային միջավայրում լիրավող իիմնատարրերից մեկի՝ ջրի ծիսական օգտագործմանը, որպիսի երևույթ ծեսերից և ոչ մեկում չենք առնչվում: Եթե մինչ այսն քն-

նարկված ծեսերը կամ ծիսական գործողությունները կապված էին դարբնոցային գործընթացի մասերը կազմող երկաթի տաքացման հետ, ապա ի դեմս այս ծիսական բուժամիջոցի, թվարկված տեխնոլոգիական միջոցների շարքն համարվում է դարբնոցային աշխատանքային գործըթացի կարևոր և անհրաժեշտ մասը կազմող միջման գործողությամբ: Բուժամիջոցի էությունը «Վախ բոնելու» մոգական գործողությունն էր: Վախեցած մարդուն բուժելու նպատակով տարբեր միջոցների հետ միասին,²⁴⁸ ժողովիրի մեջ գործում էր նաև դարբնոցի տաշտից վերցված ջուր իմացնելը: Անպայման էր ջրի օգտագործված լինելը, այսինքն ոք նրանում դարբինը երկաթն առարկա միայած լիներ: Այդպիսի ջուրը համարվում էր «զորավոր»:²⁴⁹ Նշված սովորույթը գրավոր աղբյուրներում մեծ չի հանդիպել: Յայկական միջավայրում հայտնի չեն դարբնոցի ջրի որևէ այլ ծիսական գործաժողություն: Դարբնոցի ջրի հետ կապված նման արարողության լյարելի է հանդիպել նաև արիազնների ծիսական կյանքում:²⁵⁰ Մեր նպատակն է պարզել դարբնի գործառույթն այս բուժական գործողությունում: Պայմանականորեն կարելի է առանձնացնել երկու գործողություն միսում և բուժում: Մխումը կատարում է դարբինը, բուժումը՝ վախ բոնողը: Մխումը հնոցում որոշակի աստիճանի շիկացված երկաթը ջրի մեջ մտցնելու և այդ ջերմամշակման միջոցով մետաղն ամրացնելու գործողությունն է:²⁵¹ Պետք է կարծել, որ այս տեհինոլոգիական գործընթացն ուներ նաև ծիսական իմաստավորում, որն էլ պատճառ է դարբնոցի ջրեթ կիրառմանը որպես մոգության միջոց: Բանն այն է, որ միջաված ջուրը համարվում էր «զորավոր», այսինքն սրբագործված, կամ չարից մաքրված: Եթե միխումը արտահայտենք «ծիսական լեզվով», ապա այն դարբնի կողմից հուր-երկաթի հարաբերակցումն է ջրի հետ: Կան մի շարք օրինակներ, որոնցում ջուրը համարվում է չարի կրող: Խոսքը վերաբերում է հատկապես չիոսող

²⁴⁸ Ա. Թաղևոսյան, ԴԱՆ, տ. 1; էջ 79, տ. 2, էջ 7, էջ 67:

²⁴⁹ Անդ, տ. 1, էջ 79:

²⁵⁰ Յ. Արազինի, Հարուստ օքանակ գերան առ կամն, ս. 150.

Չրին,²⁵¹ չնայած հոսող ջուրը բացարձակ բացառություն է:²⁵² Դայնի մեջ հայտնի են միշտ բնորոշ ավանդություններ: Դրանցից մեկի հանաձայն, Երեխային լողացնելիս ջրի մեջ հրահան կամ պողպատ էին դնում, որպեսզի չարքերը չվճասեն նրան:²⁵³ Դրան մոտ մի սովորութիւն հանաձայն էլ Երեկոյան լողանալիս «նի կրակ են ծգուն ջրի մեջ», որ «չարքերը չխփեն և թողնեն փախչեն»:²⁵⁴ Վերը ըննարկված ծեսերից մեկի նիշոցով արդեն ծանոթ լինելով հրահանի ծիսական ինաստին²⁵⁵ և հանենաւելով բերված երկու ծիսական սովորությունների հանատեքստները, կարելի է նկատել Ենթատեքստային ընդհանրությունը և հրահանի ու կրակի սենանտիկ կազմը: Այսինքն երկու սովորություն էլ ջուրը հանդես է գալիս որպես չարի միջավայր և դրա պոտենցիալ կրողը: Ի հակադրություն ջրին, գործածվում է հրահանը (պողպատ, որ Երկնային հուրի իմաստ ունի) և կրակը: Ասպիսով, բերված սովորությունը ջուրը կրակի և ուռողպատի հետ կազմում է այն բնական հիմնատարրերի հանակարգը, որի հետ աշխատանքային գործընթացում գործ ունի դարբինը: Այդ հիմնատարրերից գլխավորը համարվում է կրակը: Դարբինը համարվելով այն տիրապետողը, իրեն էր Ենթարկում բոլոր պինդ նյութերին հնագանդեցնող նյութը Երկարը:²⁵⁶ Այս գնահատականը բնորոշ է այլ ժողովուրդների կողմից դարբնի ծիսական գործառութիւն հաստավորմանը և շատերը դարբնին որպես լրաւի ներկայացնող ուժ, հակադրում են ջրին:²⁵⁷ Վանա լճին վերաբերող ավանդությունը հայություն է կազմուել և առաջականացնել առաջական արժականական գործառությունները:

Բյուններից մեկում (որի մասին նախորդ ծեսերի վերկուծությունում նույնպես խոսվել է) կածու թե հանդիպում ենք վերը բերված սովորությունների բանահյուսական տարբերակի: Ըստ այդմ, Վանա լճում բնակվող Վիշապներին, երբ նրանք մեծանալով վտանգավոր չափերի են հասնում, իրեշտակները շղթայելով բարձրացնում են Երկինք, ուր նրանք արեգակի իրից այրվելով սպանվում են:²⁵⁸ Նկատելի է հակադրությունը վերին և ստորին ուժերի միջև, որոնք հակադրություն են նաև իրենց ուղեկցող ատրիբուտները հուրը և ջուրը (արեգակ և լիճ): Ավելորդ չի լինի նշել, որ հայոց մեջ Վիշապ ասելով հասկացել են նաև ջրային օձ և ջրայինը որպես Վիշապային հաճախ նույնանում է ստորերկրայիշ հետ:²⁵⁹ Վիշապի և միւնիլու գործողության կապի մասին առավել ստույգ պատկերացում կազմելուն մեզ օգնում է Դ. Ալիշանի կողմից ուշադրության արժանացած մի երևույթ: Դա հնում հայոց մեջ Վիշապանուին նիզակներին վերաբերող ավանդությն է: Ըստ այդմ, սովորույթ է Եղել նիզակները Վիշապի արյան մեջ միւնիլու, որից հետո դրանք ամրանում էին այնքան, որ կարող էին նույնիսկ քարը ծակել: Ավանդության համաձայն, այդպիսին էին քազավորներ Արշակի և Տրդատի Վիշապանուին նիզակները:²⁶⁰ Ավանդություններից մեկն էլ պատմում է, որ ամուր պողպատից սրեր պատրաստելու միջոցն այն գեռուների արյամբ մխելն էր: Թվում է, թե նիզակի կամ սրի հատկանիշների արյան հետ կապվելը կարելի է բացատրել դրանց Վիշապ կամ գեռուն սպանելու: Իատկությամբ: Նիզակի թաթախումը վիշապի արյան մեջ

²⁵¹ Ա. Թադևոսյան, ՂԱՆ, տ. 1; էջ 79, տ. 1, էջ 31, 78:

²⁵² D. MacLagan, op. cit., p. 28. S.G.F. Brandon, op. cit., p. 23. W.K.C. Guthrie, A history of Greek philosophy, Cambridge, v. 1, 1962, pp. 54-60:

²⁵³ В.В. Иванов, В.Н. Топоров, Мифологические называния как источники для реконструкции и этногенеза дровностей славян, сс. 110-126.

²⁵⁴ Ст. Аксациан, укаz. соч., с. 128. Г.Ф. Чурсин, Кульп ходуза у кавказских народов, с. 75.

²⁵⁵ Ե. Լալայան, Երկեր, հ. 2, էջ 158, 419: Ալավոնները աշրով տվածին կամ չարը լախածին բուժելուն ջրի միջ լիսրմած ածուխ են զցել A.H. Афанасьев, укаz. соч., մ. 2, էջ 200:

²⁵⁶ Տես նախորդ բաժինը:

²⁵⁷ ԵԴԲ, հ. 1, էջ 688:

²⁵⁸ ՄՀՄ, մ. 2, էջ 22: Կրակի և ջրի փոխառակացվածությունը դրանց հակադրությամբ հանդերձ, կազմում է արարագործության և հանսչխարհական ջրային քառության ծննդի թեմակի իմբքը: Սյսմիսի Երևույթ հատուկ է ոչ միայն հայկական, այլ նաև այլ ժողովուրդ-

ների առասպելներին ու տիեզերաբանական պատկերացումներին: Տես Գր. Գրիգորյան, Յայ հերոսական ժողովրդական եպոսը, Եր., 1960, էջ 261: Ա.Х. Ակաբա, Խ միֆոլոգիա Աբխазов, Ծխում, 1976, ս. 42. A.H. Афанасьев, укаz. соч., մ. 2, ս. 123, 130, 142: C. Leinhardt, op. cit., p. 112: Դա նկատելի է նաև ֆրանսիական մի համելուկում A. Lang, op. cit., p. 14: Կրակի և ջրի փոխառակացված հակադրության ըննարկումը տես A.M. Hocart, Baptism by fire. - The life-giving myth and other essays, London, 1970, p. 157. В.В. Иванов, Заметки о типологическом и сравнительно-историческом исследовании римского и индоевропейского мифологии. - Труды по знаковым системам, IV, Тарту, 1969, с. 45:

²⁵⁹ Ե. Լալայան, Երկեր, հ. 1, էջ 24: Գ. Արվանտոյանց, Երկեր, հ. 1, էջ 69:

²⁶⁰ Դ. Ալիշան, Օչկ. աշխ., էջ 152: Ե. Լալայան, Երկեր, հ.

²⁶¹ էջ 24:

²⁶² Դ. Ալիշան, Օչկ. աշխ., էջ 152:

Նշում է դրա նոր՝ վիշապասպան որակը:²⁶² Զրի, արյան և վիշապի խորհրդանշանները գործում են նաև հոսող ջրի սեմանտիկայում: Որոշ ավանդություններում հոսող ջուրը գետը, դրանորում է վերը նշված չհոսող ջրին բնորոշ հատկանիշներ: Դրանցից մեկին, քոյստոնեացված տարբերակով, հանդիպում ենք Մատթեոս Ուռիայեցու «ժամանակագրությունում» Քրիստոսի իսչելության հետ կապվող արեգակի իսավարման նկարագրության մեջ: Պատմիչն այդ առթիվ բերում է սուրբ վանական Հովուաննեսի մեկնաբանությունը, որտեղ ասվում է, թե սուրբ գետի ջրերում Քրիստոսի շղթայած սատանան պետք է ազատվի և կործանի աշխարհը:²⁶³ Դայց բանական ավանդություններում ունենք սրա զուգահեռ, ըստ որի, աշխարհի կործանումը կապվում է գետում շղթայված վիշապ համարվող Երվանդի ազատման հետ:²⁶⁴ Եթե հաշվի առնենք, որ գետը բազմաթիվ խորհրդանշանային իմաստավորումներում ունի նաև Տիեզերական ծառի կամ Տիեզերքի երեք ոլորտը կապող առանցքի իմաստ,²⁶⁵ ապա կարելի է կերպարների առումով նույնություն տեսնել նաև գետում շղթայված սատանայի և ժայռում փակված շղթայված հերոսի միջև: Գետը որպես չար ոգիների միջավայր համդիպում է նաև ժողովողական ավանդութերում: Այն նաև դիտվում է որպես աղջկ փերիների բնակատեղի. որոնք բազմաթիվ վնասներ են հասցնում հարսներին:²⁶⁶ Դրանք անուժ են դառնում, վնասագերձվում են իսաչի և Քրիստոսի անունները լսելիս:²⁶⁷ Ծանրանալով գետի ջրերի որպես չար ուժերի միջավայրի խորհրդանշանային իմաստավորմանը, հին կտակարանսյին մի ավանդությունում կարելի է գետի ջրի և արյան միջև

²⁶² Այս առումով բոլորովին պատահական ժ. որ վիշապանուխ նիզակը ծեռ է թերում քարը ծակելու հատկություն, եթե հաշվի առնենք վիշապի և քարի միջև գործող այն ընդհանրությունը, որին հանդիպեցինք նախորդ ծեսերից մենք վերլուծելիս: Մինան գործընթացում հետաքրքրի երևոյթ է նաև ջրին նոան կեղկի հյուր խառնելը: *Բ. Ալաքեյան*, նշվ. աշխ., էջ 134: Սա կարելի է սեմանտիկորեն նոյնական համարել արյան հետ:

²⁶³ *Մատթեոս Ուռիայեցի*, ժամանակագրություն, Եր., էջ 35-37:

²⁶⁴ *MHM*, մ. 1, ս. 364.

²⁶⁵ *G. Jobes*, op. cit., pp. 341-342.

²⁶⁶ Ե. Լալայան, Երկեր, հ. 1, էջ 228:

²⁶⁷ Օտ. Լուսաւան, սկզ. սու., ս. 163-164.

գործող սեմանտիկ կապը: Ըստ ավանդության, որպես եգիպտացիներին ուղղված պատիժ. Աստված Ահարոնի գավագանով հարվածում է գետին, արյան վերածելով դրա ջրերը:²⁶⁸ Քրիստոնեական ավանդությունում Հորդանանի ջրերը սրբագրվում են նրանց մեջ խաչ իջեցնելու միջոցով:²⁶⁹ Իսկ, ինչպես հայտնի է, խաչը վնասագերծում է սատանաներին: Կարելի է ասել, որ Ահարոնի գավագանի հարվածը և խաչի միջոցով ջրի սրբագրծումը ունեն են առասպելական ընդհանրական ենթատեքստ և նշում են չար ուժի վնասագերծումը: Իսկ գետի ջրերի վերածվելն արյան, վիշապի սպանված լինելու և նրա արյան այլաբանական արտահայտությունն է:²⁷⁰ Ըստ իս ակունքը այն փակող վիշապից ամպրոպամարտիկի կողմից ազատագրելը և սատանային կամ վիշապ-Երվանդին ջրում շղթայելու թեմաները սեմանտիկորեն փոխապված են: Վիշապի արյան մեջ նիգակներ մինելու հետ զուգահեռներ կարելի է գտնել նաև մշակութային կամ վիպական հերոսի կերպարում: Այդ առօւմով չափազանց հետաքրքրի նյութը է պարունակում զերմանասկանդինայան եպոսը: Նիբելունգների երգ»-ի պատումներից մեկում Զիգֆրիդն իր սպանած վիշապի արյան մեջ լողանալով, հզորանում և անխոցնի է դառնում, բացառությամբ թիկունքի մի կետի. որը լողանալիս ծածկված է եղել ծառից ընկած տերևնով:²⁷¹ Նման հատկու-

²⁶⁸ *MHM*, մ. 1, ս. 375. *В.В. Иванов*, Заметки о типологическом и сравнительно-историческом исследовании римской и индоевропейской мифологии, с. 45. *В.В. Иванов*, *В.Н. Топоров*, Мифологические названия как источник для реконструкции и этногенеза древности славян, сс. 110-126. *В.К. Соколова*, Типы восточно-славянских топономических преданий. – Славянский фольклор, М., с. 207.

²⁶⁹ *Մատթեոս Ուռիայեցի*, ժամանակագրություն, էջ 35, 45:

²⁷⁰ Խոսքը վերաբերում է առասպելական այլաբանությանը, որը կարելի է համարել նախագեղարվեստական: Այդ առթիվ տես *Օ. Фրեյմենբերգ*, Введение в теорию античного фольклора. – Миф и литература древности. с. 23. *Եթ չե*, Образ и понятие. – Миф и литература древности. с. 187. *Է. Կասսիրեր*, укаz. соч., сс. 34-36: Այլաբանությանը վերաբերող տեսական հարցերի մասին տես *Դ. Девилсон*, Կто означают метафоры. – Теория метафоры, М., 1990. *Փ. Սուրայդ*, Метафора и реальность. – Теория метафоры. *Р. Якобсон*, Два аспекта языка и два афематических нарушений. – Теория метафоры. *D. MacLagan*, op. cit., p. 11:

²⁷¹ *Ա.Хուսլը*, սկզ. սու., ս. 389.

բյուններ ամխոցնիությունն ու հզորությունը, ստոանում է Սասունցի Դավիթը և նյոււ հերոսներո Կաթնաղբյուրի ջրերում լողանալուց հետո: Հետաքրքիր է, որ Դավիթը նույնպես նարսնի վրա ունենում է խոցելի կետ, որն էլ դառնում է նրա մահվան պատճառը:²⁷² Նման անխոցելի հերոս է նաև անպրոպային Բարրազը օսական նարտյան էպոսում,²⁷³ որը երկնքից ընկնում է շիկացած երկար ծևով և կուրդակագոն դարբնի կողմից ջրում մխվելուց հետո, դառնում անխոցելի:²⁷⁴ Նշված երեք հերոսների անխոցելիության պատճառը, գերմանականում վիշապի արյան մեջ, հայկականում կաթնաղբյուրի հրաշալի ջրերում լողանալը և օսականում դարբնի կողմից ջրում մխվելու է: Հնդեվրոպական միջավայրից քաղված այս երեք օրինակը սեմանտիկորեն համահնչյուն են: Էպիկական հերոսի անխոցելիության պայմանը (Կաթնաղբյուրի ջրում լողանալը) գուգակցելով կայծակի որպես երկնքից ընկնող շիկացած երկարի, պատկերացան և Ղավի կայծակ-ամպոռպային հատկանիշների հետ, հնարավորություն է ընձեռում հայկական նյութում բացահայտելու օսական Բարրազին գուգահեռ գծեր: Իսկ վիշապամուխ նիգակների կամ սուրը գեռուների արյան մեջ մխելով հզորացնելու ավանդությունը գերմանա-սկանդինավյան Զիգֆրիդի վերը նշված հզորանալու առասպելի դրվագի և Ղավի անխոցելիության ու հզորացման պայմանի հետ գուգակցելու միջոցով բացահայտում է Ղավի և Զիգֆրիդի սեմանտիկ բնողիանությունն ըստ այդ հատկանիշի: Այսինքն կաթնաղբյուրի ջրի հրաշալիությունը և սպանված վիշապի արյունը համահնչյունություն և ն ծեռք բերում որպես հերոսների քաջազորության արդյունք: Կարելի է ընդունել, որ հայկական էպոսում հերոսի լողանալուն ուղեկցող սիրազգործությունները մտնում են այս սեմանտիկ դաշտի մեջ:

Դայ, գերմանացի և օս ժողովուրդների լամփական հերոսներն ընդհանրության մեջ են զտնվում հնդեվրոպական ամպոռպային հերոսների հետ և որպես այդպիսիք, բնորոշվում

²⁷² Ասսանա ծովը (Խմբ.՝ Ա. Արելյան), Եր., 1936, էջ 533:

²⁷³ Յ. Ֆ. Մալլեր, Օսմանյան առաջնորդության մեջ, 1936, էջ 19.

²⁷⁴ Նման գուգահեռներ կարելի են նկատել նաև Հեփեստոսի կերպարում, մեն Ա. Ա. Աֆանասև, նկազ. սու. 2, էջ 152.

են նաև ուշգմանական հոլոկաստայով: Այս սեմանտիկ համակարգում նշանային նույնություն է նկատվում գենքի և ուագնիսի միջև: Հերոսի գենքը դնկալվում է որպես կենդանի եան և հաճախ շնչավորվում է:²⁷⁵ Դրա հետ միասին տեղի է ունենում նաև հակառակը հերոսը կարող է փոխակերպվել գենքի և որպես հրաշալի գենք սլսրագործություններ գործել: Կարելի է ասել, որ գերմանական սկանդինավյան էպոսում վիշապի արյան հետ կապված նշված նշանային գործառույթն իրագործվում է հերոսի միջոցով: Դա հայկական մի ավանդությունում արտահայտվում է գենքի (նիգակ, սուր) միջոցով, իսկ նույնը ժողովրդական էպոսում հրագործում է հերոսը: Ուշագրավ է, որ օսական էպոսում նշանային առումով նկատելի է հերոսի ու գենքի նույնացում և ընդհանրացում մեկ խորհրդանշանի մեջ երկնքից ընկնող շիկացած երկարի ծևով:²⁷⁶ Ըստ իս, նշված նշանային կառուցվածքի մեջ է մտնում նաև դարբնի կողմից մխման ենթարկվող, հնցում շիկացված երկարը: Այս ընդունելու դեպքում և ելելով վերն արված վերլուծությունից, միյման գործողությունը կարելի է իմաստաբանել դարբին-ամպոռպամարտիկի որպես երկնային կրակ ներկայացնող ուժի կոիվը ջրում գտնվող վիշապի դեմ և նրան շանթարելու միջոցով ոչնչացնելը: Ուստիև դարբնից ջուրը, որպես չարից մաքրված, համարվում է սրբագործված և «գորավոր»: Իսկ որպես վիշապի արյան և միյման գործողության անմիջական կապի վկայություն. կարելի է համարել հիշատակված վիշապամուխ նիգակները:

Այժմ կփորձենք միյման գործողության իմաստաբանումից անցնել բուժմանը և գտնել այս երկու գործողությունների միջև առկա կապը: Որպեսզի պարզենք, թե ինչ էր այդ բուժումը, պետք է պարզաբանել բուժման օբյեկտի եռթյունը: Բուժման օբյեկտը հիվանդությունն էր

²⁷⁵ Զենքին և ընդհանրապես անշունչ առարկաներին վենդանի եան անուն տալն ու շնչավորելը տարածված երևույթ է հնդեվրոպական և այլ ժողովուրդների միջավայրում *O. Шрадер*, սու. սու. 246. *Փ. Н. Перцев*, կուլտура и религия древних пруссов. – Белорусский государственный ун-т. Ученые записки, вып. 16, серия историческая, Минск, 1953, с. 345. *Е.М. Мелетинский*. Структурно-типологический анализ мифов северо-восточных палеоазиатов. – Типологические исследования по фольклору. М., 1975, с. 92.

այն կրող անծով հանդերձ: Դիվանությունը ժողովուրդն անվանում էր «Վախ», որը չքուժելու դեպքում կարող էր խելսգարության պատճառ դառնալ: Վախի և խելսգարության կապը շատ պարզ է արտահայտված հայերենի ժողովորական «Վախից ընկնավորել» արտահայտության մեջ, որը բնորոշ է նաև գեղարվեստական լեզվին:²⁷⁷ Վախն, ինչպես և խելսգարությունը, նույնպես կապվում է դւերի, սատանաների և վիշապների հետ: Վախնցածի փորը, ժողովորական պատկերացմանը, սատանա կամ վիշապ էր մտնում: Կերայական բուժա-մոգական հիմներում նույնպես հիվանդությունը բացատրվում է որպես վիշապ ներկայացնող որդերի պատճառած չարիք:²⁷⁸ Նման կապ հիվանդության և չար ուժերի միջև բնորոշ է նաև սկանդինավյան ավանդություններին:²⁷⁹

Բուժման նպատակը վսկսեցածի մեջ մտած չար ուժերից նրան ազատելն է:²⁸⁰ Ինչպիսին էր դարբնոցի ջրի գործառույթը: Ո՞րն է ջրի բուժական հատկությունը, ի՞նչի վրա և ի՞նչպես էր հատկապես ազդելու այդ ջուրը: Կարծում ենք, որ բուժման հիմքում ընկած է շփողական մոգության այն օրենքը, ըստ որի առարկան շփման միջոցով կարող է ստանալ մի այլ առարկայի հատկանիշներ:²⁸¹ Բուժական գործողությունում դա կարելի է մեկնել հետևյալ ծեսով՝ դարբնի և շիկացած երկաթի:

²⁷⁷ **Ж. Диомезаль,** Осетинскиу эпос ս мифология, с. 60.

²⁷⁸ **Սար-Դու,** նշվ. աշխ., էջ 36: **Դ. Թումանյան,** Լուեցի Սարոն, Երկեր, հ. 2, էր., 1958, էջ 13-20: **Ե. Հալայան,** Երկեր, հ. 1, էջ 235-236:

²⁷⁹ **В.Н. Топоров,** К реконструкции индоевропейского ритуала и ритуально-поэтических формул (на мотиве заговоров), сс. 24-30. **Т.В. Гамкрелидзе, В.В. Иванов,** указ. соч., т.2, с. 527.

²⁸⁰ **А. Я. Гуревич,** Культура и общество средневековой Европы глазами современника, М., 1989, с. 202.

²⁸¹ Ըստ Կ. Միլերի, հայերեն «րուժակ» բառը ազգակից է սամսկրիտի *>thisag* (թժկ-դեղ) բառին, որը կազմված է *this* և *ag* արմատներից: Առաջինն ունի «Վախ», «Վախս առաջացնող», երկրորդը «քշել», «հետօնանել», «դուրս մնել» հմաստները **В.Ф.Мишлер,** Очерки арийского мифологии в связи с древнеиндийской культурой, с. 62: Ըստ այդմ, «րուժակ» բառը կարելի է մեկնել որպես «չարը քշող», «վախս քշող»: Ենթաքրքիր է, որ հնդեվրոպական միջավայրում հանդիպում են դարբնի և բուժակի համարությամ դեպքեր: Տես **O. Шрадер,** указ. соч., с. 242-243: Նման փաստարկում տես նաև **К.Г. Юнг,** Феномен духа в искусстве и науке. Собрание сочинений, т. 15, М., 1992, с.36:

²⁸² **Զ. Զերեգիր,** նշվ. աշխ., էջ 197:

գորությունը փոխանցվում է ջրին:²⁸² Պետք է ասել, որ մոգության օրենքների գործունեությունը նույնական ունի ենթատեքստ. որը կամում է առասպելը:²⁸³ Ըստ նման փոխապակցվածության, դարբնի գորության փոխանցումը ջրին կարող էր նշանակել նրա կողմից վիշապին վնասագերծելու կարգապահանության հատկանիշի փոխանցում ջրին: Վախնցածի կողմից ջուրը իւմելը նշանակում է հիվանդություն պատճառող ուժերի վնասագերծում:

Բուժական մոգության, միւման և նրանց կապող շփողական մոգության հիմքում ընկած վերը բերված մեխանիզմը կարելի է ներկայացնել ծխա-խորհրդանշանային հետևյալ գծապատկերի միջոցով:

գժ. 1

| գործողություն | բարի | չար |
|---------------|-----------------------------|------------------------------------|
| 1 միւման | դարբնին ամպոպամարտիկ | իուր վիշապ |
| 2 բուժում | վախ բնորոշ դարբնոցի ջուր | մարդ (հիվանդ) վիշապ (չար) |

Գծապատկերում տրված է է նշված երկու գործողությունը մեխանիզմով բարի և չար ուժերի հարաբերակցությունը ըստ բարի և չար միջավայրերի: Գործողության 1-ին մասում (միւման) գլխավոր դեմքը Ամպրոպամարտիկի գործառույթը կրող դարբնին է, որը շիկացած երկաթի միջոցով վնասագերծում է ջրում գտնվող վիշապին, ջուրը չար, վնասակար սեմանտիկ դաշտից ժամանակավորապես տեղափոխում է բարի, օգտակար ոլորտ: Դանգամանալից դիտարկման դեպքում կարելի է առանձնացնել նաև համուտնյա և հակուտնյա կապերը: Դամուտնյա կապերն 1-ն գործողությունում երկուսն են դարբնին-ամպրոպամարտիկ և ջուր-վիշապ: Իսկ այս գույգի միջև գործում է ընդհանուր, հակուտնյա կապ:

2-րդ գործողությունում (բուժում) կա երկու համուտնյա կապ և մեկ հակուտնյա: Դակու-

²⁸² **Ա. Թաղևոսյան,** ԴԱՆ, տ. 1, էջ 79:

²⁸³ **Б. Малиновский,** Магия, наука, религия. – Магический кристалл, М., 1992, с. 109. **И.Т. Касавин,** Размышления о магии, ее природе и судьбе. – Магический кристалл, с. 12. **Его же,** Магия: ее мнимые открытия и подлинные тайны. – Заблуждающиеся разум, М., 1990, с. 68.

| գործողություն | բարի | չար |
|-------------------|-----------------------------|---------------------------|
| մխում | դարբին ամպրոպամարսիկ | ջուր վիշապ |
| բուժում | Վախ բոնող ջուր | նարդ (հիվանդ) վիշապ |
| բուժումից հետո | Վախ բոնող նարդ (բուժված) | ջուր վիշապ |

Փաստորեն հիվանդության բուժումն ստեղծված աններդաշնակության (քառսի) վերացում է անհրաժեշտ կարգի (կոսմոսի) վերականգնման միջոցով:²⁸⁴

Եյա մարդ-վիշապ հարաբերությունը ստեղծվել է մարդու բնականոն վիճակից հիվանդ վիճակի ներ հայսնվելու պատճառով, որի հետմանքում «մարդը» տեղափոխվում է «չար» սեմանտիկ համակարգ: Իսկ վախ բոնող - մարդ համունյա կսան առաջանում է մարդու և վախ բոնողի նույն միկրոաշխարհին ժամանակավոր պատկանելությամբ: Մյուս համունյա կապը ջուր-վիշապ. նույնպես գործում է հակադիր սեմանտիկ դաշտերում, իսկ հակունյա կապը նույն սեմանտիկ դաշտում: Այսպիսով, 2-րդ փուլուն ստեղծված համունյա կապերը գործուն են հակադիր սեմանտիկ դաշտերուն, իսկ հակունյա կապը նույն սեմանտիկ դաշտուն: Ստեղծված ժամանակավոր աններդաշնակության կարգավորմանն է ուղղված վախ բոնողի ծիսական գործառությը: Աններդաշնակության կարգավորումը տեղի է ունենուն հետևյալ կերպ: Ջուրը խմեցնուն են հիվանդին, չարը-դեն անցնում է ջրի

մեջ, ապա և մեզի միջոցով դուրս գալիս մարմնից, վերադարձնելով մարդուն բնական, նորմալ վիճակի, որը սխեմատիկ արտահայտելով, կստանանք հետևյալ պատկերը.

²⁸⁴ Սա համապատասխանում է Բ. Մալինովսկու այն թեզին, որ մոգությունը ոչ թե ուղղված է ընության ուժերին, այլ այն օրենքներին, որոնք ընկած են այդ ուժերի կարգավորման հիմքում Բ. Մալինովսկի՝ սկզ. սու., ս. 88: